


Արամ Զովհաննիսյան

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2020



Գիրքը հրատարակվել է
Անուշավան Եպիսկոպոս Փամկոչյանի
մեկենասութեամբ՝
ի հիշատակ սիրելի ծնողների՝
Սերոբ և Նեյլի Փամկոչյանների:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոն

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ
ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

YEREVAN STATE UNIVERSITY
Chair of The History of Armenian Church and Ecclesiology

ARAM HOVHANNISYAN

**ARMENIAN CHURCH DURING
THE CILICIAN PERIOD**

ԵՐԵՎԱՆ-2020 • Yerevan, 2020

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3(5h)

Հ 854

Երաշխավորված Է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից,
որպես դասագիրք

Տպագրվել է Երևանի պետական համալսարանի
աստվածաբանության ֆակուլտետի և ԵՊՀ Իջևանի
մասնաճյուղի գիտական խորհուրդների որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

պ.գ.դ., բ.գ.դ., պրոֆ. **Ա. Սահակյան**

խմբագիրներ՝

պ.գ.դ. **Վ. Տեր-Ղևոնդյան**

պ.գ.թ., դոց. **Լ. Մկրտումյան**

պ.գ.թ., դոց. **Ա. Մանուչարյան**

պ.գ. թ., դոց. **Դ. Թինդյան**

Լեզվական խմբագիր՝ բ. գ. դ. Փ. Մեյթիխանյան

Հովհաննիսյան Արամ

Հ 854 Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում / Ա. Հովհաննիսյան, - Եր.: Հեղ.
հրատ., 2020. - 218 էջ:

Դասագիրքը ներառում է Կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմության առա-
վել կարևոր և հետաքրքիր դրվագները՝ Պաղատանիների հայրապետական տոհմի
հաստատումը, Հռոմկլայի հայրապետանոցի հիմնադրումն ու գործունեությունը,
Գրիգոր Գ Պաղատանու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Դ Տղայի, Գրիգոր Ապիրատ
կաթողիկոսների և մյուսների գործունեության դրվագները: Ներկայացված են 11-
րդ դարի երկրորդ կեսերից մինչև 1441 թվականի քաղաքական և եկեղեցական
գործընթացների զարգացումն: Նախատեսված է պատմաբանների, աստվածա-
բանների, կրոնագետների, եկեղեցաբանների և ընթերցող լայն շրջանակների հա-
մար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-0-2561-2

© Հովհաննիսյան Ա., 2020 թ.

Բովանդակություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	9
-------------------------	---

Գլուխ առաջին

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՀՈՈՄԿԼԱ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ	13
1.1. Հայ Առաքելական եկեղեցին Բագրատունյաց թագա- վորության անկումից հետո	13
1. 2. Պաղիվադիկոսյան տոհմի հաստատումը հայոց կաթո- ղիկոսական աթոռին	14
1. 3. Հայոց եկեղեցու պառակտումները: Բարսեղ Ա Անե- ցու ջանքերը հայրապետական աթոռի վերամիավոր- ման հարցում	18
1. 4. Գրիգոր Գ Պաղիվադիկոսյան հայոց կաթողիկոս. կաթողի- կոսարանի տեղափոխումը Հռոմկա	23
1.5. Ներսես Շնորհալու գործունեության սկիզբը	36
1.6. Շնորհալին և հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքա- կան հարաբերությունները	40
1.7. Կրոնական, հասարակական գործունեությունը	50
1. 8. Ներսես Շնորհալու մատենագրական վաստակը	54

Գլուխ երկրորդ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻ-ԱՅՈՒՄ 12-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԔԱՌՈՐԴԻՆ ԵՎ 13-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ..... 58

2.1. Մլեի իշխանապետի եկեղեցական քաղաքականությունը..... 58

2.2. Կիլիկիայի հայոց իշխանապետությունը և հայոց եկեղեցին Ռուբեն Գ-ի իշխանապետության տարիներին .. 65

2.3. Լևոն Մեծագործը և եկեղեցին Գրիգոր Տղայի աթոռակալության տարիներին..... 68

2.4. Գրիգոր Զարավեժի կարճատև աթոռակալումը (1193-1194)..... 76

2.5. Եկեղեցին Գրիգոր Ապիրատի կառավարման ժամանակաշրջանում և Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը..... 84

2.6. Ներսես Լամբրոնացի..... 99

2.7. Հովհաննես Սսեցի կաթողիկոսի գործունեության առաջին շրջանը..... 103

2.8. Չաքարե ամիրսպասալարի և եկեղեցու հարաբերությունները..... 107

2.9. Հայոց եկեղեցին Հովհաննես Սսեցու աթոռակալման վերջին շրջանում..... 110

Գլուխ երրորդ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 13-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՀՈՈՍԿԼԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ 115

3.1. Կոստանդին Ա Բարձրբերդցին՝ կաթողիկոս: Սսի 1243 թթ. եկեղեցական ժողովը 115

3. 2. Հայ եկեղեցու փոխհարաբերությունները ասորի Հակոբիկ եկեղեցու հետ..... 123

3. 3. Եկեղեցաքաղաքական իրավիճակը Կիլիկյան Հայաստանում 1250-1280-ական թթ..... 126

3.4. Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունների բարդացումը և Հռոմկլայի կաթողիկոսարանի կործանումը..... 137

Գլուխ չորրորդ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՐԸ

1293-1441 ԹԹ. 142

4.1. Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սիս: Գրիգոր Է Անավարզեցին հայոց կաթողիկոս..... 142

4.2. Գրիգոր Անավարզեցու իրականացրած փոփոխությունները: 1297 թ. Նորավանքի եկեղեցական ժողովը 144

4.3. Գրիգոր Անավարզեցու մահը և Սսի 1307 թ. եկեղեցական ժողովը 146

4.4. Սսի կաթողիկոսական աթոռը և Կիլիկիայի հայկական թագավորությունը 1308-1337 թթ..... 152

4.5. Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը և Սսի կաթողիկոսարանը 157

4.6. Սսի կաթողիկոսարանը Կիլիկիայի հայկական թագա- վորության կործանումից հետո	165
4.7. Սսի կաթողիկոսական աթոռը 1411-1439 թթ.....	168
4.8. Ամենայն հայոց կաթողիկոսարանի տեղափոխումը Սսից Ս. Էջմիածին	172
5.1 Եկեղեցապատմական ժամանակագրություն	183
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	192
6.1 Աղբյուրներ.....	192
6.2 Հայալեզու գրականություն	194
6.3 Օտարալեզու գրականություն	198
6.4 Հայոց լեզվով հոդվածներ.....	200
6.5 Համացանցային գրականություն	205
ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ	207
7.1 Անձնանուններ և տոհմանուններ	207
7.2 Տեղանուններ	212

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմությունը հայագիտության կարևոր և խնդրառու ոլորտներից է: Բոլորին է հայտնի, որ Կիլիկիայի հայկական պետության պատմաշրջանում եղել են մի շարք նշանավոր կաթողիկոսներ և այլ բարձրաստիճան հոգևորականներ, որոնց դերակատարումը չափազանց կարևոր է եղել թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական կյանքում:

Չայոց եկեղեցին 11-15-րդ դարերում կարևոր դերակատարում է ունեցել ոչ միայն հայ ժողովրդի հոգևոր կյանքում, այլև քաղաքական, դատական և մասնավորապես դիվանագիտական գործընթացներում: Կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմությունը ուշագրավ է նաև նրանով, որ 11-15-րդ դարերում հայ եկեղեցին իրենց գերիշխանության մեջ առնելու, իրենց հետ միավորելու գաղափարներով էին տարված ժամանակաշրջանի հզոր պետությունները՝ Բյուզանդական

կայսրությունը, արևմտաեվրոպական երկրները և Յոնի պապական աթոռը: Վերջիններս մեծ ջանքեր էին գործադրում այդ նպատակին հասնելու համար: Նշված ժամանակաշրջանում Յայ Առաքելական Եկեղեցու ջանքերով մեծ ծաղկում ապրեց միջնադարյան հայկական մշակույթն իր տարբեր բնագավառներով՝ պատմագրությամբ, մանրանկարչությամբ, գեղարվեստական գրականությամբ, ճարտարապետությամբ, գրավոր օրենսդրությամբ, դպրոցական կյանքով, փիլիսոփայությամբ, ժողովրդական բանահյուսությամբ և այլն, որոնք ամրապնդեցին հայ հասարակության և պետականության ներքին ինքնուրույնությունը:

Գաղտնիք չէ, որ կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմության մեջ եղել են վերելքների և վայրէջքների ժամանակաշրջաններ, մի շարք կարևոր եկեղեցաժողովներ, եկեղեցաքաղաքական իրադարձություններ, միջեկեղեցական հարաբերություններ, որոնց նշանակությունը շատ մեծ է մեր ժողովրդի համար, իսկ դրանց իմացությունը, մեր համոզմամբ, անհրաժեշտ:

Չարկ ենք համարում նաև նշել, որ տարիներ շարունակ՝ հատկապես խորհրդային ժամանակներում հիմնականում ուսումնասիրման նյութ է դարձել հայ ժողովրդի քաղաքական, մշակութային և մասամբ էլ սոցիալ-տնտեսական պատմությունը՝ մոռացության տալով եկեղեցապատմական իրողությունները: Տարիների ընթացքում տարբեր հետազոտողների և հետազոտական խմբերի կողմից հրատարակվել

են հայոց պատմության տարբեր շրջաններին վերաբերող մի շարք աշխատություններ, սակայն մինչ օրս էլ հայ եկեղեցու պատմության և մասնավորապես կիլիկյան շրջանի մասին որևէ դասագիրք կամ ուսումնական ձեռնարկ չի հրատարակվել: Այդ տեսակետից մեր աշխատանքը առաջին փորձն է:

Դասագրքում առանձին գլուխներով ներկայացրել ենք Պահլավունիների հայրապետական տոհմի հաստատման, Յռոմկլայի հայոց կաթողիկոսարանի հիմնադրման և գործունեության, Գրիգոր Գ Պահլավունու և Ներսես Շնորհալու գործունեության որոշ դրվագները, Գրիգոր Դ Տղա և Գրիգոր Ապիրատ կաթողիկոսների, մեծ իշխանապետ Մլեհի, Լևոն Մեծագործի եկեղեցական քաղաքականության, Սսի հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխման և նրա գործունեության, Կիլիկիայի հայկական թագավորությունում ունիթորների և հակաունիթորների երկարատև պայքարի, պետություն-եկեղեցի հարաբերությունների, Յռոմկլայում, իսկ հետագայում նաև մայրաքաղաք Սսում կայացած մի շարք եկեղեցական ժողովների և դրանցում կայացրած որոշումների, հայկական թագավորության անկումից հետո Ամենայն հայոց կաթողիկոսարանի վիճակի, կաթոլիկ միսիոներների ակտիվության, բուն Յայաստանում սկսված շարժման, Ամենայն հայոց կաթողիկոսությունը Սսից Ս. Էջմիածին տեղափոխելու, ինչպես նաև մի շարք կարևոր այլ հիմնախնդիրների մասին:

Ընդհանրապես վաղուց էր հասունացել Հայ եկեղեցու պատմության վերաբերյալ աշխատությունն ունենալու անհրաժեշտությունը: Այն մեծապես կօզնի պատմության, փիլիսոփայության, բանասիրության, աստվածաբանության և հայագիտական կողմնորոշում ունեցող ֆակուլտետների ուսանողներին, դասախոսներին, երիտասարդ գիտնականներին, ասպիրանտներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են հայոց պատմության և հատկապես Հայ Առաքելական Եկեղեցու պատմության այս կարևոր պատմաշրջանի մասին առավել մանրամասն և ընդգրկուն գիտելիքներ ձեռք բերելու հարցով:

Ըստ այդմ՝ փորձել ենք աշխատության մեջ կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմության կարևոր էջերն ու դրվագները լուսաբանել ընթերցողին դյուրամատչելի ձևով: Աշխատությունում, բնականաբար, շատ հարցեր, դեպքեր և իրադարձություններ ներկայացվում են նորովի:

Որպես իր տեսակի մեջ առաջին փորձ՝ այն կունենա նաև թերություններ, ուստի մեր ներողամիտ ընթերցողից ակնկալում ենք դիտողություններ և առաջարկներ: Պատրաստ ենք ընդունել բոլոր դիտողությունները և առաջարկները, և անպայման հաշվի առնել դասագիրքը վերահրատարակելիս:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՀՈՈՄԿԼԱ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

1.1 Հայ եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկումից հետո:

1045 թ.՝ Բագրատունիների հայկական թագավորության կործանումից հետո հայ ժողովուրդը հայտնվեց բավականին ծանր վիճակում, քանի որ մի կողմից հայությունը կորցրեց իր պետականությունը, իսկ մյուս կողմից էլ առաջ եկավ սելջուկ-թուրքերի արշավանքների վտանգը: Բավական դժվար իրավիճակ ստեղծվեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու համար, քանի որ պետականության անկման պայմաններում կաթողիկոսարանը հայտնվել էր ծանր վիճակում: Նրա գործունեությունը ավելի վատացավ այն ժամանակ, երբ տասնյակ հազարավոր հայեր սկսեցին թողնել պապենական հողերը և գաղթել օտար երկրներ, մասնավորապես հարևան Վրաստան, Բյուզանդական կայսրության տարածք և այլ վայրեր: Իր հերթին Բյուզանդական կայսրությունը, հայոց եկեղեցին դիտելով որպես հայկական թագավորու-

թյան անկումից հետո հայ հոգևոր և քաղաքական ուժերը միավորող ամենահզոր կառույցը, հետևողականորեն փորձում էր վերջինիս իր ազդեցության տակ զգել: Միակ հնարը, որ տեսնում էր Բյուզանդական կայսրությունը վերոնշյալ հարցում, կաթողիկոսությունը հնազանդեցնելն էր ու Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին ենթարկեցնելը:

Քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հայոց հայրապետական աթոռն սկսում է դեգերել նախ Կապադովկիայի, իսկ հետագայում՝ նաև Կիլիկիայի տարածքներում:

1.2 Պահլավունիների տոհմի հաստատումը հայոց կաթողիկոսական աթոռին:

Հայոց հայրապետական աթոռը Խաչիկ Բ (1058-1065) կաթողիկոսից հետո թափուր էր մնացել: Նշյալ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը փորձում էր ամեն կերպ խոչընդոտել նոր կաթողիկոսի ընտրություններին: Այդ խնդրի առնչությամբ գործնական քայլերի դիմեց Կարսի նախկին թագավոր Գագիկ Աբբասյանը, ում նախաձեռնությամբ էլ 1066 թ.¹ կաթողիկոսության հարցը լուծվում է հետևյալ կերպ: Լեռնային Կիլիկիայի Ծամնդավ² բերդաքաղա-

¹ Որոշ հետազոտողներ այս կարևոր իրադարձությունը թվագրում են 1165 թվականով:

² Ծամնդավը բերդաքաղաք է Փոքր Հայքում՝ համանուն գավառի կենտրոն՝ Կեսարիա քաղաքից արևելք: 1065 թ. այն մտնում էր Գագիկ Աբբասյանի տիրույթների մեջ:

քում գումարվում է մի ժողով, որտեղ նոր կաթողիկոս է ընտրվում Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը (1066-1105), ով ստանում է Գրիգոր Բ Վկայասեր անունը և հիմնում է Պահլավունիների կաթողիկոսական հարստությունը (1066-1203): Ընդհանրապես Վահրամ Պահլավունին բաղրի՝ թե՛ Բյուզանդական կայսրության և թե՛ դեռևս գոյություն ունեցող հայկական փոքր թագավորների համար հարմար թեկնածու էր: Եվ Պահլավունի հայրապետները անջնջելի հետք թողեցին հայոց պատմության մեջ:

Կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի աթոռակալությամբ հայոց կաթողիկոսների հաջորդականության մեջ տեղի ունեցավ մի Էական փոփոխություն. կաթողիկոսական աթոռը համարվեց ժառանգական, և Պահլավունիները, ովքեր իրենց Կամսարական ծագմամբ ներկայանում էին որպես հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ազգակիցներ, սկսեցին ժառանգական սկզբունքներով բազմել հայրապետական գահին, և այդ երևույթը շարունակվեց շուրջ մեկուկես դար: Գրիգոր Բ Վկայասերը մինչ հոգևորական դառնալը եղել է բյուզանդական պաշտոնյա՝ զբաղեցնելով Միջագետքի դքսի³ պաշտոնը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայմամբ՝ նա ժամանակին ամուսնացած է եղել,

³ Լատիներեն դուքս-առաջնորդ: Բյուզանդիայում այս տիտղոսը կրողները ունեին կատապանի աստիճան և գլխավորում էին մեծաքանակ ռազմական ուժեր:

այնուհետև հեռացել է ընտանիքից և մտել վանականների կարգը՝ իրեն նվիրելով ուսման և աստվածային պատվիրանները սերտելուն: Նույն պատմիչի պնդմամբ՝ նա արդար ու առաքինի մարդ էր՝ քաջատեղյակ հռետորական արվեստին, լավ գիտակ Սուրբ Գրքի:

Հարց է առաջ գալիս, թե ինչու Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը Գագիկ Աբբասյանի օգնությամբ իր աթոռը հաստատեց Հայոց բնաշխարհից դուրս՝ Ծամաղավում: Պատճառն այն էր, որ այդ ժամանակ սելջուկ-թուրքերը, գրավելով մի շարք երկրներ, մտել էին նաև Հայաստան, և այնտեղ կաթողիկոսական աթոռի մնալը շատ վտանգավոր էր: Բացի այդ՝ Ծամաղավ տեղափոխելու հարցում շահագրգիռ էր նաև Բյուզանդական կայսրությունը: Գրիգոր Բ Վկայասերը հեղինակ է բազմաթիվ գրական և վկայաբանական աշխատանքների, կատարել է թարգմանություններ: Հեղինակ է գանազան մեկնությունների: Կոստանդնուպոլսում հունարենից հայերեն է թարգմանել բազմաթիվ վարքագրական և հայրաբանական երկեր, այստեղից էլ կաթողիկոսի «Վկայասեր» մականունը: Նրա կառավարման տարիներին սերտացել էին փոխհարաբերությունները ասորի Հակոբիկյան, հույն ուղղափառ և հռոմեական կաթոլիկ եկեղեցիների միջև: Իր կաթողիկոսության տարիներին ճանապարհորդություն կատարեց դեպի Եգիպտոս, Կ. Պոլիս և այլ վայրեր: Ուղևորության մեկնելուց առաջ Գրիգոր Վկայասերը տեղապահ է նշանակել:

Այսպես՝ հայոց կաթողիկոսի որոշմամբ՝ այդ պատասխանատու պաշտոնին նշանակվեց իր քարտուղար՝ վարդապետ Գևորգ Լոռեցին: Նա հայոց կաթողիկոսի դպրապետն էր և նրա մտերիմ գործակիցը: Հայոց հայրապետի ուղևորվելուց հետո Գևորգ Լոռեցին անկաշկանդ վարում էր հայրապետության գործերը, սակայն վերջինիս գործունեության մասին միջնադարյան սկզբնադրյուրներում առանձնակի հիշատակումներ չեն պահպանվել:

Ինչ վերաբերում է Գրիգոր Վկայասերի գործունեությանը, ապա պետք է նշել, որ վերջինս, ժամանելով Եգիպտոս, հիմնեց եպիսկոպոսական աթոռ և Գրիգոր Պահլավունի եպիսկոպոսին կարգեց եգիպտահայոց առաջնորդ: Պատմիչ Սմբատ Սպարապետի վկայմամբ՝ նրան ընդունեց Նույնիսկ Եգիպտոսի սուլթանը: Բացի այդ Գրիգոր Բ Վկայասերը եղավ նաև Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում Կոստանդնուպոլսում, որտեղ կայսրը և պատրիարքը նրան ընդունեցին մեծ պատվով և բոլոր պայմանները ստեղծեցին վերջինիս գործունեության համար:

Երբ Գրիգոր Բ Վկայասերը վերադարձավ, գծություն և սկսվեց նրա և Գևորգ Լոռեցու միջև, ով փորձում էր զավթել հայոց հայրապետի աթոռը, սակայն Գրիգոր Վկայասերին հաջողվեց հեռացնել վերջինիս: Գևորգ Լոռեցու գործունեությունը հայոց մեծամեծերի և իշխանների սրտով չէր եղել, ուստի և Գրիգոր Բ Վկայասերից առանձին ջանքեր չպահանջվեցին նրան պաշտոնազրկելու: Քանի որ Գևորգ Լոռե-

ցին ընդամենը փոխանորդ էր, ապա եկեղեցական ժողով էլ չգումարվեց:

Կարևոր է նաև նշել, որ կաթողիկոսի վերադարձից հետո Ծամնդավի հայրապետանոցին սպառնում էր սելջուկ-թուրքերի կողմից գրավվելու վտանգը, և հավանաբար դա էր պատճառը, որ հայոց հայրապետը գերադասեց հեռանալ առավել անվտանգ վայր:

1.3 Հայոց եկեղեցու պառակտումները:

Բարսեղ Ա Անեցու ջանքերը հայրապետական աթոռի վերամիավորման հարցում:

11-րդ դարի երկրորդ կեսերին Փիլարտոս Վարաժնունին Կիլիկիայի տարածքի մի մասում ստեղծեց հայոց իշխանապետություն: Հայոց իշխանապետը, նպատակ ունենալով իր վերահսկողությունը հաստատելու հայ եկեղեցու նկատմամբ, հրավիրեց Գրիգոր Բ Վկայասերին իր իշխանության սահմանները, սակայն հայոց կաթողիկոսը մերժեց նրա հրավերը: Փիլարտոս Վարաժնունին իր երկրորդ նամակում կրկնեց հրավերը: Գրիգոր Բ Վկայասերը կրկին մերժեց նրան, սակայն առաջարկեց իր համաձայնությամբ հայրապետական աթոռը տալ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի քրոջ որդուն՝ Սարգսին՝ ուղարկելով Պետրոս կաթողիկոսի քորը, գավազանը և սուրբ խաչը: Մատթեոս Ուռհայեցու վկայմամբ՝ հայոց իշխանապետը համոզվելով, որ Գրիգոր Վկայասերը չի գա, հրաման արձակեց եկեղեցական ժողով գումարել Ջա-

հան գավառի Յոնի կոչված քաղաքում, որտեղ ներկաները կաթողիկոս օժեցին վերոհիշյալ Սարգսին:

Յոնիում մոտավորապես 1076 թ. առաջացավ մի նոր կաթողիկոսական աթոռ, որը չի կարելի անվանել հակաթոռ, քանի որ այն առաջացել էր Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությամբ: Նրա իշխանությունը տարածվում էր միայն Փիլարտոսի տիրույթների վրա: Որոշ ժամանակ անց Սարգսի մահից հետո Յոնիի հայրապետական աթոռին Փիլարտոսի կամքով բազմեց Թեոդորոսը: Շուտով երևան եկան ևս երկու կաթողիկոսություններ:

Այսպես, սելջուկ թուրքերը գրավեցին Փիլարտոսից Ջհան գավառը, և տեր Թեոդորոսը հայտնվեց նրանց տիրապետության տակ: Ստեղծված պայմաններում Փիլարտոսը տեր Թեոդորոսին հրավիրեց իր մոտ՝ Մարաշ, բայց վերջինս չկարողացավ գնալ: Նման պայմաններում Փիլարտոսի և Թեոդորոսի հարաբերությունները խիստ սրվեցին, և հայոց իշխանապետը որոշեց իր տարածքների համար մի նոր կաթողիկոս հաստատել: Մարաշ քաղաքում հրավիրվեց եկեղեցականների ժողով, որտեղ, Ուռհայեցու վկայմամբ, Վարագա Սուրբ Նշան վանքի վանահայր Պողոսին օժեցին կաթողիկոս:

Շատ չանցած՝ Մեծ Յայթում ծնվեց Անիի կաթողիկոսությունը վերականգնելու գաղափարը: Դավիթ Անհողիկի որդի Կյուրիկեն, որ իր Բագրատունի ծագումը լավ էր հիշում, քաջալերեց անեցիներին այդ հարցում: Այն իրագործվեց 1081

թ., երբ Հաղպատի վանքում հրավիրված եկեղեցական ժողովում Անիի Բարսեղ եպիսկոպոսն Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի ձեռքով օծվեց կաթողիկոս⁴: Բարսեղի ձեռնադրությունը դիտվում էր որպես Անիում կաթողիկոսական աթոռի Նորոգում կամ վերահաստատում, որը երկար ժամանակով խափանվել էր բյուզանդացիների հակահայկական քաղաքականության հետևանքով: Բարսեղ Ա Անեցին կարողացավ 1090 թ. այցելել Նաև Մելիք Շահին, բանակցեց վերջինիս հետ, և նրա խնդրանքով սուլթանը թեթևացրեց հարկերը: Մյուս կողմից, Հայոց Արևելից կողմերում էլ կաթողիկոսական իշխանությամբ էր օժտված Արցախի և Ուտիքի հոգևոր առաջնորդը: Նշված կաթողիկոսություններում, ինչպես վկայում է Մատթեոս Ուռուխյեցին, ինքնուրույն կերպով. «առնէին ձեռնադրութիւնս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն...»:

Այսպիսով՝ պատմական որոշակի հանգամանքներում առաջացան միաժամանակ մի քանի կաթողիկոսարաններ, ինչը կարելի է ասել անսախադեպ երևույթ էր Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ: Դրանք էին

1. Ծամոկավում՝ Գրիգոր Բ Վկայասերը,
2. Հոնիում՝ Թեոդորոսը,

⁴ Բարսեղ Ա Անեցու ժամանակ նոր շունչ է առել 1046 թ. ի վեր լքված Անիի կաթողիկոսական աթոռը: Վերաբացվել է կաթողիկոսարանի վարդապետարանը՝ նշանավոր Հովհաննես Սարկավագ վարդապետի ուսուցչապետությամբ: Բարսեղ Ա Անեցու հրամանով հիմնադրվել է Հաղպատի եպիսկոպոսական աթոռը:

3. Մարաշում Պողոսը,

4. Անիում Բարսեղ Ա Անեցին:

Շուտով Գրիգոր Վկայասերը հաստատվեց Շուղրի Կարմիր վանքում: Քիչ տեղեկություններ են հայտնի այս վայրում հայոց կաթողիկոսարանի գործունեության մասին: Հայտնի է նաև, որ Գրիգոր Բ Վկայասերը սերտացրել է հարաբերություններն արևելյան եկեղեցիների հետ:

1105 թ. Գրիգոր Բ Վկայասերը մահվան մահճում հայոց իշխանապետ Գող Վասիլի ներկայությամբ իր մոտ է հրավիրում քեռորդուն՝ Բարսեղ Ա Անեցուն և վերջինիս է հանձնում Ամենայն հայոց կաթողիկոսի գավազանը: Բացի այդ՝ Բարսեղ Ա Անեցին ստացավ Գրիգոր Բ Վկայասերի պատգամը, թե իրենից հետո ում պետք է կաթողիկոսական գահը փոխանցվի: Բարսեղ Անեցուց հետո այդ կարևոր պաշտոնը պետք է տրվեր Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռանը՝ Գրիգորին:

Վերլուծելով Գրիգոր Բ Վկայասերի գործունեությունը՝ Մ. Օրմանյանը նրան իրավամբ համարում է ամենագովելի դեմքերից մեկը Հայոց եկեղեցու պատմության մեջ:

Բարսեղ Ա Անեցին (1105-1113) թողեց Անին և հաստատվեց Գող Վասիլի տիրապետության տակ գտնվող Շուղրի Կարմիր վանքում: Նա հավատարիմ մնաց Գրիգոր Վկայասերի պատվիրաններին: Նորընծա կաթողիկոսը հոգ տարավ Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռների նկատմամբ: Վերջինս Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռ Գրիգորին և նրա

փոքր եղբորը՝ Ներսեսին հանձնում է ուսուցչապետ Ստեփանոս Մանուկի դաստիարակությանը, ով այդ ժամանակ բավական հայտնի անձնավորություն էր: Նույն այս ժամանակաշրջանում հայոց հայրապետը պետք է լուծեր աթոռանիստ տեղի խնդիրը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ քաղաքական իշխանության կենտրոնը փոխադրվել էր Կիլիկյան Հայաստանի սահմանները, և այստեղ անհրաժեշտ էր նաև հոգևոր բարձր իշխանության ներկայությունը, հայոց հայրապետը որոշում է մնալ այնտեղ:

Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի կառավարման վերաբերյալ միջնադարյան սկզբնադրյուրներում քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա զարգացրեց հոգևոր կյանքը և սերտ կապեր պահպանեց Գող Վասիլի հետ, որին Վարդան Արևելցին կոչում էր «Մեծ իշխանաց իշխան»: Ամեն պարագայում Բարսեղ Ա Անեցին իր աթոռակալման տարիներին վարեց բավական շրջահայաց քաղաքականություն՝ վերջ տալով կաթողիկոսական իշխանության տարանջատվածությանը և բացառելով առանձնացված հայրապետական աթոռների գոյությունը: Վերջինիս կառավարման տարիներին Կարմիր վանքի դպրոցը Կիլիկիայի բազմաթիվ վանքերի ու կրթօջախների մեջ հռչակված էր նշանավոր գիտնական վարդապետներով: Հատկապես աչքի էր ընկնում Ստեփանոս Մանուկը, և հենց նրա անվան հետ է կապված Կարմիր վանքում հռչակված բարձրագույն դպրոցի հեղինակությունը և մի շարք անվանի աշակերտների գործու-

Նեոլթյունը: Վանքի դպրոցում ուսուցանում էին Սուրբ Գիրք, կրոնի և եկեղեցու պատմություն, տոմարագիտություն, երաժշտություն, գրչության արվեստ և այլ առարկաներ:

Թեև Գրիգոր Վկայասերը կտակ էր թողել, որ Բարսեղ Ա նեցու մահից հետո հայրապետական աթոռը պետք է անցներ իր քրոջ թոռանը, այնուամենայնիվ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ դա տեղի կունենա Գրիգոր Գ Պահլավունու ղեռահասության շրջանում:

Այսպես՝ Բարսեղ Ա Անեցուն չհաջողվեց երկար կառավարել: 1113 թ. դժբախտ մի դեպքի պատճառով կաթողիկոսը մահացու վնասվածք ստացավ և նույն թվականի մայիսի 26-ին մահացավ: Նրա վախճանը սգում էր ողջ ժողովուրդը: Մահվանից առաջ նա պատվիրեց իր մարմինը հողին հանձնել Զեսունի Կարմիր վանքում՝ քեռու կողքին: Բարսեղ Անեցին իր գիտակցական կյանքի ողջ ընթացքում ծավալեց հայանպաստ և ազգաշահ գործունեություն:

1.4 Գրիգոր Գ Պահլավունին հայոց կաթողիկոս.

կաթողիկոսարանի տեղափոխումը Զոռմկլա:

1113 թ. Շուղրի Կարմիր վանքում տեղի ունեցավ մի կարևոր եկեղեցաժողով, որտեղ պետք է քննվեր հայոց Նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Նշյալ ժողովը հայոց կաթողիկոս է ընտրում Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռ Գրիգոր

Գ Պահլավունուն (1113-1166)⁵, ով ղեկավարեց հայոց եկեղեցին բավական երկար ժամանակ՝ 53 տարի: Նա ժամանակին իր ուսումը ստացել էր հենց Զեսունի Կարմիր վանքում և դառնալով կաթողիկոս՝ շարունակեց Պահլավունի հայրապետների եկեղեցական քաղաքականությունը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին 1113 թ. Գրիգոր Գ-ի օժման մասին գրելիս շեշտում է նրա վաղ տարիքը, միաժամանակ նշելով, որ նա Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսի տոհմից էր. «Յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեանն Տանն Հայոց տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգոր Մագիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պահլաւունւոյ, վասն զի զկնի մահուանն Տեառն Բարսեղի եղել ժողով եպիսկոպոսաց եւ հարանց ի Կարմիր վանքն՝ մերձ Զեսուն գաւառ՝ եւ...ի նմին աւուր տան զձեռնադրութիւն կաթողիկոսութեանն ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի. եւ նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չեւ եւս էր լեալ ի սկիզբէն մօրուացն...»:

Թեւ 1113 թ. ժողովը Գրիգոր Գ Պահլավունուն ընտրեց հայրապետ և նրա իշխանությունը ճանաչեց թեմերի ճնշող մեծամասնությունը, այնուամենայնիվ Աղթամարի Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսը պատրվակ դարձրեց այն հանգամանքը, որ Գրիգոր Գ Պահլավունին շատ երիտասարդ է, ուս-

⁵ Սկզբնաղբյուրների տվյալներով Գրիգոր Գ Պահլավունին այդ պահին 18, 20 կամ 22 տարեկան էր, իսկ ահա Սամուել Անեցին տեղեկացնում է, որ վերջինս 15 տարեկան էր:

տի Վան քաղաքից ոչ հեռու գտնվող Ձորավանքում իր կողմնակից հինգ եպիսկոպոսների կողմից հռչակվեց կաթողիկոս, ինչը բնականաբար բացասական կերպով ընդունվեց հայ հոգևորականության կողմից: Դավիթ Աղթամարցու իշխանությունը տարածվում էր միայն Վան քաղաքի և շրջակայքի վրա: Ինքնահռչակ աթոռը ամրապնդելու նպատակով Դավիթը նամակներով դիմեց հայ բարձրաստիճան հոգևորականներին: Նա մեծ հույսեր ուներ իր կողմը գրավելու Անին: Պատմիչ Վարդան Արևելցին գրում է, որ Դավիթը մեծ ջանքեր գործադրեց իր կողմը գրավելու Անիի հոգևորականներին՝ «ընծայիւք և աղաչանօք», սակայն արդյունքի չի հասել: Անիի հոգևոր հայրերը չէին ցանկանում հայության հոգևոր կենտրոնի առաջնությունը վերապահել Աղթամարին: Մի պահ նրա հանդեպ համակրանք ցուցաբերեցին Սյունյաց և Արտազի եպիսկոպոսները, սակայն մեկ տարի անց եկեղեցական ավանդույթները և Գրիգոր կաթողիկոսի դիրքերի ուժեղանալը ստիպեցին նրանց խզել հարաբերությունները հակաթոռ կաթողիկոսի հետ:

1114 թ. հայոց հոգևոր առաջնորդները ժողով գումարեցին Կարմիր վանքում, որին մասնակցում էին մեծ թվով եպիսկոպոսներ, վանականներ, իշխաններ ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ նրանից դուրս գտնվող հայահոծ շրջաններից՝ թվով 2500 հոգի: Ժողովը քննեց Դավիթ Աղթամարցու ինքնակոչ գործունեությունը, դատապարտեց նրան, մերժեց նրա կաթողիկոսությունը և օրինական կաթողիկոս ճանա-

չեց Գրիգոր Գ Պահլավունուն: Մ. Չամչյանի վկայակոչմամբ՝ Նշյալ ժողովը մշակեց և ընդունեց հայոց կաթողիկոսների ընտրության նոր կարգը, ըստ որի հայրապետական աթոռը մնում է հայրենիքից դուրս, բայց ամեն մի կաթողիկոսի ընտրությունն պետք է հավանության արժանանա հայաստանյան չորս եպիսկոպոսական աթոռների կողմից՝ Բջնիի, Յաղպատի, Տաթևի և Արտազի: Թե՛ Վասիլ Կամսարականը, որի տիրոջներում գումարվել էր վերո նշյալ ժողովը և թե՛ Թորոս Ռուբինյանն ու մյուս իշխանները, որոնք իշխանություն ունեին Կիլիկիայում և նրան հարող շրջաններում, բոլորովին մտադիր չէին թույլ տալ, որ հայրապետական աթոռը իրենց տիրոջներից տեղափոխվի Վասպուրական: Ժողովականները արևելյան մասի հոգևորականներին գրավոր իրազեկեցին իրենց որոշման մասին՝ նշելով, որ Գրիգոր Գ կաթողիկոսի դեռահաս տարիքը չի կարող խոչընդոտել նրա հովվապետությամբ:

Ինչ վերաբերում է Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությանը (1113-1895), ապա պետք է նշել, որ այն չվերացավ և երկար ժամանակ պահպանեց իր գոյությունը: Նրա հոգևոր իշխանությունը պահպանվեց սոսկ Վասպուրականի մի մասում և Մոկքում: Եթե խորը մոտենանք խնդրին, ապա կտեսնենք, որ Դավիթ Թոռնիկյանի պառակտիչ քայլը սոսկ նրա մեծ հավակնությունների արդյունք չէր, այլ Մեծ Յայքի և նորաստեղծ հայկական պետության մրցակցության արտահայտություն: Եվ քանի որ նորաստեղծ պետությունը կառավար-

վում էր հայ անկախ իշխանների կողմից, իսկ Մեծ Հայքը գտնվում էր օտար նվաճողների իշխանության տակ, ապա առաջինի ազդեցությունը գնալով մեծանում էր՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրա հոգևորականության համար, չնայած ավանդական իրավունքն, անկասկած, Մեծ Հայքի հոգևորականության կողմն էր: Վերը նշյալ ժողովը հայ եկեղեցական կենտրոններին խստիվ արգելում էր որևէ շփում ունենալ Աղթամարի կաթողիկոսության հետ:

1115 թ. Բեսունի իշխանության կործանումից հետո քաղաքն ընկավ խաչակիրների ձեռքը: Գրիգոր Գ Պահլավունին որոշեց 1116 թվականին հայրապետական աթոռը տեղափոխել Ծովքի դոյակը (1116-1149)⁶: Հայտնի է, որ դեռևս 1120-ական թվականներին Գրիգոր Գ Պահլավունին փորձեց կաթողիկոսական աթոռը վերահաստատել Անիում, ինչի մասին խոսում է Սամվել Անեցի պատմիչը: Կաթողիկոսը նույնիսկ պայմանավորվածություն ուներ քաղաքի Շադդադյան ամիր Աբուլ-Ասվարի հետ, սակայն քաղաքական իրադարձություն-

⁶ Ծովքի դոյակը մեր պատմիչները մատնանշում են զանազան վայրերում. առաջին տեսակետի համաձայն՝ այն գտնվում է Չորրորդ Հայքի Ծոփաց աշխարհի մեջ, իսկ երկրորդ տարբերակի համաձայն՝ վերը նշված տարածքը աշխարհագրագետները տեղադրում են Անտիոքի իշխանության մեջ գտնվող Տլուք գավառում: Բայց ամեն դեպքում հետազոտողների ճնշող մեծամասնությունը մախապատվությունը տալիս է առաջին տարբերակին, (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Հովհաննիսյան, Հայկական Կիլիկիոյ բերդերն և բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 446):

ները, մասնավորապես 1124-1126 թթ. քաղաքի գրավումը վրաց թագավորության կողմից, խափանեցին այս ծրագիրը:

Ցավոք, միջնադարի հայ և օտարազգի պատմիչները բավական տեղեկություններ մեզ չեն հաղորդում Ճովքի հայոց կաթողիկոսարանի գործունեության մասին: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի աթոռակալման տարիներին քույր եկեղեցիների միջև նոր շարժում սկսվեց:

Չայտնի է նաև, որ Գրիգոր Գ. Պահլավունին, 1141 թ., իր եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ ստանալով հրավեր, մասնակցել է Անտիոքի եկեղեցական ժողովին: Այդ ժողովից են առավել ակտիվացել հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունները, որոնք, ինչպես գիտենք, շարունակվեցին նաև հետագա դարերում, մասնավորապես 13-14-րդ դդ., երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը կարիք ուներ ռազմական օգնություն ստանալու Արևմուտքի երկրներից:

Վերոնշյալ ժողովը տեղի էր ունեցել Յոմի պապի նվիրակ կարդինալ Ալբերիկոսի նախագահությամբ: Ժողովից հետո Ալբերիկոսի հրավերով հայոց կաթողիկոսն այցելեց Երուսաղեմ, և այնտեղ կաթոլիկ կարդինալն առաջին անգամ առաջարկեց Յոմի եկեղեցու հետ միություն հաստատել: Գրիգոր Գ Պահլավունին, ի պատասխան այդ առաջարկության, հայտարարեց, թե ինքը երկու եկեղեցիներն իրարից բաժանող Էական կետեր չի տեսնում: Դրանից որոշ ժամանակ անց Ինոկենտիոս Բ պապի (1130-1143) և Գրիգոր Գ Պահլավունու միջև նվերների փոխանակություն տեղի ունե-

ցավ, իսկ քիչ անց կրկին սկսվեցին վիճաբանություններ երկու եկեղեցիների դավանական և ծիսական տարբերությունների շուրջ: Եվ ահա Եվգենիոս Գ պապը (1145-1153) գրություն ուղարկեց հայոց կաթողիկոսին՝ առաջարկելով, որ համակերպվի Յոնի եկեղեցու հետ և միանա նրանց: Գրիգոր Գ Պահլավունին պատասխան չտվեց այդ գրությանը, և այդպիսով ավարտվեց Հայոց և Յոնի եկեղեցիների միջև սկսված հարաբերությունների առաջին շրջանը:

Ինչպես տեսնում ենք, այդ պատմական ժամանակաշրջանը բավական բարդ էր հայոց եկեղեցու համար, քանի որ միաժամանակ նա պետք է պայքարեր թե՛ բյուզանդական եկեղեցու և թե՛ Յոնի պապական աթոռի դավանաբանական ճնշումների դեմ:

Ծովքում հայոց կաթողիկոսարանը մնաց շուրջ 33 տարի՝ մինչև 12-րդ դարի կեսերը, երբ Գրիգոր Գ Պահլավունին հայրապետական աթոռը տեղափոխեց Յոնմկա բերդաքաղաքը, որը ժամանակի ընթացքում դարձավ հայության ոչ միայն հոգևոր, այլև ուսումնագիտական կենտրոն: Այն վայելում էր Ռուբինյան իշխանապետերի համակրանքը և հովանավորությունը: Պետք է շեշտել նաև այն, որ չնայած կաթողիկոսարանը չհաստատվեց Անիում, այնուամենայնիվ Գրիգոր Գ Պահլավունին շարունակում էր սերտ կապեր պահպանել անեցիների հետ:

Իսկ ինչ վերաբերում է Շուղրի Կարմիր վանքի դպրոցի գործունեությանը, ապա պետք է նշել, որ այս հաստատու-

թյունը կորցրեց իր երբեմնի հռչակը, քանի որ տեղի նշանավոր վարդապետների հետ փոխադրվեց նոր կենտրոն՝ Զոռմկյա:



Զոռմկյա

Ինչո՞ւ Գրիգոր Գ Պահլավունին որոշեց կաթողիկոսարանը տեղափոխել Զոռմկյա, ո՞րն է կաթողիկոսարանի տեղափոխման իրական թվականը, և ինչ դեր կատարեց Զոռմկյայի կաթողիկոսարանը հայության և մասնավորապես հայ եկեղեցու կյանքում:

Հայտնի է, որ ուսումնասիրողներից ոմանք հայրապետական աթոռի տեղափոխումը Զոռմկյա դիտում են որպես Ռուբինյանների կողմից հայկական պետականության ձևա-

վորմանն ուղղված քայլ այնքանով, որ Հռոմկլայում կաթողիկոսությունն ազատվում էր Կ. Պոլսի պատրիարքության ազդեցությունից և ճնշումներից: Դրանով նաև հնարավոր էր դառնում «եկեղեցին ներգրավել կառավարման համակարգում» և ուղղակի արդյունավետ վերահսկողություն սահմանել նրա գործունեության նկատմամբ, քանի որ Հռոմկլան վարչական առումով Հայաստանից դուրս էր: Այս իրադարձությունը չափազանց կարևոր էր հայ ժողովրդի կյանքում, քանի որ այս պատմական ժամանակաշրջանում, երբ հայությունը չունեի պետականություն, կաթողիկոսարանը նրան միավորող միակ իրավական իշխանությունն էր: Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն միջևորդ դատավորի դեր էր ստանձնում միմյանց դեմ կռվող հայ իշխանների միջև բորբոքված պառակտչական բախումները դադարեցնելու մտահոգությամբ: Եվ այս դրությունը թույլ էր տալիս նրան հանդես գալ ողջ ժողովրդի ապահովման դիրքից, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած հայության քաղաքական ձգտումները:

Կարևոր գործոն էր նաև այն, որ սելջուկ-թուրքերը, գրավելով Հայաստանը, շուտով շարժվում են դեպի արևմուտք: Ճիշտ է, հայ իշխանները կարողանում են ժամանակ առ ժամանակ լեզու գտնել նոր նվաճողների հետ և խաղաղ

ապրել, սակայն մերթ ընդ մերթ այնտեղ էլ են բախումներ լինում, և վտանգ էր ստեղծվում Ծովքի կաթողիկոսական աթոռի համար: Հենց դա էր պատճառը, որ Գրիգոր Գ կաթողիկոսը և իր եղբայր Ներսես Շնորհալին որոշում են հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխել առավել անվտանգ տարածք, որը տվյալ պահին ավելի շահեկան էր: Եվ իրոք, հայոց կաթողիկոսի՝ Հռոմկլա տեղափոխման հարցում կարևոր դեր էր կատարել այն հանգամանքը, որ Ծովքի դոյակը այդքան ապահով և անվտանգ վայր չէր, շրջապատված էր թշնամիներով և այնքան էլ անառիկ չէր՝ ի տարբերություն Հռոմկլա բերդաքաղաքի, որի ընտրությունը շատ բարեհաջող էր կատարված:

Նշենք նաև, որ կաթողիկոսարանի տեղափոխման մասին խոսում են միջնադարի ճանաչված պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Սմբատ Սպարապետը և ուրիշներ: Այսպես՝ պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ մասին նշում է հետևյալը. « Փոխեաց զաթոռն հայրապետական ի բերդն, որ կոչի Հռոմկլայ...»: Դրան զուգահեռ Վարդան Արևելցին էլ ավելացնում է, որ «Յայն ժամանակի աթոռն Հայոց շրջեալ ի բազում վայրս՝ ի Կարմիր վանքն, ի Շուղոն, և ի Ծովքն, գնացեալ դադարէ ի Հռոմկլայն կոչեցեալ դղեակն.....»: *Կաթողիկոսի Հռոմկլա տեղափոխման մասին մեզ առավել ընդգրկուն տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի հայտնի սպարապետ, օրենսդիր և պատ-*

միչ Սմբատ Սպարապետը, ըստ որի՝ Գրիգոր Գ-ն սկզբնական շրջանում որոշում է գնալ Արևելք՝ պայմանավորվելու վրաց արքայի հետ՝ կաթողիկոսարանը Անի տեղափոխելու համար, որը որոշակի առումով անվտանգ կարող էր լինել: Ճանապարհին Գրիգոր Գ կաթողիկոսը հանդիպում է կոմս Ջոսլինի կնոջը՝ Բիաթրիսին, որը իմանալով կաթողիկոսի մտադրության մասին, խորհուրդ չի տալիս տեղափոխվել Անի, այլ առաջարկում է կաթողիկոսին գնել Յոռմկլան⁷, որը շատ անառիկ բերդ էր՝ խոստանալով անհրաժեշտության դեպքում օգնության տրամադրում: Կաթողիկոսը, լսելով այդ առաջարկը, շատ է ուրախանում, տալիս է իր համաձայնությունը և վերադառնում Ծովքի դոյակը՝ այդ մասին տեղյակ պահելով իր եղբորը՝ Ներսեսին: Աթոռի Յոռմկլա տեղափոխումը Գրիգոր Գ Պահլավունին իրականացրեց 1149 թ.: Որոշ ժամանակ անց կաթողիկոսը 15000 դահեկանով գնեց այն, որից հետո տիկին Բեաթրիսը տվեց նրանց կտակ, համաձայն որի՝ Յոռմկլան այսուհետ Պահլավունիների սեփականությունն էր: Ձեռք բերելով ամրոցը՝ կաթողիկոսն ու իր եղբայրը Յոռմկլան վերածեցին կաթողիկոսարանի և այնտեղ կառուցեցին գմբեթակիր կաթողիկե եկեղեցի՝ հարակից շինություններով: Այստեղ հարց է առաջ գալիս նաև, թե ինչու

⁷ Յոռմկլան գտնվում է Կիլիկիայի արևելյան սահմանին, շրջապատված է մի կողմից Եփրատի, իսկ մյուս կողմից՝ Մարգման գետակի ջրերով, այդ մասին տես Մ. Յովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 431:

այդ ժամանակ Գրիգոր Գ Պահլավունին կաթողիկոսարանը չտեղափոխեց Կիլիկիա, որտեղ Ռուբինյանները գնալով օր օրի ավելի էին հզորանում: Պատասխանը շատ պարզ է: Հոգևոր իշխանությունը ոչ մի ցանկություն չուներ ենթարկվելու աշխարհիկ իշխանությանը, ուստի և գերադասում էր հնարավորին պահպանել իր անկախությունը:

1151 թ. դադարում է գոյություն ունենալ Եդեսիայի կոմսությունը, և նրա նախկին տարածքները, այդ թվում և Հռոմկլան, հայտնվում են Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի և Իկոնիայի սելջուկյան սուլթան Մասուդի իշխանության տակ: Նման պայմաններում, երբ մշտական վտանգ կար Բյուզանդական կայսրության կողմից հայոց եկեղեցին ենթարկելու միության հարցում, Նուր ալ-Դինի տիրապետության տակ ընկնելը կրոնական հարցերում որևէ խնդիրներ չէր առաջացնի հայոց կաթողիկոսարանի համար: Եվ հետագա տասնամյակների պատմությունն էլ ցույց տվեց, որ Պահլավունի կաթողիկոսների հաշվարկները ճշգրիտ էին:

Ամեն դեպքում պետք է նշել, որ թեև Գրիգոր Գ կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Կիլիկիայի սահմանագլխին, բայց ոչ Կիլիկիայում, այնուամենայնիվ Հռոմկլայում հաստատված Պահլավունի հայրապետներն իրենց հոգևոր իշխանությունը գործադրում էին նաև Կիլիկիայի հայկական պետությունում, ինչպես նաև բուն Հայաստանում, Եգիպտոսում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Ասորիքում և այլ վայ-

րերում: Ստեփանոս Օրբեյանը նշում է, որ Հռոմկյան «Էր գահ հայրապետացն և աթոռ կաթողիկոսացն հայոց: Յորում կային անպատմելի սրբութիւնք և նշխարք առաքելական»: Այլ խոսքով՝ Հռոմկլայի կաթողիկոսարանը շարունակում էր մնալ որպես միակ համահայկական հոգևոր կենտրոն: Կարևոր է նաև նշել, որ 12-րդ դարի կեսերին Կիլիկիայի հայ իշխաններն էլ որոշակի մասնակցություն են ունենում եկեղեցական կյանքի աշխուժացման և զարգացման գործում:

Հայտնի է, որ Ռուբինյան իշխանապետերից Թորոս Բ տաճարներ է կառուցում Անարգաբայում և հայոց իշխանապետության այլ քաղաքներում: Այդ առթիվ հայոց իշխանապետը եկեղեցուն և հոգևոր պաշտոնյաներին նվիրում է առատ պարգևներ: Նրանից բացի, իրենց թեմական եկեղեցիներին մեծարժեք նվիրատվություններ և պարգևներ են տալիս Լամբրոնի Հեթումյանները: Հետագայում Կիլիկիայի պետության առանձին ֆեոդալներ նույնպես որոշակի նվիրատվություններ և պարգևներ էին շնորհում հայոց եկեղեցուն:

Շատ կարևոր է նաև նշել, որ Հռոմկլայի ամրոցն իր անառիկ դիրքով ուներ պաշտպանական մեծ հնարավորություններ և հիմնականում զերծ էր մնում օտար նվաճողների ավերիչ ասպատակություններից: Ամրոցի կայազորից զատ, հայոց կաթողիկոսը նաև այլ ռազմական ուժեր ուներ, որոնք պաշտպանում էին իր տիրույթները և հնազանդ պահում դրանցում բնակվող հպատակներին:

Ինչ վերաբերում է Ծովքի հայրապետական դոյակին, ապա պետք է նշել, որ 1149 թ. կաթողիկոսարանի տեղափոխումից հետո այն մնաց կանգուն և դիտվում էր որպես վանական հաստատություն, շարունակեց իր հոգևոր գործունեությունը բավականին երկար ժամանակ և հետագա դարերում հիշատակվում է միջնադարյան տարբեր պատմիչների աշխատություններում:

1.5 Ներսես Շնորհալու գործունեության սկիզբը

1166 թ. Գրիգոր Գ Պահլավունին կյանքի վերջին օրերին, Յոռմկլայի և շրջակա հոգևորականների ներկայությամբ իր ձեռքով կաթողիկոս է օծում 66-ամյա եղբորը՝ Ներսես Դ Շնորհալուն: Նա այդ ժամանակաշրջանում արդեն նշանավոր եկեղեցական գործիչներից էր, հայտնի էր նաև Ներսես Կլայեցի անունով⁸: Ըստ մեզ հասած որոշ պատմական սկզբնաղբյուրների և իր գրվածքներում եղած որոշ տվյալների՝ Ներսես Շնորհալին սերում էր Ապիրատյանների տոհմից: Մի տոհմ, որի նշանավոր մարդիկ իրենց դիրքով և գործունեությամբ սկսում են աչքի ընկնել հատկապես Բագրատունիների թագավորության ժամանակներից:

Ապագա հայոց կաթողիկոսը, ինչպես ասվել է, կրթվել է Շուղրի Կարմիր վանքում վանահայր Ստեփանոս Մանուկի

⁸ 1149 թվականից մինչև կյանքի վերջը Ներսես Շնորհալին ապրել և ստեղծագործել է գլխավորապես Յոռմկլա քաղաք-ամրոցում, ուստի կոչվել է նաև Կլայեցի:

անմիջական հսկողության և Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի ինսամակալության ներքո: Եղբոր կողմից ձեռնադրվել է քահանա, այնուհետև երիտասարդ տարիքում՝ եպիսկոպոս: Եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո Շնորհալին իր եղբոր կողմից հանձնարարություն է ստանում զբաղվելու եկեղեցու ծիսակարգի բարեկարգմամբ: Ընդունելով եղբոր առաջարկը՝ Շնորհալին սկսում է առաջին հերթին զբաղվել հոգևոր երգերով, դրանց եղանակներով: Նույնիսկ տերունական տոները մինչ այդ դեռևս չունեին շարականների լրիվ կանոնները: Շնորհալին ոչ միայն գրել է բազմաթիվ նոր շարականներ, այլև դրանք եղանակավորել, երգել և շատ երգողներ պատրաստել: Նա Կիլիկիայի տարբեր շրջաններից ընդունակ պատանիներին հավաքում էր կաթողիկոսարանում, ինքն էր դասավանդում շարականները, դրանց եղանակները, սովորեցնում եկեղեցու ժամակարգությունն ու պատմությունը: Ներսեսը Դ մեծ բարեփոխություն մտցրեց նաև վանական դպրոցների ուսումնական ծրագրերում: Նրա ձեռքի տակ աճեցին ու հզորացան մի խումբ անվանի հոգևորականներ, որոնցից, օրինակ, կարելի է հիշատակել Գրիգոր Դ Տղային, Ներսես Լամբրոնացուն և շատ ուրիշների: Շնորհալու առավել բեղուն գործունեության փուլը համընկավ այն ժամանակին, երբ հայոց կաթողիկոսարանը տեղափոխվեց Հռոմկլա բերդաքաղաք: Պատմիչների վկայմամբ՝ Գրիգոր Գ Պահլավունին հատկապես Հռոմկլայում աթոռակալման տարիներ

րին առանց եղբոր հետ խորհրդակցության ոչ մի կարևոր որոշում չէր կայացնում:

Վերջապես իր գործունեության մեջ Շնորհալին փայլեց Նաև գրականության ասպարեզում և միաժամանակ աչքի ընկավ թե՛ արձակ և թե՛ չափածո ստեղծագործություններով:

Խոսելով Կլայեցու՝ մինչ կաթողիկոս ընկած շրջանի մասին՝ պետք է նշել, որ եթե Ծովքում երիտասարդ Ներսես իր հայրապետ եղբոր օգնականն ու գործակիցն էր, ապա Յռոմկլայում առանց Շնորհալու ու նրա խորհրդի, կաթողիկոսը ոչ մի լուրջ գործ չէր ձեռնարկում: Այստեղ Ներսես Շնորհալին զբաղվում էր ոչ միայն ազգային, եկեղեցական-բարենորոգչական, դավանաբանական ու դաստիարակչական գործերով ու հարցերով, այլև պետական նշանակություն ունեցող, երկրի արտաքին քաղաքականության հետ կապված կարևոր դիվանագիտական խնդիրներով:

Ներսես Շնորհալին միջեկեղեցական ճանաչում և համբավ է վայելել իր բացառիկ գիտականությամբ, աստվածաբանական պատրաստվածությամբ, առաքինազարդ վարքով, սրբակեցությամբ: Համարվել է ավետարանական ոգով եկեղեցիների միության և համագործակցության ջատագով, եկեղեցու մեծ վարդապետ համաքրիստոնեական մտքի և մշակույթի պատմության մեջ: Իր կաթողիկոսության տարիներին Շնորհալին սերտ կապեր է պահպանել Հայաստանի բոլոր նշանավոր վանքերի և արևելյան վարդապետների

հետ, նրանց հետ թղթակցել դավանաբանական, եկեղեցական, ազգային, ինչպես նաև գրական ու գիտական բազում խնդիրների շուրջ: Շնորհալու համոզմամբ՝ ազգային կենտրոնացված պետականության բացակայության պայմաններում Հայ Առաքելական եկեղեցին այն միակ հաստատությունն էր, որը պետք է համախմբեր ժողովրդին և կազմակերպեր նրա ինքնուրույն գոյատևումը: Նրա բազմակողմանի գործունեությունը հետևողականորեն հետապնդում էր մի գլխավոր նպատակ, այն է՝ կրոնական ու ազգային պետական գործերում լինել ինքնուրույն ու անկախ, քանի որ նշյալ ժամանակաշրջանում Հռոմկլայի կաթողիկոսարանը հայերին միավորող միակ կազմակերպությունն էր: Եվ նրա իշխանությունը տարածվում էր հայաբնակ գրեթե բոլոր շրջանների վրա:

Եվ Գրիգոր Գ Պահլավունին, և՛ Ներսես Շնորհալին շահագրգռված էին Ռուբինյան պետության հզորացմամբ: Կիլիկիայի գրեթե բոլոր հայոց մեծամեծերը միավորվել էին Թորոսի Բ-ի գլխավորած իշխանության մեջ՝ բացի Լամբրոնի Օշին իշխանից, որը բյուզանդացիների դրոմամբ հակամարտության մեջ էր Ռուբինյանների հետ, և որը բացասաբար կարող էր ազդել վերջիններիս իշխանության հետագա զարգացման վրա: Ընդհուպ մինչև 1160-ական թվականները Օշինյաններն ունեին բյուզանդամետ դիրքորոշում: Եվ այս երկու նշանավոր ընտանիքների միջև հակամարտության խորացում թույլ չտալու գործին միջամտում է Հռոմկլայի հայոց

կաթողիկոսարանը: Հայտնի է նաև, որ Լամբրոնի իշխան Օզինը ամուսնացած էր կաթողիկոսի եղբոր դստեր՝ Շահանդուխտի հետ, իսկ Թորոս Բ-ի դուստրը կնության էր տրվել Գրիգոր Գ-ի մյուս եղբորը: Շնորհալին փորձեց օգտվել ինամիական կապերից և լուծել այդ խնդիրը: Նա աշխատում էր վերջ տալ եղբայրասպան թշնամությանը և երկու կողմերին հաշտեցնել: Այդ բարդ գործն իր վրա է վերցնում Ներսես Շնորհալին: Այդ նպատակով նա մոտ 1165 թ. միջնորդական առաքելության միջոցով Թորոս Բ Ռուբինյանի և Օշին իշխանի միջև համաձայնություն կայացրեց, որով Լամբրոնի տերը հնազանդվեց Թորոս Բ իշխանապետին՝ խոստանալով օժանդակել վերջինիս: Այս քայլով Ներսես Շնորհալին կատարեց մի շատ կարևոր ազգօգուտ գործ:

1.6 Շնորհալին և հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունները:

Հայտնի է նաև, որ Բյուզանդական կայսրությունը 12-րդ դարի երկրորդ կեսերին, ելնելով քաղաքական նպատակներից, բազմիցս փորձեր է կատարել սերտ դիվանագիտական փոխհարաբերություններ հաստատել Հռոմի պապական աթոռի, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի և այլ եկեղեցիների հետ:

Կիլիկյան Հայաստանում հայկական իշխանություններից Ռուբինյանները բավական սուր և երկարատև պայքարի մեջ մտան Բյուզանդական կայսրության հետ: Կայսրություն-

Նը, չկարողանալով զենքի ուժով վերանվաճել Կիլիկիան, փորձում էր քաղկեդոնական դարձնել հայոց եկեղեցին և նման ձևով վերահսկողություն հաստատել Կիլիկիայում: Եվ ահա Գրիգոր Գ կաթողիկոսի հանձնարարությամբ Շնորհալին 1165 թ. բանակցություններ է սկսում Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատարի՝ Մանուել կայսեր փեսա Ալեքս Աքսուխի հետ: Այդ բանակցությունները շարունակվեցին մեկ տասնամյակից ավելի, որոնց ընթացքում Բյուզանդական կայսրությունը փորձում էր հայոց եկեղեցին միավորել բյուզանդականի հետ:

Այսպես՝ 1165 թ. Շնորհալու և Ալեքսի հանդիպման ընթացքում բյուզանդական զորահրամանատարը առաջարկում է պատասխանել դավանաբանական մի քանի հարցերի, որոնք հետաքրքրում էին կայսրությանը: Այդ հանդիպման ժամանակ Ներսես Շնորհալին ներկայացնում է հայ եկեղեցու դավանանքը: Մանուելը, ստանալով պատասխանը, մի գրություն է ուղարկում հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն իր պալատական Սմբատի միջոցով: Նամակում կայսրը հայոց հայրապետին խնդրում էր Կոստանդնուպոլիս ուղարկել իր եղբորը՝ Ներսես Շնորհալուն՝ հայտնի թեմաների շուրջ բանակցելու համար: Սակայն հենց այդ ժամանակներում էլ Գրիգոր Գ Պահլավունին վատառողջության պատճառով գահը հանձնում է իր եղբորը՝ Ներսես Շնորհալուն (1166-1173), իսկ որոշ ժամանակ անց մահանում է:

Նրան հողին հանձնեցին Յռոմկլայի Կաթողիկե եկեղեցու հարևանությամբ, որն ինքն էր կառուցել, և որտեղ թաղվեցին նրան հաջորդած կաթողիկոսները: Ներսեսն էլ Բյուզանդիա չմեկնեց: Յետագա տարիներին էլ Բյուզանդական կայսրությունը շարունակում էր իր եկեղեցաքաղաքական գործունեությունը: Բյուզանդական կայսրությունը հայերին առաջարկում էր ընդունել Քրիստոսի երկու բնության վարդապետությունը: Նման պայմաններում Յայոց կաթողիկոսը շատ խելացի պատասխան է տալիս բյուզանդացիների ներկայացուցիչներին: Վերջինս հիմնավորում է հայ եկեղեցու ընդունած «Յավատո հանգանակը» և նշում է, որ ինքը միայնակ, առանց ազգային-եկեղեցական ժողովի հավանության, իրավասու չէ նման խնդիրներ լուծելու:

1166 թ. կաթողիկոս դառնալուց հետո սկսվում է Ներսես Շնորհալու եկեղեցական և հասարակական գործունեության բեղմնավոր շրջանը: Նա իրեն դրսևորում է որպես եռանդուն ազգային գործիչ, խելացի դիվանագետ: Նա շատ հետևողական կերպով շարունակել ու զարգացրել է իր նախորդների գործը՝ հավատարիմ մնալով ինքնուրույն մշակույթի պահպանման ավանդույթներին: Այդ է հաստատում հայոց կաթողիկոսի հովվապետության ողջ գործունեությունը և այն թըղթերը, որոնք վերաբերում են եկեղեցիների միության խնդիրներին: Շնորհալու կաթողիկոս դառնալուց հետո էլ Բյուզանդական կայսրությունը շարունակում էր փորձեր կատարել՝

համոզելու հայ բարձրաստիճան հոգևորականությանը ընդունել քաղկեդոնական դավանաբանությունը:

Պետք է ասել, որ Շնորհալին երբեք չի բարձրացրել եկեղեցիների միության խնդիրը: Հայտնի է, որ, սկսած Զաղկեդոնի ժողովից, բյուզանդացիներն իրենց պետական և գաղափարախոսական գերիշխանությունը քրիստոնյա փոքր ազգերի և ժողովուրդների, դրանց թվում առանձնապես հայերի վրա տարածելու համար տարբեր ժամանակներում քաղաքական, դիվանագիտական տարբեր մեթոդներ են կիրառել: Եկեղեցական միության համար բանակցություններ սկսելով՝ Բյուզանդական կայսրությունը մտադիր էր հայոց կաթողիկոսությունը ենթարկել իրեն և հետապնդում էր երեք հիմնական նպատակ՝

1. ձեռք բերել կայսրության ներքին գործերում հայերի աջակցությունը:
2. եկեղեցական միության դաշինք կնքելով՝ համաձայնության գալ հայկական գաղթօջախների բնակչության հետ, որը հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և մեղադրվում աղանդավորության մեջ:
3. Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքակաևության հանգուցակետերից մեկում՝ Կիլիկյան Հայաստանում, տեղի հայ ազգաբնակչության աջակցության և վստահության ձեռքբերելը:

Չայտնի է, որ 1169-1170 և 1171-1172 թթ. տեղի են ունեցել դիվանագիտական շփումներ Բյուզանդական կայսրության և Հռոմկլայի կաթողիկոսարանի միջև: Այդ դիվանագիտական առաքելությունները բյուզանդացիների կողմից ղեկավարում էր Թեորիանոսը: Պետք է նշել, որ Թեորիանոսը Ներսես Շնորհալու հետ ունեցած բանակցություններն ու վիճաբանությունները գրի է առել և հարցը Կոստանդնուպոլսում այնպես մատուցել, թե հայերը հոժարակամ են երկու եկեղեցիների միության հարցում: Համաձայն Ներսես Լամբրոնացու՝ Թեորիանոսը հույներին հիացրել է Ներսեսի մասին հաղորդած իր տեղեկություններով, նրա սքանչելի վարքի մասին պատմությամբ՝ ներկայացնելով նրան որպես խոնարհամիտ, հանգիստ, խաղաղություն փնտրող: Դա ինչ-որ չափով փոխել է հույների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Այն, որ Ներսես Շնորհալին պարկեշտ և խելացի անձնավորություն էր, դա փաստ է, սակայն այն տեղեկությունը, թե իբր հայոց կաթողիկոսը, համաձայնվել էր դավանափոխության առաջարկներին, իհարկե, իրականությունից հեռու էր և չէր կարող ճշմարիտ լինել: Պարզապես նման քայլ անելով՝ բյուզանդացի պատվիրակները ցանկացել են իրենց ղեկավարությանը ցույց տալ, թե իբր հաջողությամբ կատարել են իրենց առջև դրված կարևոր առաջադրանքը: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ բյուզանդական արքունիքը հե-

տագա տարիներին էլ այն կարծիքին չէր, որ հայերը հեշտությամբ կընդունեն քաղկեդոնականությունը:

12-րդ դարում՝ հատկապես Շնորհալու կաթողիկոսության վերջին տարիներին, բյուզանդացիները, ելնելով իրենց քաղաքական շահերից, նորից առաջ քաշեցին եկեղեցիների միության խնդիրը, սակայն այս նկրտումները հաջողություն չունեցան, ոչ թե Մանվել Կոմնենոս կայսեր (1143-1180) մահվան պատճառով, այլ այն պատճառով, որ այդ միությունը կարող էր խարխլել Կիլիկյան Հայաստանի նորահաստատ հայ ազգային պետության հիմքերը և ընդհանրապես վնասակար հետևանքներ ունենալ ազգային մշակույթի դիմագծի պահպանման համար, որի ջերմ պաշտպանն էր Շնորհալին: Եկեղեցիների միության խնդիրը Ներսես Շնորհալու կաթողիկոսության հենց առաջին տարվանից բարձրացրել է ինքը՝ Մանվել կայսրը, և փորձել է այն լուծել Միքայել պատրիարքի մասնակցությամբ: «Միություն» կոչված այդ խաբուսիկ «ակտի» մեջ Մանվել կայսրը հետապնդում էր ոչ թե կրոնական, այլ քաղաքական ու զավթողական, ինչպես նաև այլ նպատակներ:

1173 թ. փետրվարին Մանվել կայսրը 3-րդ անգամ Հռոմկլա գործուղեց երկու ազդեցիկ պատգամավորների՝ հույն Նշանավոր գիտնական մագիստրոս Թեորիանոսին և Փիլիպպոպոլսի վանքի վանահայր Հովհաննես Ուբմանին՝ հայերի հետ բանակցությունները շարունակելու և հաջողու-

թյամբ ավարտելու հանձնարարությամբ: Պատգամավորներն իրենց հետ տանում էին Մանվել կայսրի և Միքայել պատրիարքի կողմից գրված մի նամակ՝ հայոց Ներսես կաթողիկոսի անունով, և մի գրություն, որը պարունակում էր դավանաբանական վիճելի ինը հարց: Կայսրն իր նամակում մերժում էր մեկ բնության բանաձևը, թեկուզև այն կիրառել էր Կյուրեղ Ալեքսանդրացին, և առաջարկում էր հայերին ժողով գումարել և ընդունել ստորև նշված 9 առաջարկությունները: Միքայել պատրիարքն էլ իր հերթին կամենում էր միության խնդիրն առաջ քաշել՝ գտնելով, որ հայերը պետք է միաբնակության մոլորությունից հետ կանգնեն, իսկ բյուզանդական եկեղեցին պատրաստ է նրանց ընդունել իր գիրկը: Տեղ հասնելուն պես, ինչպես հրահանգված էր պատգամավորներին, պետք է ժողով հրավիրեին և քննեին ներքևում հիշված դավանաբանական ինը կետերը: Հայոց կաթողիկոս Ներսես Շնոհալուն ուղղված նամակում, շոյող, շողջորթ խոսքերից բացի, կային և գայթակղեցնող խոստումներ:

Մագիստրոս Թեորիանոսի և վանահայր Հովհաննես Ուլթմանի բերած հրահանգ-թղթի ինը կետերը հետևյալն էին, որոնք պիտի հայերը քննեին և ընդունեին.

1. նզովել մի բնություն ընդունող Եվտիքեսին, Դիոսկորոսին,
2. դավանել Զրիստոսի երկու բնություն՝ երկու կամք, երկու ներգործություն,
3. «Սուրբ Աստված» երգից «Խաչեցար» բառը հանել,

4. հույների և լատինների հետ միաժամանակ կատարել Զրիստոսի Ծննդյան, Սկրտության և Ավետման տոները,
5. մյուռոնը պատրաստել ձիթենու յուղով,
6. պատարագը կատարել խմորուն հացով ու ջրախառը գինիով,
7. պատարագի և ժամասացության ժամանակ ժողովրդին ներկա դարձնել եկեղեցում,
8. ընդունել 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ տիեզերական ժողովների որոշումները,
9. հայոց կաթողիկոսի ընտրությունը պետք է արժանանա կայսրի հավանությանը:

Կրոնական, դավանաբանական քողի տակ իրականում թաքնված էր բյուզանդական կայսրության աշխարհակալական, Կիլիկիան տնտեսապես և հոգեպես գաղութացնելու և փոքր ազգերի վրա գերիշխանություն տարածելու քաղաքականություն: Այլ խոսքով ասած՝ վերը նշված 9 գլուխները նպատակ ունեին հայոց եկեղեցին ենթարկել բյուզանդականին: Հույները, Թեոդիանոսի կողմից հարցը քողարկված ներկայացնելով, միամտորեն կարծում էին, թե Ներսես Շնորհալին, հանուն եկեղեցիների միության, պատրաստ է հայոց եկեղեցին ենթարկել արմատական փոփոխության: Շնորհալին լավ հասկացել էր Մանվել կայսրի նպատակը:

Շուտով Հռոմկլայում գումարվում է եկեղեցական ժողով, որտեղ քննարկվում է Բյուզանդական կայսրության կողմից առաջ քաշված խնդիրը: Բայց երբ Ներսես Շնորհալին և

Հռոմկլայի եկեղեցական ժողովը մերժում են Թեորիանոսի առաջ քաշած առաջարկները, վերջինս պահանջում է Ներսես Շնորհալուց, որ Հռոմկլայի ժողովի ընթացքի և իր բռնած դիրքի մասին մի նամակ գրի Մանվել կայսրին: Ներսես Շնորհալին էլ գրում է Թեորիանոսի պահանջած նամակը և հանձնում նրան:

Ներսես Շնորհալին մերժեց Մանվել կայսեր, Թեորիանոսի և Ութմանի միջոցով ներկայացրած պահանջները: Եկեղեցիների միության հարցը նա խելամիտ կերպով կապեց բուն Հայաստանի հետ և պատճառաբանեց, որ միայն Կիլիկիայի հոգևորականությունը և հայրապետական աթոռը առանց բուն Հայաստանի հոգևորականների չեն կարող քննության դնել այդ կարևոր հարցերը, որովհետև լիազորված չեն, իսկ այդ գործը լուրջ, համազգային նշանակություն ունեցող մի գործ է: Այս նամակով էլ վերջանում են թղթակցությունները հույների և Ներսես Շնորհալու միջև եկեղեցիների միության վերաբերյալ:

Հայ եկեղեցու պատմության համար կարևոր են Շնորհալու նամակները՝ ուղղված բուն Հայաստանի հոգևորականներին: Այդ նամակներով կաթողիկոս Ներսես Շնորհալին զգուշացնում է բուն Հայաստանի հոգևորականներին և թեմերին՝ հրահանգելով՝ չենթարկվել Բյուզանդական կայսրության կողմից տարածած սուտ լուրերի ազդեցությանը և չգժտվել Կիլիկիայի և ասորի հոգևորականության հետ, «զի մի յանհիմաստից ոմանց անուղղապես ինչ լուեալ, այլ ընդայլոյ

ինչ կարծիցեք...»: Հայոց հայրապետը հավանական էր համարում, որ բյուզանդացիները կարող էին բուն Հայաստանում կեղծ լուրեր տարածել, թե իբր Հռոմկլայի կաթողիկոսանքը և Կիլիկիայի հայությունը ընդունել են դավանափոխության առաջարկը, որպեսզի ճնշում գործադրեն բուն Հայաստանի հոգևորականության վրա: Եվ դրա համար էլ Շնորհալին նշում է, որ ինչպիսի լուրեր էլ որ տարածեն, միևնույն է, այն չի կարող իրականության հետ որևէ առնչություն ունենալ:

Այնուհետև Ներսես Շնորհալին բուն Հայաստանի հոգևորականներին իրազեկում էր Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցող եկեղեցաքաղաքական զարգացումներին՝ շեշտադրում կատարելով Բյուզանդական կայսրության հետ ունեցած հարաբերությունները:

Պետք է նշել, որ Ներսես Շնորհալու կաթողիկոսության ժամանակաշրջանում՝ 1166-1173 թթ., բյուզանդացիների գործադրած ճիգերը եկեղեցիների միության հարցում ավարտվում են անհաջողությամբ, որը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ 12-րդ դարի երկրորդ կեսերից միջազգային իրավիճակը նշյալ տարածաշրջանում այնպիսին էր, որ կայսրությունը գնալով էլ ավելի թուլանում էր, և նման պայմաններում էլ Կիլիկյան Հայաստանի հանդեպ գործադրվող քաղաքական և կրոնական ճնշումները պետք է թուլանային:

1.7 Կրոնական, հասարակական գործունեությունը:

Ընդհանրապես պետք է նշել, որ Ներսես Շնորհալու կաթողիկոսական շրջանը չի սահմանափակվում միայն հայ և հույն եկեղեցիների միության խնդրով: Այդ ժամանակաշրջանում կաթողիկոսարանի պատմության մեջ եղել են մի շարք այլ իրադարձություններ ևս, որոնք արժանի են հիշատակության: Մասնավորապես 1170-1172 թթ. ընկած ժամանակաշրջանում նշանավոր է Ներսես կաթողիկոսի ջանքերով արևորդիների դարձը: Սրանք հայ աղանդավորներ էին, որոնց կաթողիկոսը համեմատում էր բուլղար բողոմիլների հետ, որոնց կրոնական հայացքները ձևավորվել էին Բալկաններ գաղթեցված պավլիկյանների գաղափարների ազդեցության տակ, թեև, որպես աղանդ, մոտ էին թոնդրակեցիներին: Արևորդիների մի մասը փափագում է վերադառնալ Յայ Առաքելական Եկեղեցու գիրկը և դիմում է Թորոս արքեպիսկոպոսին ու Գագան իշխանին, որոնք այս խնդրի մասին տեղյակ են պահում հայոց կաթողիկոսին, թե ինչ ձևերով այդ անեն: Ներսեսն էլ իր հերթին բացատրում է, որ դարձողները պետք է զոջացողների պես ընդունեն քրիստոնեական սկզբունքները, չմկրտվածներին պետք է մկրտել, իսկ մկրտվածներից պահանջում է խոստովանել և ապաշխարել, պահպանել ծեսերը և հրաժարվել արևի, սատանայի և բարդու պաշտամունքից: Որպես քրիստոնյա՝ նրանք տարեկան երկիցս կամ երկիցս պետք է ապաշխարեն, սովորեն քրիստոնեական

ուսմունքը, իսկ երիտասարդներից կրոնավորներ պատրաստեն և հրաժարվեն արևորդի անունից:

Կարևոր է նաև նշել, որ Ներսես կաթողիկոսն իր պաշտոնավարության շրջանում ընդամենը յոթ եպիսկոպոս ձեռնադրեց, որոնք բոլորն էլ արժանի հոգևորականներ էին: Հիշյալ շրջանում եպիսկոպոսների կարիքը հայ եկեղեցում շատ ավելի մեծ էր, սակայն Ներսես կաթողիկոսը ձեռնադրում էր արժանավորներին: Դրանցից էր Կարսի եպիսկոպոս Խաչատուրը, որը փոխարինել էր Աբրահամին: Մյուսը եղել է Մյուսկյաց Ստեփանոս եպիսկոպոսը, որը 1168 թ. հաջորդել է իր հորը՝ Գրիգորին, որը ձեռնադրվել էր Գրիգոր Պահլավունու կողմից: Յոթի մեջ թերևս պետք է լինեին նաև նրա եղբորորդիներ Գրիգոր Տղան և Գրիգոր Ապիրատը, եթե, իհարկե, նրանք չէին ձեռնադրվել Գրիգոր կաթողիկոսի կողմից, որոնք հետագայում դարձան Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարներ: Հետևաբար յոթից մյուս հինգը գլխավոր թեմերի առաջնորդներ պետք է լինեին:

Նշենք նաև, որ Ներսես Շնորհալին իր գործունեության ընթացքում ունեցել է լավ և մտերմիկ հարաբերություններ ասորի հոգևորականության հետ: Եվ հայոց հայրապետը կարևոր դեր կատարեց հայ-ասորական հարաբերությունները սերտացնելու գործում:

Շնորհալու կաթողիկոսության վերջին տարիներին Ռուբինյան իշխանական աթոռին բազմել էր Կիլիկյան Հայաս-

տանի պատմության ամենանշանավոր իշխաններից մեկը՝ Սլեիը, որին միջնադարյան աղբյուրները շատ բացասական գույներով են ներկայացնում: Հանուն արդարության կարևոր ենք համարում նշել, որը Սլեիը իր իշխանության տարիներին ամուր հիմքեր դրեց, որպեսզի Կիլիկիայի հայկական իշխանությունը դառնա թագավորություն: Հայտնի է, որ երբ Սլեիը գահընկեց արեց իր եղբորորդուն՝ Ռուբենին, նա տեղափոխվեց Հռոմկլա, որտեղ էլ շուտով կնքեց իր մահկանացուն: Անշուշտ, այս հարվածը որոշակի ծանր վիճակի մեջ էր դնում նաև կաթողիկոսին, քանի որ Ռուբենը գտնվում էր Ներսես Շնորհալու խնամակալության տակ:

1173 թ. ամռանը մահացավ հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին: Կորուստը մեծ էր ինչպես Հռոմկլայի կաթողիկոսարանի, այնպես էլ ողջ հայության համար: Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ հիշատակվում է այդ նշանավոր հոգևորականի իրականացրած գործունեությունը, դասվում առաջինների շարքը: Դա է վկայում 17-րդ դարի կաթողիկ աստվածաբան Կղեմես Գալանոսի գնահատումը, համաձայն որի՝ Շնորհալին մեծառոչակ բանաստեղծ եղավ՝ բոլորից բարձր և տաղաչափական արվեստի մեջ այնքան հմտացավ, որ արժանի է համարվել լավագույնը ոչ միայն հայերի, այլև հույների ու լատինների շրջանում:

Եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին կաթողիկոսի մահը բացատրում էր ճգնավորության պատճառած տկարությամբ, զանազան հիվանդություններով, որոնք գլուխ բարձրացրին

ամառվա տապի պատճառով: Նա վախճանվեց 73 տարեկան հասակում: Նրա մահը սգացել է նույնիսկ բյուզանդական արքունիքը և ողջ քրիստոնյա աշխարհը: Մասնավորապես Ներսես Լամբրոնացու ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ բյուզանդական Մանվել կայսրը մեծ վշտով է ընդունել հայոց կաթողիկոսի մահվան լուրը: Այնքան մեծ է եղել Շնորհալու համբավը, որ բյուզանդացիները, ասորիները և հռոմեացիները նրան նմանեցրել են 3-4-րդ դարերի եկեղեցու մեծ հայրերին, նրա համբավը տարածվել է բոլոր ազգերի, այդ թվում նաև ոչ քրիստոնյաների մեջ: Նրան ժամանակի հույն և ասորական աղբյուրները կոչել են «Նոր Գրիգոր Աստվածաբան»: Զուղարկավորության ծեսն իրականացրել է Գրիգոր Ապիրատ եպիսկոպոսը՝ մարմինն ամփոփելով Զռոմկայի Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի գերեզմանի կողքին: Զուղարկավորության ժամանակ գնահատանքի խոսք է ասել ժամանակի նշանավոր քաղաքական և հոգևոր գործիչներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին: Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ Գրիգոր Ա Լուսավորչից, Սահակ Ա Պարթևից, Մեսրոպ Մաշտոցից, Մովսես Խորենացուց և Գրիգոր Նարեկացուց հետո ոչ ոք այնքան մեծարանք ու սեր չի վայելել իր ժամանակակիցների և հետագա սերունդների մոտ, որքան Ներսես Շնորհալին՝ իբրև հայրապետ և մատենագիր: Ներսես Շնորհալին պատկանում է այն սակավաթիվ երանելիների թվին, որոնք դասվել են սրբերի

շարքը, և նրա հիշատակը հայ առաքելական եկեղեցին նշում է ամեն տարի՝ Թարգմանչաց տոնին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 1978 թ. սահմանել է Ս. Ներսես Շնորհալու շքանշան, իսկ Տավուշի մարզկենտրոն հռչակում է գտնվում Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին:

1.8 Մատենագրական վաստակը:

Ներսես Շնորհալին թողել է բազմաթիվ գրական մեծարժեք ստեղծագործություններ՝ չափածո և արձակ: Նրանից մեզ հասած արձակ գործերը զանազան թղթեր, նամակներ, ճառեր, մեկնություններ են, դրանցում արտացոլված են մի կողմից ժամանակի սոցիալ-տնտեսական և պատմաքաղաքական իրադարձությունները, իսկ մյուս կողմից հեղինակի, որպես քաղաքացու և մտածողի, հայացքները: Ստեղծագործությունների պսակը չափածո գործերն են, որոնք իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբերի՝ շարականներ,



Ներսես Շնորհալի
(1166-1173)

տաղեր, գանձեր, ներբողներ, խրատական բանաստեղծություններ, հանելուկներ, պոեմներ և այլն:

Ներսես Շնորհալու բազմաժանր ստեղծագործությունները՝ աստվածաբանական, պատմական, փիլիսոփայական, մանկավարժական բնույթի երկերը, բանաստեղծություններն ու պոեմները, նամակներն ու քարոզները, աղոթքներն ու շարականները հայոց «արծաթե դարի» և Կիլիկյան Հայաստանի պատմության առաջին շրջանի մայուն արժեքներից են: Ներսես Շնորհալու ստեղծած գործերից հատկապես կարելի է հիշատակել «Վիպասանություն», «Ողբ Եղեսիոյ», «Բան հավատոյ», «Յիսուս Որդի», «Յաղագս երկևից և զարդուց Նորա», ինչպես նաև մի շարք այլ աշխատություններ և տաղեր, հանելուկներ, որոնց թիվը հասնում է շուրջ երեք հարյուրի, և որոնցում արտացոլված են ժողովրդի կյանքն ու զբաղմունքը: Շնորհալին ստեղծեց նաև հարյուրավոր հոգևոր երգեր, ինչպես նաև զանազան թղթեր, նամակներ՝ նվիրված հայ-բյուզանդական եկեղեցիների միությանն առնչվող խնդիրներին: Եվ բացի այդ՝ հայոց հայրապետի գրչին է պատկանում նաև «Թուղթ ընդհանրականը», որը հայ և առհասարակ քրիստոնեական մատենագրության կրթողներից է:

Մեծ է հայոց հայրապետի դերը հոգևոր երգերի բնագավառում: Հայկական բազմատեսակ շարականներ պատկանում են նրա գրչին: Անկարելի է պատկերացնել մեր հոգևոր երգի զանձարանը՝ Շարակնոցը՝ առանց Ներսես Շնորհալու:

Նրա շարականները, ըստ բովանդակության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. տերունական տոներին նվիրված կանոններ,
2. վկայաբանական և դավանաբանական բնույթի կանոններ,
3. կանոններից դուրս շարքեր (ազգային, հայրենասիրական թեմաներով հանդերձ)

Կաթողիկոս Ներսես Շնորհալին հայ եկեղեցու պատմության այն եզակի հոգևոր գործիչներից էր, որ հսկայական հետք թողեց ոչ միայն հոգևոր, այլ նաև գրական և դիվանագիտական ասպարեզներում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 12-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ԵՎ 13-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

2.1 Մլեհ իշխանապետի եկեղեցական քաղաքականությունը:

Կիլիկիայի հայկական պետության և մասնավորապես հայ եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ է ժԲ դարի 70-ական թվականների առաջին կեսի՝ մեծ իշխանապետ Մլեհի կառավարման ժամանակաշրջանի եկեղեցական պատմության ուսումնասիրությունը: Այս պատմաշրջանում Կիլիկիայում հայկական իշխանությունը լուրջ քայլեր էր կատարում թագավորության հռչակման համար, իսկ Ամենայն Յայոց կաթողիկոսությունը երկարատև դեգերումներից հետո հաստատվել էր Կիլիկյան Յայաստանի սահմանազღխին՝ Յռոմկլա բերդաքաղաքում: Եվ բնական է, որ Յռոմկլայի կաթողիկոսարանի և Ռուբինյան իշխանապետության միջև առկա էին սերտ, ավելին՝ խնամիական կապեր:

Յայտնի իրողություն է, որ Մլեհը Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ յուրահատուկ անձնավորու-

թյուն էր: Ի տարբերություն մյուս հայ իշխանների՝ նա այլ քաղաքական կողմնորոշում է ունեցել: Կաթողիկոսների մշտական դավաճանությունից և հույների բացահայտ թշնամանքից դասեր քաղելով՝ նա դաշնակիցների հարցում կատարել է դիվանագիտական հեղաշրջում և դաշնակցել է Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի հետ (1146-1174), իսկ հետագայում՝ նաև տարածաշրջանի այլ մահմեդական պետական միավորների հետ, որը ոչ միանշանակորեն ընդունվեց, քանզի տարածաշրջանի թե՛ խաչակրաց պետությունները, թե՛ քրիստոնյա Արևմուտքը և թե՛ բյուզանդական կայսրությունը Կիլիկիայի հայկական պետությունը դիտում էին որպես իրենց դաշնակից և վստահելի հենարան տարածաշրջանի իսլամական պետությունների դեմ պայքարում:

Այսպես՝ 1169 թ. Մլեհ Ռուբինյանը, լսելով եղբոր՝ Թորոս Բ-ի մահվան լուրը, Հալեպի սուլթան Նուր ալ-Դինից ստանում է օգնական ջոկատ, ներխուժում է Կիլիկիայի Ռուբինյան իշխանություն և խլում իշխանությունն իր եղբորորդուց՝ Ռուբենից, ով նախ տեղափոխվում է Անտիոք, ապա՝ Ջռոմկլա, որտեղ էլ մեկ տարի անց վախճանվում է:

Մլեհի կառավարման սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսն էր Ներսես Շնորհալին: Ցավոք հայոց իշխանապետի և կաթողիկոսի միջև եղած հարաբերությունների մասին շատ քիչ տեղեկություններ են հայտնի, թեև նրանք ունեցել են սերտ կապեր, որոնք նպաստել են պետական-քաղաքական կառավարման զարգացմանը:

Բնական է նաև, որ նշյալ ժամանակաշրջանում Սլեի իշխանապետի և Զալեայի սուլթանության շահերից չէր բխում, որ հայոց եկեղեցին միավորվի բյուզանդականի հետ: Ինչ վերաբերում է Զոռմկլայի կաթողիկոսարանին, ապա պետք է նշել, որ այն միանգամայն անկախ կառույց էր, չէր մտնում Ռուբինյանների հայկական իշխանության տարածքի մեջ և չէր ենթարկվում նրանց:

Կաթողիկոս Ներսես Շնորհալու մահից հետո առաջ եկավ կաթողիկոսական թափուր այթռոյ թեկնածուի ընտրության խնդիրը, որը կարծես թե առաջին հայացքից գրեթե լուծված էր: Խնդիրն այն էր, որ Ներսես Շնորհալու մահվանից առաջ արդեն որոշվել էր, որ հայոց կաթողիկոսի պաշտոնին նրանից հետո հաջորդելու էր իր եղբոր՝ Վասիլի որդին՝ Գրիգոր Տղան, որը մեծացել և կրթություն էր ստացել կաթողիկոսարանում, եղել էր Շնորհալու օգնականը և տեղակալը, մասնակցել հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին, նաև փորձառու հոգևորականի համբավ ուներ: Պատմիչ Սմբատ Սպարապետը տեղեկացնում է հետևյալը. «Եւ գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յայթոռ նորա զորդի եղբօրն իւր երիցագունի Վասլի զարքեպիսկոպոսն տէր Գրիգոր, մականուն Տղայ»: Նմանատիպ տեղեկության հանդիպում ենք նաև միջնադարյան մյուս պատմիչների երկերում: Ամեն պարագայում հայոց կաթողիկոսի ընտրության մասին ամենից շատ տեղեկություններ մեզ հաղորդում է Միքայել Ասորի պատմիչը, ում վկայու-

թյունները չափազանց կարևոր են ինդրի պարզաբանման համար:

Ըստ Միքայել Ասորու՝ կաթողիկոսի մահվան պահին Գրիգոր Տղան Յոնմկայում չէր. նա հայրապետական հանձնարարականով գտնվում էր Կիլիկիայում, ուստի և Ներսես Շնորհալին ստիպված կաթողիկոսական մատանին հանձնում է իր ազգականներից Գրիգոր Ապիրատին. «Եւ ավագ եղբօր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, և կրտսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ կաթողիկոս...»: Գրիգոր Ապիրատն էլ էր նույն՝ Պահլավունիների գերդաստանի ներկայացուցիչ: Նա էլ Ներսես Շնորհալի կաթողիկոսի մյուս եղբոր՝ Շահանի որդին էր:

Փաստորեն Գրիգոր Տղայի բացակայության պայմաններում նոր կաթողիկոս է դառնում Գրիգոր Ապիրատը: Այս հանգամանքը առաջ է բերում հորեղբոր որդու՝ Գրիգոր Տղայի դժգոհությունը: Իսկ երբ Գրիգոր Տղան վերադառնում է կաթողիկոսանիստ Յոնմկլա, Գրիգոր Ապիրատը հրաժարվում է ընդունել նրան: Բնականաբար Գրիգոր Ապիրատի այս քայլը շատ ծանր իրավիճակի մեջ է գցում Գրիգոր Տղային, և նման պայմաններում վերջինս փորձում է քայլեր ձեռնարկել իր իրավունքները պաշտպանելու համար: Այդ մասին Միքայել Ասորին հետևյալն է նշում. «Եւ յորժամ լուաւ զայն աւագն. եկն ի կայն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըզնա ի բերդն. և նա զնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Սլէին. և Սլէին էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին

օգնութեամբ՝ տնոյծ զևս ի Զոռմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հորեղբօրն՝ Գրիգոր անուն...»:

Իսկ ով էր այս ծանր պահին օգնելու Գրիգոր Տղային, եթէ ոչ հայոց իշխանապետը: Եվ հավանաբար դա էր պատճառը, որ վերջինս անմիջապէս դիմում է իր փեսային՝ Սլէի իշխանապետին: Եվ միայն նրա վճռական միջամտության շնորհիվ հայրապետական գահին անցնում է Գրիգոր Դ Տղային: Սակայն հարց է առաջ գալիս, թե արդյոք հայոց իշխանապետն իրավասութիւն ունե՞ր միջամտելու հայոց կաթողիկոսի ընտրության գործընթացին: Զայտնի իրողութիւն է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը կատարվում էր եպիսկոպոսաց ժողովի կողմից, և բացի այդ Զոռմկլայի կաթողիկոսարանը հայ ժողովրդին միավորող եզակի կառույցներից էր և վեր էր բոլոր իշխանական տներից: Բայց եթէ հավատալու լինենք Միքայել Ասորու խոսքերին, ապա պետք է մտածել, որ Գրիգոր Ապիրատը, օգտվելով այն իրավիճակից, որ Գրիգոր Դ Տղան Զոռմկլայում չէր, բազմել էր կաթողիկոսական գահին: Թեև Շնորհալին իրեն իրավահաջորդ էր հայտարարել Գրիգոր Տղային, սակայն հանգամանքների բերումով է կաթողիկոսը մատանին տվել Գրիգոր Ապիրատին: Եվ նման պարագայում միայն Սլէին իր ռազմական *ուժով կարող էր հարցը լուծել, քանի որ, ինչպէս գիտենք, Զոռմկլան բավական* հզոր և ամուր բերդաքաղաք էր: Բնականաբար Գրիգոր Տղան միայնակ չէր կարող օրինական ըն-

թացքով կարգավորել այդ խնդիրը: Կիլիկիայի հայկական պետության ողջ պատմությունից հստակորեն երևում է, որ գրեթե միշտ էլ պետական կառավարման համակարգը, այդ թվում հայոց իշխանները, իսկ թագավորության հռչակումից հետո՝ նաև արքաները, թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով միջամտել են Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրություններին, քանի որ դրանք ունեին չափազանց կարևոր նշանակություն ողջ հայության համար: Գրեթե միշտ էլ փորձ է արվել այդ պատասխանատու պաշտոնին բազմեցնել այնպիսի ցանկալի անձի, որի շնորհիվ պետության և եկեղեցու հարաբերություններում վերջինս մնար աշխարհիկ իշխանության ազդեցության ոլորտում: Դա գիտակցում էր նաև Ռուբինյան իշխաններից Մլեհը: Հայոց իշխանապետը այդ մասին նախ տեղյակ է պահում Հալեպի տիրակալ Նուր ալ-Դինին և, նրանից հավանություն ստանալով՝ անցնում է գործնական քայլերի. Մլեհ Ռուբինյանը գահընկեց է անում Գրիգոր Ապիրատին և կաթողիկոսական աթոռին բազմեցնում Գրիգոր Դ Տղային (1173-1193): Ուշագրավ է այն փաստը, որ հայոց իշխանապետը, լինելով բավական հզոր քաղաքական գործիչ, միայն Նուր ալ-Դինի համաձայնությունը ստանալուց հետո ձեռնամուխ եղավ այս կարևոր գործին: Խնդիրն այն է, որ հայոց իշխանապետն այդ ժամանակ էլ համարվում էր Հալեպի տիրակալի դաշնակիցը, և բացի այդ հայտնի փաստ է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի տարած-

քը գտնվում էր Հայկաի սուլթանության սահմաններում: Հավանաբար այդ պատճառով էլ Մլեիը ցանկացած հավանությունն ստանալ Նուր ալ-Դինից և դրանից հետո նոր միջամտել հայոց կաթողիկոսի ընտրության խնդրին:

Այսպիսով՝ կաթողիկոս Ներսես Շնորհալու մահից հետո հայրապետական թափուր գահի համար որոշակի պայքար են մղել Շնորհալու եղբայրների երկու որդիները՝ Գրիգոր Ապիրատը և Գրիգոր Տղան:

Հայտնի է, որ այս կաթողիկոսի 20-ամյա կառավարման ժամանակ բավականին մեծ շինարարական աշխատանքներ են իրականացվել: Բացի այդ հենց Գրիգոր Դ Տղայի կողմից է եպիսկոպոս ձեռնադրվել Ներսես Լամբրոնացին, ով հետագայում դարձավ Կիլիկյան Հայաստանի ամենահայտնի հոգևորականներից մեկը և բավականին լուրջ գործունեություն ծավալեց նաև Կիլիկիայի հայկական թագավորության ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Ինչ վերաբերում է Գրիգոր Ապիրատին, ապա պետք է նշել, որ նա որոշ ժամանակ անց նշանակվում է Տարսուսի թեմի առաջնորդ՝ շարունակելով մնալ երկրի առավել աչքի ընկնող և ազդեցիկ եկեղեցականներից մեկը: Վերջինս երկար ժամանակ կառավարում է այդ թեմը, իսկ իր կյանքի վերջին տարիներին դառնում է Ամենայն հայոց կաթողիկոս (1194-1203)՝ կարևոր դերակատարում ունենալով 12-րդ դարի վերջի և 13-րդ դարի սկզբի հայ-բյուզանդական և հայ-հռոմեական եկեղեցաքա-

ղաքական բանակցություններին: Բացի այդ հենց Գրիգոր Ա-պիրատի ձեռամբ էլ հետագայում Լևոն Մեծագործը Տարսուն քաղաքում օծվում է որպես Կիլիկիայի հայոց թագավոր, որը կարևոր պատմական իրադարձություն էր թե՛ Կիլիկիայի և թե՛ ողջ հայության համար:

Դժբախտաբար, Մլեհի կառավարման վերջին մեկուկես տարիներին Ռուբինյան իշխանապետի և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունների մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում գրեթե տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ Հռոմկլայի կաթողիկոսարանը և անձամբ Գրիգոր Դ Տղան գործուն կերպով շարունակել են դեռևս Ներսես Շնորհալու կաթողիկոսության տարիներից որդեգրված քաղաքականությունը: Ինչ վերաբերում է անձամբ Մլեհ իշխանապետի և կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի հետագա հարաբերություններին, ապա պետք է նշել, որ ամենայն հավանականությամբ նրանց միջև Էական ինդիքներ կամ տարաձայնություններ չեն ծագել, այլապես դրանք դժվար թե վրիպեին ժամանակի պատմիչների ուշադրությունից:

**2.2 Կիլիկիայի հայոց իշխանապետությունը
և հայոց եկեղեցին Ռուբեն Գ-ի
իշխանապետության տարիներին:**

Մլեհի սպանությունից հետո Կիլիկիայում նոր իշխանապետ դարձավ Ստեփանեի ավագ որդին՝ Ռուբեն Գ (1175-

1187), որի կառավարման ժամանակաշրջանում ևս շարունակվեց Կիլիկիայի պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի միջև համագործակցությունը: Այս շրջանում ևս հայբյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերություններում գերակշռում էին Բյուզանդիայի փորձերը՝ նախկինի նման համոզել հայոց հոգևոր բարձր դասին եկեղեցիների միավորման հարցում: Հասկանալով, որ նման դժվարին խնդիրն անհնար է լուծել սամակագրությամբ, կաթողիկոսը որոշեց հարցը քննարկելու համար հրավիրել եկեղեցական հատուկ ժողով: Բավական երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո այն կայացավ 1178 թ.⁹ ապրիլի 9-ին Հռոմկլայում, որին մասնակցում էին տարբեր բարձրաստիճան հոգևորականներ, և որոնք պետք է պատասխանեին բյուզանդական եկեղեցու հետ միավորման առաջարկին: Ժողովի մասնակիցները ներկայացնում էին ոչ միայն Հռոմկլայի կաթողիկոսարանը և Կիլիկիան, այլև Մեծ Հայքի և հարակից շրջանների թեմերը. ներկա էր նաև Աղվանից կաթողիկոսը: Ժողովի հրավերը չընդունեցին և չմասնակցեցին Սանահինի վանքի հոգևոր հայրերը Գրիգոր վարդապետ Տուտեորդու գլխավորությամբ, որոնք և դատապարտեցին կայսեր կողմից առաջարկված միությունը: Գրիգոր Տուտեորդին այդ առնչությամբ մի նամակ ուղարկեց Գրիգոր Դ Տղային:

⁹ Հայագիտության մեջ որոշ հետազոտողներ նշյալ ժողովը թվագրում են նաև 1179 թվականով:

Հռոմկլայի ժողովը մերժեց բյուզանդական կայսր Մանվել Կոմնենոսի առաջարկը՝ եկեղեցիների միավորման հարցում, և դատապարտեց Քաղկեդոնի ժողովի ընդունած հավատո բանաձևը: Հայոց կաթողիկոսը և նրա կողմնակիցները հայ եկեղեցու միասնությունը վեր դասեցին բյուզանդականի հետ միության հեռանկարից: Շուտով Մանվել կայսրին հաջորդած մյուս Բյուզանդական կայսրերի օրոք կրոնական սաստիկ հալածանքներ ծավալեցին կայսրության տարածքում ապրող հայերի դեմ, և բանակցություններն ընդհատվեցին: Նույնիսկ եթե այդ իրադարձություններն էլ տեղի չունենային, միևնույն է, եկեղեցիների միավորումը չէր կարող կայանալ, քանի որ դրան խիստ դեմ էր հատկապես բուն Հայաստանի հոգևորականությունը, առանց որի համաձայնության Հռոմկլայի կաթողիկոսարանը այդ քայլին չէր գնա:

12-րդ դարի 80-ական թվականների սկզբներին սկատելիորեն աշխուժացան հայ-կաթոլիկ եկեղեցաքաղաքական հարաբերությունները: Դա է վկայում կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի 1184 թ. նամակը՝ ուղղված Հռոմի Լուկիոս III պապին (1183-1185): Այդ ժամանակվանից արդեն նշմարելի էր հայոց եկեղեցու արտաքին նախապատվությունների առանցքի տեղաշարժը Բյուզանդիայի քաղկեդոնիկ եկեղեցուց դեպի Հռոմ: Գրիգոր Դ Տղային այդ հարցում աջակցում էր Կիլիկիայի անվանի հոգևորականներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին:

Ռուբեն Գ իշխանապետի և Գրիգոր Դ Տղայի հետագա համագործակցության մասին պատմիչները քիչ տեղեկություններ են հաղորդում, սակայն այդ բացը լրացնում է 12-13-րդ դարերի դպտի հեղինակ Աբու ալ-Մուքարիմը: Ըստ նրա Ռուբեն Գ իշխանապետը և կաթողիկոս Գրիգոր Տղան Եգիպտոս ուղարկեցին մի պատվիրակություն: Չի բացառվում, որ սա մի փորձ էր՝ բարելավելու Եգիպտոսի հայ համայնքի վիճակը կամ նրանց համար քիչ թե շատ տանելի պայմաններ ապահովելու, քանի որ ֆաթիմյանների իշխանության տարիներին ակնառու դեր խաղացած Եգիպտահայերը նախորդ մեկուկես տասնամյակում մեկուսացվել էին բանակից ու պետական ապարատից: Սուլթան Սալահ ալ-Դինն էլ, այլևս վտանգ չզգալով Եգիպտոսի հայերից, որոշել էր մեղմացնել իր վերաբերմունքը նրանց հանդեպ՝ գուցե հաշվի առնելով նաև Կիլիկիայի Ռուբինյան իշխանապետության գործոնը:

2.3 Լևոն Մեծագործը և եկեղեցին

Գրիգոր Տղայի աթոռակալության տարիներին:

1187 թ. Կիլիկիայի հայոց պետության իշխանապետ Է հռչակվում ժամանակի ամենանշանավոր գործիչներից մեկը՝ Լևոն Բ իշխանապետը, որով նոր փուլ է սկսվում թե՛ Կիլիկիայի հայոց պետության և թե՛ հայ առաքելական եկեղեցու կյանքում: Իր գործունեության ընթացքում նա մեծամեծ գործեր է կատարել և արժանացել «Մեծագործ» պատվանվանը:

Ընդհանրապես հայ եկեղեցին, նշյալ ժամանակաշրջանում սերտ կապված էր քաղաքական իշխանության հետ և մեծապես ներգործում էր նրա վրա, 12-13-րդ դարերում մեծ դերակատարում ունեցավ Կիլիկիայի հայկական պետականության ստեղծման գործում:

Հայտնի է, որ հայոց եկեղեցին Կիլիկիայում ավելի վաղ էր հաստատվել, քան աշխարհիկ իշխանությունը: Կիլիկիայում հայոց պետականության գոյության ընթացքում պետության և եկեղեցու հարաբերություններին հատուկ էր սերտ համագործակցությունը: Ընդ որում, իշխանապետությունը սկզբնական շրջանում չէր խառնվում եկեղեցական գործերին, սակայն բուն Կիլիկիայում Ռուբինյանները թեմական եպիսկոպոսներից անվերապահորեն պահանջում էին ենթարկվել իրենց: Կիլիկյան Հայաստանում հոգևորականությունը զգալի ուժ էր ներկայացնում: Սկսած Լևոն Մեծագործից՝ հայոց թագավորներն անշեղորեն ձգտում էին իրենց ենթարկել Ամենայն հայոց կաթողիկոսներին՝ պահանջելով նրանց աջակցությունը ներքին և արտաքին քաղաքականության հարցերում:

Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում իրար հաջորդել են մի քանի կաթողիկոսներ՝ Գրիգոր Դ Տղան (1173-1193), Գրիգոր Ե Քարավեժը (1193-1194), Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203) և Հովհաննես Զ Սսեցին (1203-1221): Ուշագրավ է Լևոն Մեծագործի և վերջիններիս միջև հարաբերությունների պատմությունը: Ամեն դեպքում

պարզ է մեկ հանգամանք, որ Լևոն Մեծագործի իշխանապետության, իսկ հետագայում թագավորության տարիներին Կիլիկիայի հայկական պետությունը փորձեց կաթողիկոսականին պարտադրել իր իշխանությունը: Այդ պայքարը տևեց բավական երկար և ունեցավ հաճախ սուր դրսևորումներ:

Լևոն Մեծագործի իշխանապետության սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսն էր Գրիգոր Դ Տղան, ով կաթողիկոսական աթոռին բազմեց դեռևս 1173 թ. Լևոն Բ Ռուբինյանի հորեղբոր՝ Մլեհ իշխանապետի գործուն աջակցությամբ: Ինչպես նշում է նշանավոր հետազոտող Մաղաքիա Օրմանյանը, նա «Տղա» մականունը ստացել է իբրև կաթողիկոսի որդեգիր, ով մշտապես ապրել է կաթողիկոսարանում և ընկալվել որպես կաթողիկոսի ինսամքի և դաստիարակությանը տրված երեխա:

Գրիգոր Տղա կաթողիկոսի և Լևոն Բ իշխանապետի հարաբերությունների մասին միջնադարյան սկզբնաղբյուրները սահմանափակ հաղորդումներ են տալիս: Թեև եղած տեղեկություններն էլ վկայում են, որ նրանց միջև հարաբերությունները բավականին ջերմ են եղել: Այդ է վկայում այն փաստը, որ 1190 թ. հունիսին, երբ Երրորդ խաչակրաց արշավանքի ընթացքում գերմանական բանակը կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի (1155-1190) գլխավորությամբ հասավ Կիլիկիայի սահմաններին, կաթողիկոս Գրիգոր Դ Տղան շտապեց Սիս՝ հետագա քայլերի մասին Լևոն Բ իշխանապետի հետ խորհրդակցելու: Հայոց կաթողիկոսի այդ քայլը խո-

սում է այն մասին, որ նրանք համագործակցել են միմյանց հետ՝ հանուն Կիլիկիայի հայկական պետության հետագա զորեղացման: Լևոն Մեծագործն էլ իր հերթին Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին և Ներսես Լամբրոնացուն ուղարկում է կայսր Ֆրիդրիխին դիմավորելու, սակայն հանդիպումը չկայացավ. քանի որ հունիսի 10-ին Շիկամորուսը խեղդվեց Սելևկիայի Կալիկադոսու գետում:

Նրանց առաքելությունը կատարվում էր խիստ գաղտնի: Խնդիրն այն էր, որ հայոց իշխանապետը գաղտնի համագործակցում էր խաչակիրների հետ և փորձում էր օգտվել ստեղծված նպաստավոր իրավիճակից և թագ ստանալ: Այսպես Լևոն Մեծագործը գերմանացի խաչակիրներին տրամադրելու էր պարեն, անասնակեր և այլն, իսկ կայսր Ֆրիդրիխը նախնական համաձայնությամբ պետք է Լևոն Մեծագործին թագադրեր: Պատմիչ Վարդան Արևելցին, նշում է, որ Ֆրիդրիխ Շիկամորուսը հայտնել էր, որ ինքը ունի թագ և զգեստ ու բերում է Լևոնին:

Կարևոր ենք, որ Լևոն Բ իշխանապետը Կիլիկիայի պետության համար այս բանակցությունները վստահում է հայ բարձրագույն հոգևորականներին: Այսինքն՝ հայոց կաթողիկոսին և իր խորհրդականին՝ ժամանակի նշանավոր հոգևոր գործիչ Ներսես Լամբրոնացուն: Այս փաստը խոսում է այն մասին, որ Լևոն Բ իշխանապետի և հայոց եկեղեցու միջև եղել են բավականին սերտ գործակցային հարաբերություններ:

Նշենք նաև, որ 1180-ական թվականների վերջերին և 1190-ական թվականների սկզբներին Թեոդորոս Բար-Վահբունը Միքայել Մեծի դեմ մղած երկարատև աթոռակալական պայքարից հետո ապաստանում է Կիլիկյան Հայաստանում և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի միջնորդությամբ Լևոն Մեծագործի կողմից նշանակվում Կիլիկիայի Հակոբիկ ասորիների պատրիարք: Կաթողիկոսը հավանաբար Լևոն Մեծագործի խորհրդով և հանձնարարությամբ եռանդուն մասնակցություն է ունենում Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական իրադարձություններում, միջեկեղեցական խնդիրներում, ընդլայնում է հայ եկեղեցու հարաբերությունները քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ, ինչպես նաև նամակագրական կապեր հաստատում խաչակրաց երրորդ արշավանքի ղեկավարների, Եգիպտոսի սուլթան Սալահ-ալ-Դինի, բյուզանդական կայսր Մանվել I-ի, Կ.Պոլսի պատրիարք Միքայել III Անքիալոսի, Հռոմի պապի և ուրիշների հետ: Հայոց եկեղեցու հեղինակությունը Հռոմի եկեղեցու մոտ բարձրանում է հետզհետե 3-րդ խաչակրաց արշավանքի նախօրեին: Կղեմես III պապի (1187-1191) համար Կիլիկյան Հայաստանը դիտվում էր Հռոմի և խաչակրության հիմնական դաշնակիցը: Գրիգոր Դ Տղայի կաթողիկոսության տարիներին տեղի է ունենում հայ-բյուզանդական միջեկեղեցական բարիդրացիական հարաբերությունների վերջնական խզումը, սկսվում է հայ-կաթոլիկ միջեկեղեցական հարաբերության մերձեցումը: Նշյալ քաղաքականության կիրառումը տվյալ պահին խիստ

շահավետ էր հայկական իշխանապետության և եկեղեցու համար: Հասկանալի է, որ հայոց կաթողիկոսը չէր կարող նման լուրջ գործունեություն ծավալել առանց Լևոն Մեծագործի համաձայնության:

Ամենայն հավանականությամբ կաթողիկոս Գրիգոր Դ Տղան կողմնակից էր կաթոլիկ եկեղեցու հետ մերձեցմանը: Եվ դրա հիմքում ընկած էր այն գաղափարը, որ միգուցե ժամանակավոր զիջողական քայլերի շնորհիվ կաթոլիկ աշխարհը կճանաչի Կիլիկիայում հայոց թագավորության հիմնումը: Քանի որ ռազմավարական առումով Կիլիկիայի հայկական պետության համար ավելի շահեկան կարող էր լինել Հռոմի պապական աթոռի և արևմտաեվրոպական երկրների հետ հարաբերությունների զարգացումը, քան օրեցօր թուլացող բյուզանդական կայսրությունը, որը թշնամաբար էր վերաբերվում Կիլիկիայի հայոց իշխանապետության բարգավաճման գործընթացին:

Հայտնի է, որ Կիլիկյան Հայաստանը 12-րդ դարի վերջերին գտնվում էր մի այնպիսի աշխարհագրական տարածքում, որտեղ հարևանների ճնշող մեծամասնությունը իսլամ դավանող երկրներ էին: Հետևաբար հայոց արքան և կաթողիկոսը փորձում էին քրիստոնեական երկրների դաշինք ստեղծել ընդդեմ մահմեդական երկրների: Կաթողիկոսը, որ



Լևոն Մեծագործ
Կիլիկիայի հայոց թագավոր

միշտ աջակցություն էր ստացել Լևոն Բ իշխանապետից, փորձում էր օգնել նրան, որպեսզի հայոց իշխանությունը վերածվի թագավորության: Հայոց եկեղեցին տվյալ ժամանակաշրջանում պետության հետ փորձում էր դիմագրավել ապագայում սպասվող արհավիրքներին: Լևոն Բ իշխանապետի և եկեղեցու ջերմ հարաբերությունների մասին է խոսում նաև միջնադարի նշանավոր պատմիչ Սմբատ Սպարապետը: Համաձայն նրա՝ 12-րդ դարի վերջին քառորդում այնքան են մեծանում հայ հոգևոր ավատատերերի հարստությունն ու հողային տիրույթները, որ պատմիչը Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին համեմատում է արքաների հետ. «Չկեանս իւր արքայակերպ վարեր մեծամեծ տիրիւք և առատ պարգևօք»: Դժբախտաբար միջնադարյան սկզբնաղբյուրներում շատ քիչ հաղորդումներ են պահպանվել Գրիգոր Դ Տղայի և Լևոն Մեծագործի հարաբերությունների մասին: Սակայն հայտնի է, որ կաթողիկոս Գրիգոր Դ Տղան բավական լավ հարաբերություններ է ունեցել սկզբում Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի, իսկ հետագայում Եգիպտոսի Այուբյան տիրակալ Սալահ ալ-Դինի հետ: Այլ տարբերակ չէր էլ կարող լինել, քանի որ Հռոմկլան գտնվում էր Եգիպտոսի սուլթանության տարածքում, իսկ Այուբյանները հիմնականում հանդուրժող են եղել հայոց կաթողիկոսարանի նկատմամբ:

Ամեն դեպքում Լևոն Մեծագործը և կաթողիկոս Գրիգոր Դ Տղան միասնական կերպով վարել են նուրբ դիվանագիտություն: Օգնություն հատկացնելով խաչակիրներին՝

Նրանք միաժամանակ չմասնակցեցին նրանց արշավանքներին, սակայն պահպանեցին բարեկամական կապեր լատիների հետ: Փորձեցին առավելագույն չափով չեզոք դիրք գրավել երկու մեծ տիրակալների ու նրանց բանակների միջև՝ Սալահ ալ-Դիևի ապագա հնարավոր հակահարվածը կանխելու համար:

Կաթողիկոս Գրիգոր Դ Տղան մահանում է 1193 թ. մայիսի 16-ին: Նրա աճյունն ամփոփվում է Դրազարկի վանքում, որը Ռուբինյան գահակալների դամբարանատեղին էր:

Գրիգոր Զարավեժի կարճատև աթոռակալումը

(1193-1194):

Գրիգոր Դ Տղային հաջորդում է երիտասարդ հոգևորական Գրիգոր Ե Զարավեժը (1193-1194): Նա Գրիգոր Դ Տղայի ազգականն էր՝ Պահլավունի Ապիրատյանների նշանավոր տոհմից էր: Մ. Օրմանյանը, խոսելով Գրիգոր Դ Տղայի մահվանից հետո ստեղծված վիճակի մասին, նշում է, որ այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի հավանական թեկնածուներից էին Գրիգոր Ապիրատ և Ներսես Լամբրոնացի եպիսկոպոսները, որոնք բավական ազդեցիկ հոգևորականներ էին Կիլիկյան Հայաստանում: Բայց այդ երկու թեկնածուներից և ոչ մեկն էլ չառաջադրվեց, քանի որ Լևոն Մեծագործը և հայ բարձրաստիճան հոգևորականության մեծ մասը կաթողիկոսի ընտրության հարցում այլ որոշում կայացրին:

Այսպես, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի մահվանից հետո Լևոն Բ իշխանապետը և հայ իշխանական վերնախավը պաշտպանեցին երիտասարդ հոգևորական Գրիգոր Ե Քարավեժի թեկնածությունը, ով ընդամենը 22 տարեկան էր: Լևոնի Բ-ի աջակցությունը Գրիգոր Քարավեժին նպատակ ուներ սիրաշահելու բուն Հայաստանի հոգևորականությանը: Բանն այն է, որ բուն Հայաստանի հոգևոր ներկայացուցիչներն էին առաջ քաշել նրա թեկնածությունը՝ մերժելով կամ կանխելով հատկապես Գրիգոր Ապիրատի ու Ներսես Լամբրոնացու կաթողիկոսական հավակնությունները, քանի որ նրանց դիտում էին որպես լատինամետ գործիչների: Իհարկե, վերը նշված ժամանակաշրջանում Կիլիկիայում կային մի շարք հավակնորդ այլ արժանի հոգևորականներ ևս, սակայն բուն Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը կարելի է բացատրել այն պարզ հանգամանքով, որ հայոց իշխանապետը երազում էր հայկական բոլոր հողերը ազատագրել օտարերկրյա տիրապետությունից և դրանք միավորել իր իշխանության ներքո: Նա ցանկանում էր մի այնպիսի անձի տեսնել կաթողիկոսական աթոռին, ով ընդունակ կլիներ աջակցելու իրեն: Արժե նաև նշել, որ «Թուրք առ Լևոն արքայն հայոց» աշխատության մեջ Ներսես Լամբրոնացին ոչ միայն դեմ է եղել Գրիգոր Ե Քարավեժի ընտրությանը, այլև շատերին է համոզել, որ այդ «մանուկը» կաթողիկոս չընտրվի: Չնայած Լևոն Մեծագործը մի քանի անգամ հրավիրել է Ներսես Լամբրոնացուն և համոզել, որ վերջինս գա և

մասնակցի Գրիգոր Ե Բարավեժին կաթողիկոս օժելու ծիսակատարությանը, բայց նա հրաժարվել է: Մի քանի անգամ կանչելուց և ստիպելուց հետո միայն Ներսես Լամբրոնացին ականայից համաձայնել է և, հակառակ իր կամքի, կատարել է Լևոն Մեծագործի պահանջը:

Սկզբում արքայի և կաթողիկոսի հարաբերությունները բավականին ջերմ էին, սակայն շուտով բարդանում են: Հիշատակման է արժանի Գրիգոր Ե Բարավեժի հետ տեղի ունեցած դեպքը: Ինչպես գիտենք, սկզբում Լևոն Մեծագործը պաշտպանեց նրա թեկնածությունը, բայց երբ կաթողիկոսն արտահայտում է հայ հոգևորականության մեծամասնության կամքը և հավանություն չի տալիս Լևոնի Բ-ի քաղաքական որոշ դիրքորոշումներին, վիճակն արմատապես փոխվում է: Այստեղ հարց է առաջ գալիս, թե արդյոք հայոց կաթողիկոսը ունե՞ր լծակ հակազդելու հայոց իշխանապետի վրա: Հավանաբար ունե՞ր: Ճիշտ է, նա հայրապետական գահին էր բազմել Լևոն Մեծագործի աջակցությամբ, սակայն Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը այս պատմաշրջանում հայ ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար: Եվ հայոց կաթողիկոսարանը վեր էր Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից: Բացի այդ՝ Հռոմկլայի կաթողիկոսը գերակա էր բոլոր հայկական իշխանությունների նկատմամբ:

Պատմիչ Սմբատ Սպարապետը հետևյալն է հայտնում հայոց կաթողիկոսի մասին. «Տղայ կաթողիկոսն Տէր Գրիգորիս չհնազանդէր ամենեցուն, այլ ինքնիշխանութամբ ունէր զհայրապետութիւն...»: Ամենայն հավանականությամբ կաթողիկոս ընտրվելուց հետո Գրիգոր Ե Քարավեժը հասկանում է, որ ապագայում հնարավոր է հայոց եկեղեցուն դավանաբանական լուրջ զիջումներ պարտադրվեն, ուստի առանձին կարևոր հարցերում սկսում է առարկել հայոց մեծ իշխանապետին, չհնազանդվել, ինքնուրույնություն ցուցաբերել, որն, անշուշտ, չէր կարող անհետևանք մնալ: Շատ կարևոր է նաև նշել, որ, հատկապես այս շրջանից սկսած, Կիլիկիայի հայ իշխանական վերնախավը փորձում է իրեն ենթարկել հայոց կաթողիկոսներին՝ պահանջելով նրանց գործուն անջակցությունը հայկական պետության արտաքին քաղաքական հարցերում:

Ինդիրն այն է, որ 12-րդ դարի 90-ական թվականներին Լևոն Մեծագործը փորձում էր որոշակի զիջումների գնով միջազգային ճանաչում ձեռք բերել և ճանաչվել արքա եվրոպական միապետերի կողմից, իսկ հայոց կաթողիկոսը հավանաբար ցանկանում էր պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը:

Ի տարբերություն նախորդ շրջանի՝ այս փուլում եկեղեցու և պետության հարաբերությունները խիստ սրվում են:

Փաստորեն հայոց կաթողիկոսը փորձում է պահպանել հայ եկեղեցու անկախությունը և ավանդական դիմագիծը: Իհարկե, դա շատ օրինական է, և ճիշտ, սակայն նրա հա-

կաարևմտյան քաղաքականությունը հանդիպում է Լևոն Բ իշխանապետի և, ամենայն հավանականությամբ, մի շարք այլ իշխանների դժգոհությանը, քանի որ Կիլիկյան Յայաստանում գրեթե միշտ գործել էին արևմտամետ դիրքորոշում ունեցողները: Բացի այդ, 12-14-րդ դարերում Կիլիկյան Յայաստանի կախվածությունն արևմուտքից պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ շատ իշխաններ և հետագայում նաև երկրի արքաները, արևմուտքի հետ կապվում էին ինսամիական կապերով, իսկ մի մասն էլ՝ տևտեսական համագործակցությամբ ու սեփական շահերով:

Այս շրջանում Լևոնը Կիլիկիայի թագավորությունը ճանաչելու նպատակով շատ եռանդուն բանակցություններ էր սկսել և՛ Բյուզանդական կայսրության, և՛ Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչների հետ: Զանի որ հայոց կաթողիկոսը դեմ էր որևէ դավանական գիջման, հայոց իշխանապետը որոշում է ազատվել կաթողիկոսից և հրամայում եկեղեցական ժողով հրավիրել, որը սակայն տեղի չունեցավ: Արևելյան վարդապետներն անշուշտ պաշտպանելու էին հայրապետին և վիժեցնելու Լևոն Մեծագործի ծրագրերը: Շուտով Գրիգոր Ե Զարավեժն ամբաստանվում է իր հակառակորդներից:

Լևոն Մեծագործը Սսի Հովհաննես Եպիսկոպոսին ուղարկում է Հռոմկլա և ձերբակալել տալիս կաթողիկոսին՝ մեկուսացնելով Կոպիտառում: Չնայած կաթողիկոսական բերդի զինվորները զենք են վերցնում իրենց տիրոջը պաշտպանելու, սակայն Հովհաննեսի կողմակիցներն ավելի զորեղ են

գտնվում: Հարց է առաջանում՝ արդյոք ԼԼոնը՝ որպես Կիլիկյան պետության ղեկավար, իրավասու՞ էր հայոց կաթողիկոսին ձերբակալելու, երբ Հռոմկլայի կաթողիկոսարանը դեռևս չէր մտնում Կիլիկիայի իշխանության սահմանների մեջ: Ճիշտ է Գրիգոր Ե Քարավեժը հայոց իշխանապետի օգնությամբ էր դարձել Ամենայն Հայոց կաթողիկոս, սակայն ներկայացնում էր ողջ հայությունը: Եվ նման պայմաններում Ամենայն հայոց կաթողիկոսը կարող էր դիմել Եգիպտոսի սուլթանին, քանի որ Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը գտնվում էր նրա իշխանության տարածքում: Կաթողիկոսը չի ցանկացել, որ Կիլիկիայի հայկական իշխանության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները բարդանան:

Փաստորեն կաթողիկոսը չի համաձայնվել հետևելու ԼԼոն Մեծագործի և նրա համախոհների զիջողական քաղաքականությանը, անգամ հանձն չի առել կաթողիկոսական կնիքով և ստորագրությամբ վավերացնել հռոմեական եկեղեցուն հաղորդվելիք զիջողական հայտարարությունները: Սա այն եզակի դեպքից էր, երբ հայոց կաթողիկոսին բանտ էին նստեցնում առանց քննության ու եկեղեցական ժողովի:

Շուտով ԼԼոն Մեծագործը թուղթ է գրում Հայաստանի հոգևորականներին՝ նրանց կարծիքն իմանալու ակնկալիքով, սակայն մինչ պատասխան ստանալը հայոց կաթողիկոսին գտնում են բերդի պարիսպների մոտ՝ անշնչացած ընկած, մեջքին՝ պարան (այդտեղից էլ Քարավեժ՝ ժայռից ցած գլորված կամ գահընկեց արված):

Ի՞նչ էր իրականում տեղի ունեցել, ինչպիսի՞ պայմաններում սպանվեց հայոց կաթողիկոսը:

Շատ հավանական է, որ Լևոն Մեծագործը չի ցանկացել բարդացնել հարաբերությունները կաթողիկ տիրակալների հետ, ովքեր իրեն թագ էին խոստացել: Բացի այդ, հնարավոր է, որ որոշ քաղաքական և հոգևոր անձինք ամբաստանում էին հայոց կաթողիկոսին Լևոն իշխանապետի մոտ: Չի բացառվում նաև, որ հայոց իշխանապետը դիտավորյալ է օգնել երիտասարդ հոգևորականին՝ բազմելու հայոց հայրապետական գահին՝ հույս ունենալով՝ հետագայում նրան ամբողջությամբ իր վերահսկողության տակ պահելու, բայց կարճ ժամանակ անց հայոց իշխանապետը համոզվեց, որ իր այդ հաշվարկը սխալ է դուրս եկել:

Անդրադառնանք կաթողիկոս Գրիգոր Ե Զարավեժի մահվան հանգամանքներին: Այսպես, հայ պատմիչներն այնպես են ներկայացնում վերը նշված դեպքը, որ իբր հայոց կաթողիկոսը պարան է պատրաստել, որպեսզի գիշերը պատուհանից իջնի և փախչելու փորձ կատարի, բայց պարանը կտրվել է, և նա ընկել է ու մահացել: Հավանաբար միջնադարյան հայ պատմիչները, իրենց երկերում նշյալ խնդրին անդրադառնալով և նման գնահատական տալով, փորձել են մեղմել իրավիճակը և ցույց տալ, թե հայոց իշխանապետը մեղավոր չէր կատարված դեպքի համար, և կաթողիկոսի մահվան պատճառն այլ է: Ըստ հայ պատմիչների՝ հայոց հայրապետին համոզելով, թե իբր ուզում են փախցնել, գիշերով իջեց-

րին բերդապարսպից, բայց քանի որ Գրիգոր Ե Բարավեժը հաղթանդամ ու մեծամարմին մի երիտասարդ էր, պարանը, որով վերջինիս իջեցնում էին, կտրվեց, գուլցե և ինչպես ասում են, կտրեցին, և նա, ընկնելով բարձրությունից, մահացավ: Բայց ամեն դեպքում, եթե հայոց կաթողիկոսի դեմ դավադրություն չկազմակերպվեր, ապա նրան ոչ կծերբակալեին, ոչ էլ բանտ կնստեցնեին:

Իհարկե, շատ դժվար է հստակ գնահատական տալը: Ճիշտ է, մի կողմից հայոց կաթողիկոսի սպանությունը կարող էր կազմակերպված լինել Լևոն Մեծագործի կողմից, իր դեմ արտահայտվելու համար, սակայն կարող է այլ տարբերակ ևս լինել, քանի որ եթե իրականում Լևոն Բ իշխանապետը ցանկանար վերացնել Գրիգոր Ե Բարավեժին, ապա նա ինչու՞ պետք է հրապարակային ձևով փորձեր ժողով հրավիրել, դիմում հղեր արևելյան վարդապետներին, ձերբակալել տալ և ամբողջ ուշադրությունը իր վրա սևեռեր: Ցանկության դեպքում հայոց իշխանապետը առանց աղմուկի կկարողանար հենց Զոռմկլայի բերդաքաղաքում կազմակերպել վերջինիս սպանությունը, և ոչ ոք էլ նրան չէր կասկածի: Շատ հավանական կարող է լինել այն տեսակետը, որ այդ սպանությունը կազմակերպված և իրականացված լիներ մի խումբ լատինամետների կողմից, որոնք փորձել էին օգտվել Լևոն Մեծագործի և կաթողիկոս Գրիգոր Ե Բարավեժի միջև ծագած վեճից:

2.5 Եկեղեցին Գրիգոր Ապիրատի կառավարման ժամանակաշրջանում և Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը:

Գրիգոր Ե Զարավեժի սպանությունից հետո առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Եթե նախկինում Լևոն Մեծագործը կաթողիկոսական ընտրության ժամանակ մասամբ ընդունում էր նաև բուն Հայաստանի հոգևորականների կարծիքը՝ չցանկանալով ամբողջովին խզել կապերը նրանց հետ, ապա այս անգամ էլ հայոց իշխանապետը այդ պաշտոնը չտվեց հայտնի Բարսեղ Բ Անեցուն, որն այդ ժամանակ շատ ազդեցիկ հոգևորական էր և բուն Հայաստանի հոգևորականության թեկնածուն: Հայոց իշխանապետը վստահ չէր, որ վերջինս կենթարկվի իրեն:

Տեղի է ունենում նոր կաթողիկոսի ընտրություն: Գրիգոր Ե Զարավեժին հաջորդում է Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203)¹⁰, ով երիտասարդ տարիներին նվիրվել էր զինվորական ծառայության, ապա վարել Տարսուսի, Լամբրոնի, Անտիոքի և Կեսարիայի արքեպիսկոպոսությունների հոգևոր առաջնորդի պաշտոնները: Պատմիչ Սմբատ Սպարապետը հետևյալն է նշում նրա մասին. «Ի սոյն թուլին, եղին հայրապետ զտեր Գրիգորիս զկոչեցեալն Ապիրատ, որ էր որդի զորավարին, եղբօր կաթողիկոսացն տեր Գրիգորի և տեր Ներ-

¹⁰ Գրիգոր Զ Ապիրատը ներսես Դ Շնորհալու եղբայր Շահան զորավարի որդին էր:

սիսի, այր իմաստուն և գիտնական, լցեալ աւուրբք և հասեալ ի ծերութիւն բարիոց հովուապետութեամբ...»: Նա կաթողիկոս Է ընտրուում Լևոն իշխանապետի աջակցութեամբ և առանց բուն Հայաստանի հոգևորականութեան համաձայնութեան: Մ. Օրմանյանը Գրիգոր Ապիրատի կաթողիկոս ընտրուելու կապակցութեամբ կարծիք Է հայտնում, որ Լևոն Մեծագործը, հուսախաբ լինելով երիտասարդ կաթողիկոսի գործունեությունից, այս անգամ Էլ ընտրությունը կատարում Է հոգուտ ծերունի հոգևորականի. «Եւ այս ալ Լեւոնին կամքն էր, որ երբ երիտասարդին վրայ դրած ակնկալութեանը մէջ յուսախաբ եղաւ, աչքը դարձուց ծերունիին, իրեն հլու հնազանդ կաթողիկոս մը ունենալու համար...»: Ինչով կարելի էր բացատրել այն հանգամանքը, որ նախկինում Լևոն Բ իշխանապետը որոշակիորեն հաշվի էր առնում բուն Հայաստանի հոգևորականութեան կարծիքը, իսկ այս պարագայում անտեսում Է: Ակնհայտ Է մեկ փաստ, որ սա այն ժամանակաշրջանն Է, երբ հայոց իշխանապետը փորձում էր դառնալ արքա և միջազգային ճանաչում ձեռք բերել: Հենց այդ պատճառով Էլ նա միգուցե ցանկանում էր ժամանակավոր զիջողական քաղաքականություն դրսևորել որոշ դավանաբանական հարցերի վերաբերյալ: Լևոն Մեծագործը լավ էր գիտակցում, որ բուն Հայաստանի հոգևորականութեան կողմից երաշխավորված կաթողիկոսը ոչ մի դեպքում զիջման չէր գնա: Դա էր պատճառը, որ այս պարագայում հայոց իշխանապետը ան-

տեսում է արևելյան վարդապետների կարծիքը: Արևելյան վարդապետները հրաժարվել են ճանաչել Գրիգոր Ապիրատին՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի, և 1195 թ. բուն Հայաստանի կաթողիկոս են ընտրել Բարսեղ Բ Անեցուն:

Գրիգոր 2 Ապիրատի ընտրությանը չմասնակցեցին Հայաստանի հոգևորականները: Նրանք կարծում էին, որ հայոց կաթողիկոսի ընտրության հարցում ներգրավված է Ներսես Լամբրոնացին: Ուստի՝ պահանջեցին Լևոն Մեծագործից գահընկեց անել Գրիգոր Ապիրատին և գահին բազմեցնել Անիի Բարսեղ արքեպիսկոպոսին: Սակայն Էական հաջողության չեն հասնում: Լևոն Բ իշխանապետը, տեսնելով Հայաստանի հոգևորականների բողոքները, սկսեց այս հարցում խուսափողական քաղաքականություն վարել: Նա չէր ցանկանում Գրիգոր 2 Ապիրատին զրկել կաթողիկոսական գահից՝ լավ գիտակցելով, որ Բարսեղ Բ Անեցու կաթողիկոս դառնալով՝ հնարավոր է՝ խնդիրներ առաջանային իր և նրա միջև, ու դժվար թե վերջինս գնար զիջումների: Ահա այդ պատճառով էլ Լևոն Մեծագործը չբավարարեց արևելյան հոգևորականության՝ կաթողիկոսին փոխելու պահանջը, սակայն որպես զիջում Ներսես Լամբրոնացուն հեռացրեց իշխանական պալատից:

Նոր կաթողիկոսի, եկեղեցու և պետության միջև ընդհանուր առմամբ եղել են ջերմ և բարիդրացիական հարաբերություններ: Մասնավորապես հայոց եկեղեցին և ընդհանրապես կաթողիկոսարանը, քաջ գիտակցելով, թե ինչ կա-

րևոր նշանակություն ունի հայոց պետականության վերականգնումը հայության համար, ամեն կերպ աջակցում են Լևոն Բ իշխանապետին՝ թե՛ երկրի ներքին, թե՛ արտաքին քաղաքական հարաբերությունները վարելիս:

Գրիգոր 2 Ապիրատի գահակալության շրջանում բուն բանակցություններ են սկսվում Արևմուտքի միապետների, Յռոմի պապական աթոռի և բյուզանդական կայսրի ներկայացուցիչների հետ՝ ծիսադավանական խնդիրների շուրջ: Լևոն Մեծագործն այդ կարևոր գործի մեջ ներառում է նաև Կիլիկիայի հայկական պետության անվանի հոգևորականների, որոնք իրենց հերթին հուսախաբ չեն անում հայոց իշխանապետին: Շուտով Լևոն Մեծագործը Կոստանդնուպոլիս է ուղարկում հատուկ պատվիրակություն ճանաչված հոգևորական Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ՝ իմանալու Բյուզանդական կայսրությունից արքայական տիտղոս ստանալու պաշտոնական պայմանները: 12-րդ դարի վերջերին թուլացած Բյուզանդիան ձգտում էր քաղաքական և եկեղեցական համաձայնության գալ հայերի հետ: Ալեքսիոս III-ը (1195-1203), զավթելով իշխանությունը, հրաժարվում է կրոնական հալածանքների քաղաքականությունից: Ինչպես տեղեկացնում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին, բյուզանդական կայսրը Լևոնին խորհուրդ էր տալիս արքայական թագ ստանալ ոչ թե Յռոմեական սրբազան կայսրությունից, այլ Բյուզանդիայից, քանի որ Կիլիկյան Յայաստանը վերջինիս ավելի մոտ էր: Սակայն բանակցությունների ընթացքում

վերսկսվում են հայ և հույն եկեղեցիների միջև գոյություն ունեցող դավանաբանական դարավոր վեճերը: Հույն հոգևորականությունն անհաշտ դիրք է գրավում և հայոց եկեղեցուց պահանջում է ընդունել հունական դավանանքի մի շարք կարևոր դրույթներ: Հայոց պատվիրակությունը մերժում է Բյուզանդական կայսրության հոգևորականության պահանջը, որով էլ երկկողմ քաղաքական մերձեցումը ձախողվում է:

Ակնհայտ է, որ անհաջող բանակցությունները չէին կարող նպաստել Բյուզանդական կայսրության և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական մերձեցմանը և Լևոն Մեծագործի ծրագրերին: Նման իրավիճակում Լևոնը չի փորձում հայ հոգևորականությանն ստիպել՝ ընդունելու հույն եկեղեցու դավանանքը, ինչը խոսում է այն մասին, որ հայոց իշխանապետը ևս չէր ցանկանում նահանջել հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքներից: Այդ պատճառով սկսում է բանակցություններ վարել Հռոմի պապական աթոռի հետ: Եվ չի բացառվում, որ դրանք արդեն վաղուց էին ընթանում: Հայտնի է նաև, որ հայոց իշխանապետի հանձնարարությամբ 1197 թ. սեպտեմբերին պապական լեգատ, կարդինալ Կոնրադ Վիտելսբախի մոտ՝ Պտղոմեա ուղարկվեց մի դեսպանություն՝ Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսի գլխավորությամբ: Բանակցություններում կողմերի միջև Լևոն Մեծագործի թագադրության հարցի շուրջ որոշակի համաձայնություն ձեռք բերվեց:

Հայտնի է նաև, որ Կեղեստինոս III պապը (1191-1198), շահագրգռված արևելքում կաթոլիկ եկեղեցու դերի և ազդեցության ուժեղացմամբ, ուրախությամբ ընդառաջում է Լևոն Բ իշխանապետին: Շուտով պապական լեգատ Կոնրադի գլխավորությամբ պատվիրակությունը ժամանում է Կիլիկիա: Կերջիններս Լևոն Մեծագործի համար բերել էին նույնիսկ առյուծանիշ մի դրոշ և պերճափայլ մի թագ: Պատվիրակությունը, կատարելով պապի հրահանգը, հայերից պահանջում է ընդունել կաթոլիկ եկեղեցու մի շարք կետերը և տալ պարտավորագիր՝ այդ մասին: Կիրակոս Գանձակեցին այդ կետերից թվարկում է երեքը՝

1. տերունի և սրբոց տոները կատարել հաստատուն ամսաթվերով, որով վերացվում էր հայոց տոնացույցի յոթնեկական դրությունը,
2. ժամերգությունները կատարել եկեղեցում, այլ ոչ գավթում,
3. Ծննդյան և Հարության ճրագալույցները կատարել ձկով և ձեթով, այլ ոչ կաթնեղենով:
Եվս երկու կետ հիշատակում է միջնադարյան ժամանակագիրներից Ներսես Պալիանենցը.
4. հայ պատանիներին սովորեցնել լատիներեն,
5. հայոց կաթողիկոսը պետք է պարբերաբար նվիրակներ ուղարկեր Հռոմի պապի մոտ, ինչը նշանակում էր հպատակություն և պապական աթոռին:

Ինչպես նկատում ենք, Յոզմի պապական աթոռը բյուզանդացիների նման փորձում էր օգտվել նպաստավոր իրավիճակից և հայոց եկեղեցուց զիջումներ կորզել: Սա հռոմեական կաթոլիկ եկեղեցու կողմից Կիլիկիայի հայկական իշխանությանը ներկայացվող պահանջների սկիզբն էր:

Լևոն Մեծագործի համար ստեղծվում է բավականին ծանր իրավիճակ: Նա ուներ երկու ընտրություն. կամ պետք է ընդուներ հռոմեական պատվիրակների առաջարկը, կամ մերժեր: Այս դեպքում կարող էր հետաձգել իր թագավորական ձգտումները:

Հայոց իշխանապետը կաթողիկոսի և եպիսկոպոսների ժողով է հրավիրում Կիլիկիայի Տարսոն քաղաքում քննելու կաթոլիկ եկեղեցու առաջարկները: Ինչպես և սպասվում էր, ժողովում հայ հոգևորականությունը հրաժարվում է ընդունել Յոզմի պապի ներկայացուցիչների առաջարկը: Կիրակոս Գանձակեցին այդ մասին հետևյալն է նշում. «Եւ նորա ոչ հաւանեցան առնուլ զխնդիրն»:

Սա առաջին դեպքը չէր, երբ հայոց եկեղեցին և պետությունը մերժում էին ուղղափառ կամ կաթոլիկ հոգևորականության ծիսադավանաբանական առաջարկները: Դեպքերի նման ընթացքը շատ չէր կարող զարմացնել Լևոն Մեծագործին, քանի որ նրա համար դա սպասելի էր: Վերջինս քաջ գիտակցում էր, որ նման պատասխանը դժվար թե օժանդակի կաթոլիկ Եվրոպայի կողմից իր թագավորական տիրույթի ճանաչմանը: Ստեղծված իրավիճակում Լևոնը պատրաս-

տակամոլթյուն է հայտնում ստորագրել պապի պատվիրակների առաջարկը և առերես ընդունել այն: Սակայն պապի պատվիրակները չեն բավարարվում ԼԼոնի տված համաձայնությամբ, այլ պահանջում են, որ եկեղեցականները տան իրենց գրավոր համաձայնությունը: Ստեղծված պայմաններում հայոց իշխանապետը կարողանում է համոզել 12 եպիսկոպոսների: Թե ովքեր էին այդ 12 եպիսկոպոսները, ոչ բոլորի անուններն են մեզ հայտնի: Կիրակոս Գանձակեցին դրանց թվում հիշատակում է չորս հոգևորականների՝ Ներսես Լամբրոնացուն, Անտիոքի Չեսվանց կոչված վանքի առաջնորդ Յովսեփին, Յովհաննեսին, ով հետագայում կաթողիկոս դարձավ և Անանիա եպիսկոպոսին: Ամենայն հավանականությամբ ժողովականները համաձայնվել էին միայն այն բանից հետո, երբ հայոց իշխանապետը հավաստիացրել էր, որ ինքը ենթարկվելու է սոսկ խոսքով, այլ ոչ թե գործով: Եվ հնարավոր է, որ պապի պատվիրակները ժողովի մերժումից հետո թեթևացրել են հայոց եկեղեցուն ներկայացվող պահանջները, որի շնորհիվ ԼԼոնը կարողանում է համոզել տասներկու եպիսկոպոսներին՝ տալ իրենց համաձայնությունը: Հավանական է, որ այս տասներկու եպիսկոպոսներն ամենաջերմ հարաբերություններն ունեին ԼԼոնի հետ, և նրանք առերես գնում են դրան, որպեսզի չձախողվի հայկական թագավորության ճանաչման գործընթացը: Նշյալ համաձայնագիրը ընդգրկում էր եկեղեցիների միության հայտարարագիրը, և հայերը ճանաչում էին Ս.Պետրոսի աթոռի

գերագահությունը՝ ընդունելով, որ դավանում են նույն կրոնը, ինչը և Հռոմի եկեղեցին: Բացի այդ, Կիլիկիայում պահպանվելու էին լատինական արքեպիսկոպոսական երկու աթոռներ՝ Տարսուսում և Մամեստիայում, սակայն առանց հայերի նկատմամբ արդարադատություն վարելու իրավունքի: Իրականում հայ առաքելական եկեղեցու կողմից պապականությանը տրված աստվածաբանական զիջումներն ունեին միայն քաղաքական նշանակություն, քանի որ Հռոմկլայի կաթողիկոսարանն ամենևին մտադիր չէր իրապես հրաժարվել իր հավատո հանգանակից:

Պետք է փաստել, որ հայոց եկեղեցին այս շրջանում փորձում է բացահայտ առճակատման չգնալ Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ և ամեն ինչ անում է, որ Կիլիկիայի հայկական իշխանությունը վերածվի թագավորության: Բացի այդ կաթոլիկության ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին խոր արմատներ չունեին: Իշխանական պալատը, բարձր հոգևորականության մի մասը, և հնարավոր է, մեծատուն վաճառականության ուրոշ շերտեր ցանկանում էին քաղաքական և կրոնական կապեր հաստատել խաչակրաց իշխանությունների և պապական աթոռի հետ՝ առանց կտրվելու հայոց եկեղեցու դավանանքից: Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում կաթոլիկության տարածումը հայերի մեջ հայտարարություններից և աննշան փոխառություններից այն կողմ չի անցնում, և հայոց եկեղեցին կաթոլիկ դավանաբանության

ոչ մի դրույթ իրականում չի ընդունում: Այս հանգամանքը միայն ժամանակավոր զիջողական քայլ էր: Այս առնչությամբ շատ դիպուկ է նկատել Լ. Տեր-Պետրոսյանը իր «Խաչակիրները և հայերը» աշխատությունում. «Կեղեստինոս III պապը այնքան միամիտ չէր, որ հավատար հայերի անկեղծությանը, սակայն նա գերադասեց աչք փակել Լևոնի երկակի խաղի վրա, քանի որ նրա համար գլխավորը ոչ թե ակնկալված դավանաբանական զիջումներն էին, այլ նորաստեղծ թագավորության կողմից իր գերիշխանության ճանաչումը: Եվ երկու կողմին էլ սա ձեռնտու էր, քանի որ Յոզուբի պապը շահագրգռված էր իր աթոռի միջազգային հեղինակության բարձրացմամբ, իսկ Լևոնը՝ պապի կողմից իր թագավորական իշխանության և հայոց պետության անկախության պաշտոնական ճանաչմամբ»:

Հարց է առաջանում, թե ինչու Կիլիկիայի ղեկավարությունը բյուզանդացիներին մերժեց, իսկ Յոզուբի կաթոլիկ եկեղեցուն՝ ոչ: Բյուզանդական եկեղեցին ավանդաբար ավելի ուժեղ էր Կիլիկյան Հայաստանում, իսկ կաթոլիկն ավելի թույլ էր ներկայացված և լուրջ վտանգ չէր ներկայացնում: Հետևաբար՝ ավելի կարևոր էին քաղաքական դրդապատճառները, քանի որ նշյալ պատմաշրջանում Կիլիկիայի հայկական պետության համար ավելի կարևոր և շահեկան էր քաղաքականապես և տնտեսապես մեծ ազդեցություն ունեցող արևմուտքի, քան արդեն օրեցօր թուլացող Բյուզանդական կայսրության օժանդակությունը:

Ի վերջո Գրիգոր 2 Ապիրատի կաթողիկոսության շրջա-
նը նշանավոր էր այն կարևոր հանգամանքով, որ Կիլիկիայի
հայոց իշխանապետությունը վերածվում է թագավորության
և միջազգայնորեն ճանաչում ձեռք բերում:

Լևոն Մեծագործի թագադրության հանդեսը տեղի ու-
նեցավ 1198 թ. հունվարի 6-ին Տարսուն քաղաքում: Արքայի
թագադրմանը ներկա էին տասնյակ աշխարհիկ և հոգևոր
անձինք: Միաժամանակ նշենք, որ Լևոն Մեծագործի թա-
գադրումը ժամանակակիցների կողմից գնահատվում էր որ-
պես հայկական թագավորության վերականգնում, որպես
խոշոր քաղաքական իրադարձություն հայոց պատմության
մեջ: Այն կարևոր էր նաև նրանով, որ հայոց եկեղեցու պատ-
մության մեջ ևս բացվում է մի նոր դարաշրջան: Հայտնի է,
թե պետականության բացակայության պայմաններում ինչ-
պիսի մեծածավալ աշխատանք էր կատարում Հայ Առաքելա-
կան Եկեղեցին՝ հաճախ իր վրա վերցնելով պետական կա-
ռավարման գործառույթներ:

Թագադրման ծիսակարգում նույնպես Լևոն Մեծագործը
և Գրիգոր Ապիրատը գիջման գնացին: Թագավորի օժման
արարողությունը կատարեց Գրիգոր Ապիրատը, իսկ թա-
գադրումը իրականացրեց լեգատ Կոնրադ Վիտելսբախը:
Թագադրումից հետո հայոց արքան և կաթողիկոս Գրիգոր
Ապիրատը շնորհակալական նամակներ են գրում կայսրերին
և Հռոմի պապին: Սկզբնական շրջանում Լևոն Մեծագործն
իրեն կոչում էր «թագավոր հայոց աստծո և հռոմեական կայ-

սեր ողորմածությամբ և պապի ծառա», սակայն երբ բոլոր դրացիները ճանաչում են նրան, սկսում է իրեն անվանել Յայաստանի թագավոր «աստծո ողորմածութեամբ»:

Թագավորության հռչակումից հետո Լևոն Մեծագործը շարունակում է համագործակցել Յայ Առաքելական Եկեղեցու հետ, սակայն պապական կուրիային տրված խոստումները չեն իրականացնում: Այս փաստը խոսում է այն մասին, որ հայոց արքան նույնպես հակված էր պահպանելու հայ Եկեղեցու ինքնուրույնությունը:

Յատկանշական է, որ պետություն-եկեղեցի համագործակցությունը մեծապես օգնում է նաև երկրի ներքին կայունության ապահովմանը: Գրիգոր 2 Ապիրատը սատար է կանգնում հայոց արքային և ընդհանրապես թագավորական իշխանությանը բոլոր կարևոր հարցերում:

Նմանատիպ իրավիճակ առաջացավ նաև Կիլիկիայի թագավորության հռչակումից որոշ ժամանակ անց, երբ կաթողիկոսի քեռորդի Յեթում իշխանը, ով Լամբրոնի նշանավոր տիրակալն էր, կենտրոնախույս նկրտումներ դրսևորեց և հրաժարվեց ենթարկվել Լևոն Մեծագործին: Շուտով հայոց արքան ձեռքակալեց Յեթումին և նրա ընտանիքի անդամներին, բայց կաթողիկոսի միջամտությամբ նրանք հաշտվեցին, և Յեթում իշխանին շնորհվեց հայտնի Դրագարկի վանքը: Յետագա տարիներին Յեթում իշխանը և Լևոն Մեծագործը համագործակցեցին իրար հետ:

13-րդ դարի սկզբներին Կիլիկիայի հայկական թագավորությունն աստիճանաբար հզորանում էր, սակայն Յոզմի պապական կուրիային առավելապես հետաքրքրում էր այն հարցը, թե ինչպես իրեն ենթարկի Յոզմկլայի կաթողիկոսարանը:

Այսպես՝ 13-րդ դարի սկզբին լատինամետներն Անտիոքում հիմնադրեցին իրենց պատրիարքությունը: Նրանք մի քանի անգամ փորձեցին իրենց իշխանությանը ենթարկել նաև Ամենայն հայոց կաթողիկոսարանը: Նմանատիպ քաղաքականությունը չէր կարող դժգոհություն առաջ չբերել թե Յոզմկլայի կաթողիկոսարանի, թե Կիլիկիայի քաղաքական շրջանակներում: Շուտով գործին միջամտեց հայոց արքան, ով կտրականապես մերժեց հայոց եկեղեցին Անտիոքի պատրիարքությանը ենթարկելու առաջարկը: Բացի այդ, ստեղծված պայմաններում Լևոն Մեծագործը դիմում է Յոզմի պապին, որպեսզի Անտիոքի լատին պատրիարքը չխառնվի հայ եկեղեցու և պետության ներքին գործերին: Եվ ահա Յոզմի պապ Իննուկենտիոս III-ը, քանի որ Լևոն Մեծագործին դիտում էր որպես խաչակիրների հնարավոր դաշնակից, ընդառաջեց հայոց արքայի պահանջին: 1202 թ. Իննուկենտիոս III պապը հաստատում է Լևոն Ա արքայի օրինական պահանջը: Այս հարցում հայոց արքան և եկեղեցին հանդես են գալիս միասնական ուժերով: Նշենք նաև, որ հետագա տասնամյակներին էլ Անտիոքի պատրիարքության կողմից հայոց կաթողիկոսարանի նկատմամբ նմանատիպ փորձեր կա-

տարվեցին, բայց վերջիններս Էական հաջողություններ չունեցան:

Փաստորեն այդ քայլով հայոց արքան ընդգծում էր, որ հայ եկեղեցին ինքնուրույն է և չի կարող ընդունել Յոզմի պապի, ինչպես նաև Անտիոքի պատրիարքության գերագահությունը: Խոսելով Լևոն Մեծագործի կառավարման և եկեղեցական քաղաքականության մասին՝ պատմիչ Միքայել Ասորին նշում է, որ վերջինս չմոռացավ նաև քրիստոնեական եկեղեցու հոգևոր տերերին՝ ապահովելով նրանց գյուղերով, ագարակներով և կալվածքներով: Այլ խոսքով ասած՝ հայոց արքան փորձում էր տևտեսապես ամրապնդել եկեղեցին: Այնուհետև շարունակելով իր միտքը՝ պատմիչը նշում է, որ արքան զբաղվում էր նաև եկեղեցաշինությամբ և այլ գործերով. «Իսկ պսակաւորն Յայոց Լևոն բարուք կարգաւորէր զաշխարհն իւր... շինելով բազում վանօրայս, և զյառաջագոյն շինեալսն ընդարձակելով, առատապէս տալով զպէտս նոցա այլ արձանագրով սեփականէր նոցա գիւղս և ագարակս, այգիս և անդաստանս...»: Եկեղեցիների ու վանքերի օգտին Լևոն Մեծագործի հողային նվիրատվությունների մասին գրել են նաև միջնադարի նշանավոր հեղինակներ Սմբատ Սպարապետը, Սամուել Անեցու պատմության շարունակողը, Վահրամ Րաբունին և այլ պատմիչներ: Յայոց արքայի նման քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տասնամյակներին:

Յայտնի է նաև, որ Գրիգոր Ապիրատն իր կյանքի վերջին տարիներին փորձել է Ամենայն Յայոց կաթողիկոսարա-

նը Հռոմկլայից տեղափոխել մայրաքաղաք Սիս, որը, սակայն, չի ստացվել: Շատ հավանական է, որ Նրան այդ քայլին դրդել է հենց Լևոն Մեծագործը, քանի որ Նրա համար ավելի շահեկան կլիներ Ամենայն Հայոց կաթողիկոսարանը տեսնել իր պետության մեջ՝ մայրաքաղաք Սսում, այլ ոչ թե Այուբյանների ենթակա տարածքում: Թե ինչու չի ստացվում հայոց կաթողիկոսարանի տեղափոխումը, դժվար է միանշանակ ասել, բայց մեկ բան ակնհայտ է. գտնվելով Կիլիկյան Հայաստանի սահմաններից դուրս՝ կաթողիկոսն ու Նրա մերձավոր շրջապատը որոշակի ինքնուրույնություն ունեին, իսկ Կիլիկիայի հայկական թագավորության տարածք տեղափոխվելով ավելի կուժեղանար թագավորական իշխանության ազդեցությունը հայոց կաթողիկոսարանի նկատմամբ:

Կաթողիկոս Գրիգոր 2 Ապիրատը մահանում է 1203 թ. խոր ծերության հասակում, որով ավարտվում է Պահլավունիների տան աթոռակալությունը, որն սկսվել էր դեռևս Գրիգոր Բ Վկայասերի աթոռակալությամբ և տևել մոտավորապես 140 տարի¹¹: Գրիգոր 2 Ապիրատը թաղվեց Արքակաղնի վանքի գերեզմանոցում:

Լևոն Մեծագործը Պահլավունի կաթողիկոսների դեմ քայլեր է ձեռնարկել դեռևս Կիլիկիայում իշխանապետ եղած ժամանակաշրջանում: Հետաքրքիր է, որ Պահլավունի կաթողիկոսներին հաջորդած Հովհաննես 2 Սսեցին Հռոմկլայում ոչնչացրել և ձուլել է տվել Պահլավունի կաթողիկոսների ոսկե և արծաթե եկեղեցական ճոխ զարդերը, խաչերը, անգամ ձեռագրերի թանկագին կրկնակազմերը, որի մասին գրում է ակամատես Սմբատ Սպարապետը, Պատմություն, Փարիզ, 1856, էջ 114-115:

2.6 Ներսես Լամբրոնացի

Մինչև նոր կաթողիկոսի ընտրությանը և գործունեությանը անդրադառնալը կցանկանայինք մի փոքր հիշատակում կատարել Կիլիկյան Հայաստանի մի նշանավոր հոգևորականի՝ Ներսես Լամբրոնացու մասին, քանի որ վերջինս լուրջ դերակատարում ուներ Կիլիկիայի հայոց իշխանապետության թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր ոլորտներում:

Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում հայ հոգևորականության շրջանում հայոց կաթողիկոսական աթոռի ամենանշանավոր հավակնորդներից մեկը Ներսես Լամբրոնացին էր: Այնքան ուժեղ է եղել այս հոգևորականի ազդեցությունը և համբավը Կիլիկյան Հայաստանում, որ արևելյան հայրերը վախենում էին, որ գուցե նա դառնա Ամենայն հայոց կաթողիկոս: Ընդհանրապես թե՛ Կիլիկիայում և թե՛ բուն Հայաստանում եկեղեցական հայրերի մեջ դժվար է ցույց տալ մի այնպիսի նշանավոր եպիսկոպոսի կամ էլ ընդհանրապես հոգևորականի, որ այդ տարիքում ունենար այդքան մտավոր զարգացում, եռանդ և ազդեցություն, համակրանք, ինչպիսին վիճակվել էր Ներսես Լամբրոնացուն: Կյանքի վերջին տարիներին նա աշխատում էր Լևոն Մեծագործի արքունիքում որպես թարգմանիչ և խորհրդական, ինչպես նաև հասցրել էր բավականին մտերմանալ նրա հետ: Այդ է վկայում այն փաստը, որ Լևոն Մեծագործը մի շարք կարևոր գործեր հենց նրան էր հանձնարարում: Ինչպես արդեն նշեցինք, Ներսես Լամբրոնացին մեծ դերակատարում ունեցավ

հայոց արքայի թագադրման համար տարվող բանակցություններին, ինչպես նաև մի շարք կարևոր հարցերի: Բայց այսքանով էլ չէր սահմանափակվում նրա գործունեությունը:

Չայտնի է, որ Ներսեսը, չափազանց հարուստ մարդ լինելով, իր գումարները բաժանեց երեք մասի: Մի մասը ծախսում էր՝ վանքեր և եկեղեցիներ կառուցելու և վերանորոգելու համար, մյուս մասով հաց ու բակլա էր գնում, ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրերին եկեղեցու դռանը կերակրում էր շուրջ 300 կարիքավոր և աղքատ մարդկանց, իսկ երրորդ մասով ձեռք էր բերում գրքեր, ընդօրինակել ու ծաղկել տալիս ձեռագրեր և նվիրում Կիլիկիայում գտնվող այս կամ այն վանքին ու գրադարանին: Իր կյանքի վերջին շրջանում նա Լևոն Մեծագործի թարգմանիչը և խորհրդականն էր, սակայն Սանահինի վանքի վանահայր Գրիգոր Տուտեորդու և Չաղպատի վարդապետ Դավիթ Քոբայրեցու բողոքագրերին ընդառաջելով՝ արքան նրան հեռացրեց արքունիքից, ինչը հոգեկան տվայտանքներ պատճառեց այդ նշանավոր գործչին և հավանաբար պատճառ դարձավ նրա վաղաժամ մահվան:

Իսկ որոնք էին պատճառները, որոնց հետևանքով Ներսես Լամբրոնացու և արևելյան վարդապետների հարաբերությունները բարդացել էին: Գլխավոր պատճառն այն էր, որ Լամբրոնացին Չայաստանում դիտվում էր որպես լատինամետ գործիչ, ով ամեն պահ կարող էր զիջումների գնալ կաթոլիկ եկեղեցուն: Նա նաև չափազանց խելացի անձնա-

վորություն էր և հայոց կաթողիկոսի իրական թեկնածու: Բացի այդ, վերջինս, ինչպես արդեն նշել ենք, դեմ էր արևելյան վարդապետների առաջ քաշած թեկնածուի՝ Գրիգոր Ե Քարավեժի թեկնածությանը: Ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Լամբրոնացին առանց կաթողիկոսի համաձայնության որոշ քայլեր կատարեց: Նա Հռոմի պապական կուրիայի հետ որոշ դավանաբանական խնդիրներում փոխզիջման կողմնակից էր: Եվ վերջապես Լամբրոնացին կողմ էր եկեղեցու կողմից ընտանեկան հարաբերություններին վերաբերող նորմերում որոշակի փոփոխություններ կատարելուն:

Նշենք նաև, որ Ներսեսը Լևոն Մեծագործին ուղղված նամակում գրում էր, թե ինքը կրոնական ծեսերի հարցում այնքան է մեղավոր իր նորամուծությունների, հռոմեական եկեղեցու հանդեպ իր հակվածության հարցերում, որքան հայոց տիրակալն իր մեծատոհմիկների և պալատականների համար եվրոպական տիտղոսների գործածման, պալատում ֆրանկների կենցաղի և սովորույթների ներդրման համար:

Հավանաբար նմանատիպ համեմատությունն իր մեջ որոշակի ճշմարտություն է պարունակում, քանի որ նշյալ ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում արևմտյան ազդեցությունը դրսևորվում էր ոչ միայն կրոնական ոլորտում, այլև կենցաղում և քաղաքական կյանքում: Եվ 13-րդ դարերում այդ ազդեցությունը առավել խորացավ:

Հայտնի է, որ ըստ հայ եկեղեցու կանոնների՝ այրիներին և ամուսնալուծվածներին երրորդ անգամ ամուսնանալ չէր թույլատրվում: Լամբրոնացին՝ որպես Տարսուսի թեմի առաջնորդ, տվեց երրորդ անգամ ամուսնանալու կարելիության հրաման: Իսկ ինչ դրդապատճառներով ստիպված եղավ նա դիմել այդ քայլին: Պատճառները միայն աշխարհիկ էին և հայրենասիրական: Բազմաթիվ այրիներ և ամուսնալուծներ կային, որոնք երկրորդ անգամ ամուսնանալուց հետո նույնպես այրիացել էին և դժբախտացել: Ներսես Լամբրոնացին տվեց այդ հրամանը՝ նկատի ունենալով այրիների մեծ քանակը, նրանց երիտասարդ հասակը, սակավաթիվ ծնունդները և ազգաբնակչության թույլ աճը:

Ահա հիմնականում սրանք էին այն հիմնական խնդիրները, որոնց պատճառով Ներսես Լամբրոնացին հեռացվեց Սսի արքունիքից, իսկ որոշ ժամանակ անց կնքեց իր մահկանացուն:

Ներսես Լամբրոնացին հայ մատենագրության մեջ կայուն տեղ է գրավում իր չափածո և արձակ ստեղծագործություններով: Արձակ գործերից նշանավոր է նրա «Ատենաբանութիւնը», իսկ չափածոյից՝ միջնադարում շատ հայտնի էին շարականները, տաղերն ու ներբողները: Ներսես Լամբրոնացին սակայն արդյունավոր եղավ մեկնողական արվեստում շնորհիվ պատարագի, սաղմոսների, Սողոմոնի, տասներկու մարգարեների և այլ մեկնությունների: Վերջինս նաև բազմաթիվ թարգմանությունների հեղինակ է, որոնց մեջ հե-

տաքրքրական են հատկապես օրենքների թարգմանությունները (քաղաքացիական, զինվորական և այլն):

Այս ամենից զատ Ներսես Լամբրոնացին 12-րդ դարի վերջին քառորդին յուրօրինակ դեր է կատարել գրական կյանքը կազմակերպելու, անցյալի գրական գործերը վերարժևորելու և նոր գրողներին ոգեշնչելու գործում: Կարելի է ասել, որ իր այդ դերի շնորհիվ նա նոր կյանք ու նոր արժեք է հաղորդել կիլիկյան իրականության մեջ գրեթե անծանոթ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը՝ առաջին անգամ բարձր գնահատականի արժանացնելով հեղինակին և գրելով նրա վարքը:

2.7 Յովհաննես Ստեցի կաթողիկոսի գործունեության առաջին շրջանը:

Գրիգոր 2 Ապիրատի մահվանից հետո թափուր մնացած կաթողիկոսական աթոռի երկու հիմնական թեկնածու կար. առաջինը Յովհաննես Ստեցին էր, ով արտահայտում էր Կիլիկիայի հոգևորականության շահերը և հանդիսանում էր Լամբրոնի իշխան Յեթումի հորեղբոր տղան: Երկրորդը՝ Սեբաստիայի Անանիա արքեպիսկոպոսն էր, որը վայելում էր Իկոնիայի սուլթանի աջակցությունը, ում համար անչափ կարևոր էր իր իշխանության սահմաններում գտնվող Սեբաստիա քաղաքի թեմակալին տեսնել որպես Ամենայն հայոց կաթողիկոսի:

Տեղի ունեցավ նոր կաթողիկոսական ընտրություն: Այդ ընտրության մասին պատմիչ Յովհաննես Սեբաստացին

գրում է. «Յայնժամ ժողովեալ Լևոնի զեպիսկոպոսունս ազգիս մերոյ՝ խորհուրդ արար վասն ընտրութեան Նոր կաթողիկոսի. կեսք ասէին ընտրել զԱնանիա եպիսկոպոս Սեբաստիոյ, որ համարիւր լինել յազգականութենէ Պետրոսի Գետադարձին և Էր հաճոյ յաչս բազմաց, կեսքէ զՅովհաննէս արքեպիսկոպոս Սըսոյ: Եւ ի ծագել մեծի տարածայնութեան՝ հրաման ետ Լևոն արքայ ձեռնադրել զՅովհաննէս, որ և Էր ընտանի թագաւորին եւ սիրելի պալատականացն, այր արքայակերպ եւ փառացի անձամբ, եւ հաւանեալ այնմ ժողովելոցն՝ կատարեցին ըստ բանի արքային: Եւ զնացեալ Նստաւ Յովհաննէս յաթոռ կաթողիկոսութեան ...»:

Ինչպէս տեսնում ենք, կաթողիկոսական աթոռի համար մղվող մրցակցությունը հավասար ձայներով է ընթանում, և միայն Լևոն Մեծագործի միջամտության շնորհիվ հայոց կաթողիկոս է ընտրվում Յովհաննէս արքեպիսկոպոսը (1203-1221), ով սերում էր Յեթումյանների ընտանիքից: Եվ սա բնական էր, քանի որ հայոց արքան կաթողիկոսական աթոռին կցանկանար տեսնել մի այնպիսի անձնավորության, ով կատարեր իրեն երկրի կառավարման գործերում: Յովհաննէսը Նախապես եղել է Արքակաղնի և Դրազարկի վանքերի վանահայրը, այնուհետև ընտրվել մայրաքաղաք Սսի արքեպիսկոպոս: Նա իր գահակալման ժամանակաշրջանում գումարներ է հատկացրել Յոռմկլայի բերդի ամրացման համար: Նոր կաթողիկոսը եղել է հայկական եկեղեցու հնավանդ սովորույթների պահպանության ջատագով, վերացնել է տվել

չափազանց հարուստ և զարդարուն եկեղեցական սպասքները, որ հայերը Պահլավունիների կաթողիկոսության շրջանում սկսել էին օգտագործել լատինների նմանությամբ: Հովհաննես Սսեցու ընտրությունը չի ընդունվում Սեբաստիայի Անանիա արքեպիսկոպոսի կողմից, որը իրեն համարում էր կաթողիկոսության հիմնական թեկնածու:

Սկզբնական շրջանում հայոց արքայի և Հովհաննես կաթողիկոսի հարաբերությունները եղել են բավական ջերմ, որի ապացույցն են Լևոն Մեծագործի կողմից տրված արտոնությունները և կալվածքները Հայ Առաքելական Եկեղեցուն, սակայն որոշ ժամանակ անց դրանք բարդանում են: Պատճառը Լևոն Մեծագործի կողմից անհավատարմության մեղադրանքով Հովհաննես Սսեցու քրոջորդի Կոստանդին Կամարտիաս իշխանի և Նրա որդիների՝ ճուլիսի ու Պաղտինի բանտարկությունն էր: Հովհաննես կաթողիկոսը համոզված լինելով, որ իր ազգականներն անմեղ են, հայոց արքայից պահանջում է ազատ արձակել Նրանց: Հայոց արքան մերժում է կաթողիկոսի միջնորդությունը: Դրանից հետո կաթողիկոսը վրդովվում է, քաշվում Հռոմկլայի կաթողիկոսարան և այլևս չի ցանկանում Լևոն Մեծագործի հետ համագործակցել:

Վեճն այն աստիճան է բարդանում, որ հայոց արքան հրաժարվում է ճանաչել Հովհաննեսին՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի, և առաջ է քաշում Նոր հայրապետի՝ Մամեստիայի արքեպիսկոպոս Դավթի թեկնածությունը:

«Թագաւորն Լեւոն յաղագս պատճառի ինչ իրք կալաւ զտե-
լաստտիօսն Յեռի, և զորդիս նորա զԿոստանց Կոմարտի-
ասն և Ճօսին և զՊաղտինն և եղ ի կապանս և ի բանտի: Եւ
Յեռի փեսայ էր տեր Յոհանիսի կաթողիկոսին հայոց...և
յայսմանէ եղել խռովութիւն ընդ թագաւորն Լեւոն և ընդ կա-
թողիկոսն տեր Յոհանէս, և այնքան մեծացավ ատելութիւն ի
մեջ նոցա՝ մինչ զի ի բաց մերժեաց զնա թագաւորն և առաջ-
նորդքն և իշխանքն Կիլիկեցոց. և եղին հակառակ նմա
զարքեպիսկոպոսն Սսայ և առաջնորդ Արքակաղևոյն զտեր
Դաւիթ կաթողիկոս հայոց»:

Այսպիսով՝ Յովհաննէս կաթողիկոսի կենդանութեան օ-
րոք՝ 1207 թ. Սիս քաղաքում հաստատվում է նոր կաթողի-
կոս Դավիթ Գ Արքակաղևեցին, ում փաստացի տրված էր մի-
այն Կիլիկիայի հայկական թագավորութեան տարածքում ե-
կեղեցիների ղեկավարման իրավունքը: Ինչ վերաբերում է
Յովհաննէս կաթողիկոսին, ապա պետք է նշել, որ հայոց
հայրապետը միառժամանակ մնում է իր նստավայրում՝
Յոռմկլայի բերդաքաղաքում, և շարունակում աթոռակալու-
թյունն իր իշխանութեան փոքրիկ տարածքում:

Փաստորեն արտառոց իրավիճակ է ստեղծվում պետու-
թեան և եկեղեցու հարաբերություններում: Ստեղծված պայ-
մաններում մի որոշակի ժամանակաշրջան Յոռմկլայի կաթո-
ղիկոսարանի և Կիլիկիայի հայկական թագավորութեան
միջև կտրվում է կապը:

Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում սա արդեն երկրորդ դեպքն էր, երբ հայոց արքան լուրջ ընդհարում է ունենում եկեղեցու ղեկավարի հետ:

Յովհաննես Սսեցին, ով ժամանակին Լևոն Մեծագործի հրամանով բերման էր ենթարկել հայոց կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժին, այժմ ինքն էլ հայտնվում է խիստ աննպաստ իրավիճակում: Ինչ վերաբերում է Դավիթ Արքակաղնեցու կառավարմանը, ապա պետք է նշել, որ Նրա աթոռակալման մասին միջնադարյան աղբյուրներում բավարար տեղեկություններ չեն պահպանվել, բայց ամենայն հավանականությամբ վերջինս համերաշխ է եղել Կիլիկիայի հայոց արքայի հետ և աջակցել է վերջինիս պետական-քաղաքական կառավարման գործերում:

2.8 Չաքարե ամիրսպասալարի և եկեղեցու հարաբերությունները:

Հայտնի է նաև, որ Մեծ Հայքի բարձրադաս հոգևորականները և հյուսիսարևելյան Հայաստանում իրենց ինքնավար իշխանությունը հաստատած Չաքարյաններն էլ իրենց հերթին 13-րդ դարի սկզբներին սիրահոժար ճանաչում էին Լևոն Մեծագործի թագավորական իրավասությունները և հարաբերություններ են ունեցել հայոց արքայի հետ:

Այդ հարաբերություններում խիստ ուշագրավ դրվագներից է Չաքարե Չաքարյանի կողմից մեր եկեղեցու ծիսակարգի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը: Խնդիրը

այն է, որ պատերազմների ժամանակ վրացական բանակում պատարագը մատուցում էին շարժական սեղանի վրա: Յայերի մոտ նման ավանդույթ չկար: Եվ ահա հյուսիսային Յայաստանի իշխանապետ Չաքարե ամիրսպասալարը իր խոստովանահայր Մխիթար Գոշի խորհրդով հատուկ դեսպանությամբ նամակ է ուղարկում Ամենայն հայոց կաթողիկոսին ու Լևոն թագավորին՝ խնդրելով թույլ տալ իրեն ռազմական արշավանքների ժամանակ վրացիների նմանությամբ գործածել պատարագի շարժական սեղան, ինչպես նաև մեր եկեղեցու ծիսակարգում մոցնել որոշ փոփոխություններ, որոնց շնորհիվ իբր կմեղմանային հայ-վրացական եկեղեցական տարածայնությունները: Յայոց արքայի նախաձեռնությամբ Կիլիկիայի մայրաքաղաք Սիս հրավիրեցին մի շարք եպիսկոպոսների, որտեղ հրավիրված ժողովում Էլ լսեցին արծարծվող խնդիրը: Այդ ժողովը քննարկեց թե՛ Չաքարե ամիրսպասալարի բարձրացրած խնդիրը և թե՛ այլ կարևոր կրոնաեկեղեցական ու քաղաքական հարցեր: Ու թեև միջնադարյան սկզբնադրյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել վերը նշված ժողովի և նրանում ընդունած որոշումների վերաբերյալ, այնուամենայնիվ Կիրակոս Գանձակեցու տեղեկություններից պարզ է դառնում, որ հիշյալ ժողովը բավարարել է Չաքարեի խնդրանքը և հետևյալ որոշումը կայացրել հետևյալ կերպով.

1. պատարագը մատուցել դպիրի և սարկավագի սպասավորությամբ,

2. Սուրբ Աստվածածնի ավետյաց տոնը տոնել ապրիլի 6-ին, շաբաթվա ինչ օր որ պատահի, իսկ նրա փոխման տոնը օգոստոսի 15-ին, ինչ օր որ ընկնի. Սուրբ Խաչի տոնը տոնել սեպտեմբեր ամսի 14-ին, ինչ օր համընկնի,
3. Սուրբ հայտնության և Չատկի ճրագալույցի պասը պահել մինչև երեկո և ոչ մի բանով չլուծել, բայց միայն ձկով ու ձեթով,
4. ընդունել Փրկչի ու բոլոր սրբերի պատկերների նկարահանությունը ու չմերժել դրանք իբրև հեթանոսական պատկերներ,
5. պատարագ մատուցել նաև ողջերի համար,
6. կրոնավորները միս չպետք է ուտեն,
7. ձեռնադրել դպիր, ապա շատ օրեր հետո՝ սարկավագ, իսկ ապա չափահաս ժամանակ՝ քահանա,
8. միաբան մնալ վանքերում ու սեփական իրեր չստանալ:
Բացի այդ, կաթողիկոսը Չաքարեին է ուղարկում գմբեթարդ եկեղեցաձև վրան, մարմարյա շարժական սեղան և պատարագի սպասքեղեն:
Փաստորեն այս ժողովում հայոց արքայի և կաթողիկոսի ուղարկած պատասխանները վկայում են, որ նրանք ձգտել են ամրացնել բարեկամական կապերը Չաքարյանների՝ Յյուսիսային Չայաստանի այդ ազդեցիկ իշխանական ընտանիքի հետ: Եվ հայոց արքան եկեղեցական քաղաքականությանը հավանություն է տվել ըստ երևույթին նաև նրա համար, որ դա կարող էր ավելի ամրացնել հայ ու վրաց ազնվա-

կանության ռազմական ու քաղաքական համագործակցությունը և նպաստել Փոքր Ասիայի սելջուկների դեմ վրաց պետության և Կիլիկյան Հայաստանի ընդհանուր պայքարին:

Չաքարեն ստանալով Սսի վերոնշյալ և ժողովի որոշումները շատ ուրախացավ, բայց դրանք բուն Հայաստանում արևելյան վարդապետների կողմից հանդիպեցին մեծ ընդդիմության, որի գլուխ Սանահնի, Հաղպատի նշանավոր վանքերի հոգևորականներն էին՝ Դավիթ Քոբայրեցու և Գրիգոր Տուտեորդու գլխավորությամբ: Այդ նորամուծությունները կիրառելու համար Չաքարեն հարկադրված եղավ իրար հետևից գումարել երեք ժողով՝ Լոռեի, Անիի և Գետականի, բայց այդպես էլ չկարողացավ իր գորեղ կամքը պարտադրել ավանդապաշտ արևելյան վարդապետներին ու վերոհիշյալ դրույթները գործածել Հայաստանի եկեղեցիներում: Միայն բավարարվեց դրանց մի մասը լույս բանակում գործածելով:

2.9 Հայոց եկեղեցին Հովհաննես Սսեցու

աթոռակալման վերջին շրջանում:

Վերադառնալով Կիլիկիայում տիրող եկեղեցաքաղաքական իրավիճակին՝ պետք է նշել, որ լարված իրավիճակը պետության և կաթողիկոսարանի միջև շարունակվեց մի քանի տարի՝ մինչ Դավիթ Արքակաղնեցու մահը:

Դավիթ Արքակաղնեցու մահից հետո Դրագարկի վանահայր Հեթումը գնաց Հռոմկլա՝ Հովհաննես կաթողիկոսի մոտ, և համոզեց նրան հաշտվել հայոց արքայի հետ: Չի բա-

ցառվում նաև, որ Յեթումի կատարած քայլի նախաձեռնողը լինելու հայոց արքան, որը հավանաբար, ցանկացել էր հաշտվել կաթողիկոսի հետ:

Այսպիսով՝ 1211 թ. Դավթի մահից հետո, կաթողիկոսական աթոռը կրկին տրվում է Յովհաննեսին. «ՈԿ 1211 վաղջանեցաւ տէր Դավիթ և դարձեալ եղև կաթողիկոս Յայոց տէր Յովանէսն»¹²:

Յաշտության շնորհիվ հայոց արքան էլ բանտից ազատում է Յովհաննես կաթողիկոսի ազգականներին, որով էլ վերջ է դրվում նրանց միջև առաջացած թշնամանքին: Թեև հայոց արքան և կաթողիկոսը հաշտվում են, և Յովհաննեսը տեղափոխվում է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք, այնուամենայնիվ Ամենայն հայոց կաթողիկոսարանը շարունակում է մնալ Յոռմկլա բերդաքաղաքում: Նրանց հաշտությունից հետո հայոց արքայի հրամանով կաթողիկոսից բռնազավթած գյուղերը և հողային տարածքները հետ են վերադարձվում նրա օրինական տիրոջը: Կաթողիկոսի և Լևոն Մեծագործի հարաբերությունները այնքան են բարելավվում, որ Յայոց հայրապետը դառնում է արքայի մանկահասակ դստեր՝ Չաբելի երեք խնամակալներից մեկը: Իսկ քանի որ մոտավորապես 1218 թ. մահացել էր Յեթում-Յեռնի, ով Դրազարկի վանահայրն էր, հայոց արքայի կարգադրությամբ այդ նշանավոր վայրը նույնպես հանձնվում է կաթողիկոս Յովհաննեսի տնօրինությանը:

¹² Որոշ հետազոտողներ նշում են 1212 թվականը:

Հայտնի է նաև, որ Լևոն Մեծագործն իր կառավարման ժամանակաշրջանում հովանավորում և տնտեսական օժանդակություն էր ցույց տալիս մեծ թվով վանքերի և եկեղեցիների: Պատահական չէ, որ 12-13-րդ դարերի հիշատակարաններն ու մատենագրական սկզբնաղբյուրները բավակապես լին մեծ գովասանքով են խոսում ժամանակի նշանավոր գործչի՝ եկեղեցաշինության մասին: Նրա օրոք մայրաքաղաք Սսում կառուցվում են Ս. Էջմիածին կաթողիկեն, Ս. Մարինե և Ս. Աստվածածին (այստեղ է ամփոփվել Լևոնի մարմինը) եկեղեցիները: Բացի այդ՝ սկսած Լևոն Մեծագործից՝ Կիլիկիայի վանքերին կից բացվում են դպրատներ և վարժարաններ, որոնց գործունեությունը շատ կարևոր էր պետության հետագա զարգացման համար: Սամուել Անեցու երկը շարունակողներից մեկը նշում է. «Լևոն Բ կարգեաց տուն վարդապետաց վասն վարժելոյ զմանկունս սուրբ ուխտն Մեծքար կոչեցեալ և որ Լևոնը թաղեցաւ ի վանք Մեծքար կոչեցեալ զոր իւր իսկ էր շինեալ»: Իսկ Միքայել Ասորին տեղեկացնում է, որ հայոց արքան, բացի հողային նվիրատվություններից, ռոճիկ էր տալիս նաև Կիլիկիայում բնակվող շատ հոգևորականների: Հայոց թագավորը հոգևորականներին ընծայել է բազմաթիվ գյուղեր և ագարակներ: Բացի այդ, Լևոն Մեծագործը տիրույթներ էր հասկացրել անգամ Կիլիկիայի հայկական թագավորությունում գտնվող օտար վանքերին ու եկեղեցիների եպիսկոպոսներին, քանի որ հայկական պետության տարածքում նրանք ևս գործունեություն էին ծավալում,

և որոնց մասին խոսում են միջնադարի թե՛ հայ և թե՛ օտարազգի մատենագիրները:

Մասնավորապես ընդարձակ հողեր ունեին Սսի, Մամեստիայի, Անարգաբայի և Տարսուսի արքեպիսկոպոսությունները: Յ. Ոսկյանը, որ ուսումնասիրել է թե՛ Յայաստանի և թե՛ Կիլիկիայի հայկական թագավորության վանքերը, նշում է, որ միայն վերջինում կար շուրջ 150 վանք ու եկեղեցի: Բացի տնտեսական աջակցությունից, Լևոն Մեծագործը Կիլիկիայի հոգևորականությանը հսկայական արտոնություններ է տալիս նաև արքունիքում և այլ ոլորտներում: Յայտնի է, որ Լևոն Մեծագործի՝ արքունիքում մի շարք կարևոր պաշտոններ և լիազորություններ տրվում էին երկրի առավել ազդեցիկ և խելացի հոգևորականների, ինչպիսիք էին, օրինակ, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Ապիրատը, Յովհաննես 2 Սսեցին և ուրիշներ: Կիլիկիայի հայկական թագավորությունում գործող Սսի արքեպիսկոպոսականատյանի ղեկավարումը, նույնպես թողնվեց հոգևորականների իրավասությանը: Դրա ղեկավարումը, որպես կանոն, հանձնվում էր Սսի արքեպիսկոպոսին: Եվ վերջապես արքայի որոշմամբ հայոց թագավորության կառավարման համակարգում կանցլերի (ջանցլեր) բարձր պաշտոնը, որի զբաղեցնողը համակարգում էր երկրի արտաքին քաղաքականության ոլորտը, Լևոն Մեծագործը հանձնեց հոգևորականներին: Յիմնականում այդ կարևոր պաշտոնը զբաղեցնողը պետք է լիներ առավել գրագետ և բանիմաց անձնավորու-

թյուն, որը անպայման պետք է իմանար նաև օտար լեզուներ:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ Լևոն Մեծագործն իր կառավարման ողջ ժամանակաշրջանում, մի կողմից, համագործակցում էր Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի, Կիլիկիայում թեմերի առաջնորդների և հատկապես Ամենայն Հայոց կաթողիկոսների հետ՝ նրանց մասնակից դարձնելով պետական-քաղաքական կառավարման բազմաթիվ ոլորտների գործունեությանը, բայց, մյուս կողմից էլ, ժամանակ առ ժամանակ ճնշումներ էր գործադրում նրանց վրա իրեն հուզող հարցերը լուծելու համար: Եվ վերջապես, ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Լևոն Մեծագործն իր կառավարման ընթացքում ընդհանուր առմամբ թույլ չտվեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին որևիցե օտար նվիրապետական կառույցի դավանաբանական զիջումներ կատարի, այլ խոսքով ասած՝ շեղվի իր դարավոր ավանդույթներից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 13-ՐԴ ԴԱՐՈՒՄ.

ՀՈՈՄԿԼԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

3.1 Կոստանդին Ա Բարձրբերդցին՝ կաթողիկոս:

Սսի 1243 թվականի եկեղեցական ժողովը:

Կաթողիկոս Հովհաննես Սսեցու մահից հետո առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Հիմնական թեկնածուները երկուսն էին, որոնցից առաջինը Գրիգոր Սկևռացին էր, ով Լևոն թագավորի խոստովանահայրն էր, իսկ մյուսը Կոստանդին պայլի հովանավորությունը վայելող Կոստանդին Ա Բարձրբերդցին (1221-1267 թթ.): Զանի որ նշյալ ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորությունում մեծ էր Կոստանդին պայլի ազդեցությունը, հետևաբար հայոց հայրապետական աթոռին բազմեց հենց նրա համակրանքը վայելող թեկնածուն: Նա դարձավ Հայ Առաքելական Եկեղեցու ամենաերկարամյա ղեկավարներից մեկն՝ աթոռակալելով մոտավորապես 46 տարի: Վերջինիս ղեկավարման տարիներին մի շարք կարևոր դեպքեր տեղի ունեցան թե՛ Կիլի-

կիայի հայկական թագավորությունում և թե՛ բուն Հայաստանում:

Կոստանդին Ա Բարձրբերդցին ժամանակին սովորել էր Միհրում և Հռոմկլայի կաթողիկոսարանում: Նա մշտապես վարել է երկրի ամրապնդման և հզորացման, հայ եկեղեցու միաբանության, ինքնուրույնության պահպանման քաղաքականություն: Կաթողիկոսը իր աթոռակալման սկզբնական շրջանում՝ 1220-ական թվականներին, ավարտին հասցրեց Սսի Սուրբ Սոֆյա եկեղեցու կառուցումը:

Կոստանդին Բարձրբերդցին ակտիվ դերակատարում ունեցավ նաև Կոստանդին պայլի որդու՝ Հեթումի և Չաբել թագուհու ամուսնության հարցում: Հայտնի է, որ Կիլիկիայի արքա Ֆիլիպի անհաջող կառավարումից և նրա բանտարկությունից հետո Կոստանդին պայլը Կիլիկիայի հայ ավագանու առաջ հարց բարձրացրեց՝ իր որդուն ամուսնացնել Չաբել թագուհու հետ: Կաթողիկոսը այս հարցում Կոստանդինի կողքին էր: Նույնիսկ այն ժամանակ, երբ Չաբել թագուհին չհամաձայնվեց այդ որոշմանը և փախավ Կիլիկիայից, Կոստանդին Բարձրբերդցին մեկնեց նրա մոտ Սելևկիա, որը գտվում էր հիվանդախնամ ասպետների իշխանության ներքո: Կաթողիկոսը փորձեց համոզել թագուհուն՝ հետ վերադառնալ: Չաբել թագուհին, ով սկզբնական շրջանում դեմ էր այդ ամուսնությանը, մերժեց հայոց կաթողիկոսի միջնորդական առաքելությունը: Դրանից հետո միայն Կոստանդին պայլը մեծ զորքով շարժվեց թագուհուն ընդառաջ, նրան բե-

րեց Կիլիկիա, որից հետո տեղի ունեցավ Չաբել թագուհու և Յեթումի ամուսնությունը, որից հետո Կիլիկիայի հայկական թագավորությունում հաստատվեց Յեթումյանների դինաստիան:

Նոր կաթողիկոսը կատարեց մի շատ կարևոր քայլ ևս: Նա օգնեց Կոստանդին պայլին երկրից վտարել բոլոր լատինադավաններին, որոնք այդ ժամանակ ակտիվացել էին և մեծ վտանգ էին ներկայացնում ոչ միայն հայոց եկեղեցու, այլև պետության համար: Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի օրոք Կիլիկիայի հայկական թագավորությունում քաղաքական իրավիճակը լարված էր, քանի որ մի կողմից հայկական թագավորությանը սպառնում էր ժամանակի ամենահզոր ուժերից մեկը՝ մոնղոլական պետությունը, իսկ մյուս կողմից Իկոնիայի սուլթանությունը: Բացի այդ, դեռևս վերջնական չէին կարգավորվել Կիլիկյան Յայաստան-Անտիոքի-Տրիպոլիի դքսություն և հարաբերությունները: Շուտով նրանց գումարվեց ևս մեկ հզոր պետություն՝ Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը, որը ժամանակի ընթացքում դարձավ Կիլիկյան Յայաստանի ամենաոխտերիմ թշնամին:

Հարկ է նաև նշել, որ Կոստանդին Բարձրբերդցին իր աթոռակալման տարիներին զբաղվել է նաև հոգևոր-մշակութային գործունեությամբ, բացել նոր դպրոցներ, հիմնել միաբանություններ, գրչության կենտրոններ և այլն: Նրա նախածեռնությամբ վերաշինվել է Արտագի Ս. Թադեի վանքը, որը դարձել է թեմական կենտրոն: Կաթողիկոսը նաև սահմանել

Է հատուկ կանոններ, որով արգելել է հոգևորականներին կնուկքը, պսակը, ձեռնադրությունը, խոստովանությունն ու հաղորդությունը կատարել դրամով: Կոստանդին Բարձրբերդցին նաև խստագույնս արգելել է դրամով եկեղեցական պաշտոնների նշանակելու հոռի երևույթը:

1241 թ. Վարդան Արևելցին Ռոմկլայում հանդիպում է Կոստանդին կաթողիկոսին: Դրանից հետո վերջինս մի որոշ ժամանակ մնաց կաթողիկոսի մոտ: 1243 թ. նրանք երկուսով Ռոմկլայից ժամանեցին Սիս, և այդ նույն թվականին Յեթում Ա արքայի համաձայնությամբ Կիլիկիայում տեղի ունեցավ մի կարևոր եկեղեցական ժողով, որի նպատակն էր եկեղեցու վարչական կառավարման բարեփոխումը: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Կոստանդին Բարձրբերդցու աթոռակալման տարիներին ժողովուրդն անտարբերությամբ էր վերաբերվում կրոնական հարցերին և եկեղեցական պաշտամունքին: Յետաքրքիր է նաև նշել, որ Մ. Օրմանյանի դիտարկմամբ՝ Սսում կայացած ժողովը չդարձավ ազգային, քանի որ այնտեղ մասնակցեցին միայն Կիլիկյան Յայաստանի ներկայացուցիչները: Բուն Յայաստանի հոգևորականները չկարողացան մասնակցել ժողովին, քանի որ մոնղոլական արշավանքները տարածաշրջանում ստեղծել էին անկայունություն: Ցավոք, Սսի 1243 թ. ժողովի մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում տեղեկությունները շատ սակավաթիվ են: Ժողովի որոշումների մասին մեզ որոշակի հաղորդումներ է տրամադրում պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Նա

գրում է, որ այս ժողովին մասնակցում էին մի շարք եպիսկոպոսներ, վարդապետներ, վանահայրեր, իշխաններ, և, իհարկե, նաև արքան՝ Չեթում Ա-ն և թագաժառանգը: Այս ժողովում ընդունվեցին շուրջ 25 կանոններ¹³: Հիմնական դրույթներն էին.

1. եկեղեցական պաշտոնների համար առաջադրել միայն արժանավոր և գիտուն մարդկանց,
2. եպիսկոպոս կարող էին ձեռնադրվել ոչ պակաս, քան 30 տարեկան լրացած անձինք,
3. եպիսկոպոսների առաջնահերթ խնդիրներից էր ուսուցիչներ ընտրել՝ երեխաներին ուսուցանելու համար,
4. քահանա ձեռնադրվել կարող էին առնվազն 25 տարեկան, իսկ սարկավագ՝ 20 տարին լրացած անձինք,
5. ամուսնություն թույլատրվում էր արյունակից ազգակալության վեցերորդ զարմից հետո, իսկ ամուսնության նվազագույն տարիքը փեսացուի համար սահմանվում էր նշված 14 տարին, իսկ հարսնացուի համար՝ 12 տարին,
6. ձեռագրերը պետք է կազմվեն եպիսկոպոսի գիտությանը, որպեսզի նա այդ գործը հանձնարարի հմուտ և գիտուն «արտագրողներին»,

¹³ 1243 թվականին Սսում կայացած ժողովի վերաբերյալ առկա է նաև 24 կանոնի տարբերակը:

7. որոշ կանոններ էլ վերաբերում էին եկեղեցական ծիսակատարություններին,
8. մի շարք դրույթներով ապահովել հայ եկեղեցու հեղինակությունը և ազդեցությունը,
9. աստիճանից զրկել այն հոգևոր անձանց, ովքեր զբաղվում էին աշխարհիկ գործերով:

Ժողովի որոշումը կաթողիկոսի անունից պաշտոնապես հայտարարվեց որպես կոնդակ:

Այս ժողովի կայացրած որոշումները Վարդան Արևելցու և Նրա ենթակա այլ լիազոր անձանց ձեռքով երեք տարի անց ուղարկվում են Նաև Հայաստան: Թեև դրանք ջերմ ընդունելության չեն արժանանում տեղի որոշ հոգևորականների կողմից, ամեն դեպքում նրանք չեն համարձակվում մերժել և առերես ընդունում են այն:

Վարդան Արևելցին ոչ միայն գործուն մասնակցություն ունեցավ Սսի 1243 թ. ժողովին, այլև հեղինակեց Հեթում Ա արքային ուղղված Կոստանդին կաթողիկոսի թուղթը, որում հակադարձելով քրիստոնյա աշխարհում Հռոմի աթոռի «գերազահությունը» պնդող կաթոլիկ եկեղեցու շահադիտական նկրտումներին՝ ներկայացրեց Հռոմի պապի՝ մինչ այդ հայոց արքային հղած նամակում տեղ գտած սխալները: Վարդան Արևելցու այս թղթով հստակ ընդգծվում է հայոց կաթողիկոսական աթոռի անկախ դիրքորոշումը: Բացի այդ բացահայտում է կաթոլիկ Հռոմի միաբանողական քաղաքականու-

թյան իրական նպատակները: Եվ վերջապես նշյալ թղթով կոչ էր արվում հայոց թագավորին հավատարիմ մնալ հայ եկեղեցու դավանանքին:

1243 թ. ժողովը շատ կարևոր էր ոչ միայն Կիլիկիայի եկեղեցու, այլև ողջ հայության համար և նրանում ընդունված որոշումները երկար ժամանակ կիրառվեցին:

Նշենք նաև, որ Չեթում Ա-ի գահակալման ժամանակաշրջանը աչքի ընկավ Կիլիկյան հայկական պետության և հյուսիսարևելյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների նկատելի դրսևորումներով: Դրանք պայմանավորված էին մի շարք հանգամանքներով:

Մինչ այս շրջանը Բյուզանդական կայսրությունը մեծ ջանքեր էր գործադրում Կիլիկյան Հայաստանում եկեղեցիների միավորման համար, 13-րդ դարի կեսերից աշխուժանում է նաև Հռոմի պապական աթոռը: Նա հույսեր էր փայփայում, որ Հայ Առաքելական եկեղեցին (դավանաբանական միավորման՝ միջոցով) կենթարկվի իրենց: Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ իշխանությունները սկսեցին Հռոմի պապական աթոռի նկատմամբ վարել հավասարակշռված, իսկ հաճախ նաև կոշտ քաղաքականություն:



Սիս



Անարգարա

3.2 Հայ եկեղեցու փոխհարաբերությունները ասորի Հակոբիկ եկեղեցու հետ:

Հնուց ի վեր հայոց եկեղեցին սերտ շփումներ ուներ Հակոբիկ ասորական եկեղեցու առաջնորդների հետ: Երկու եկեղեցիների մտերմությունը բխում էր նրանից, որ Զաղկեդոնի ժողովի նկատմամբ երկու եկեղեցիներն էլ ունեին նույնասման դիրքորոշումներ: Հետագայում էլ այդ համագործակցությունը շարունակվեց:

Կիլիկյան շրջանում երկկողմ հարաբերությունները շարունակում էին զարգանալ: Այսպես, 1166 թ. Հակոբիկ եկեղեցու պատրիարք դառնալուց հետո Միքայել Մեծը (1166-1199) երկու ասորի եպիսկոպոսների է ուղարկում կաթողիկոս Ներսես Շնորհալու մոտ՝ հայոց եկեղեցու հետ միաբանություն առաջարկելու նպատակով: Շնորհալին պատասխան նամակով իր գոհունակությունն է հայտնում այդ առիթով և ողջունում Միքայելի մտադրությունը: 1170-1171 թթ. Հռոմկլայում ընթացող միութենական բանակցություններին մասնակցում էին նաև Միքայել Մեծի պատգամավորները, իսկ ահա 1173 թ. Գրիգոր Դ Տղայ կաթողիկոսի օժանդակությամբ ներկա են լինում Զեսունի Գրիգոր և Ռապանի Բարսեղ ասորի եպիսկոպոսները:

1178 թ. Հռոմկլայում տեղի ունեցող ժողովին, որտեղ պետք է պատասխան տրվեր բյուզանդական եկեղեցու հետ միավորման առաջարկին, ներկա էին նաև Միքայել պատրիարքի ասորի պատվիրակները:

12-րդ դարի վերջին Կիլիկիայի հայկական թագավորության միջազգային ճանաչմանը զուգահեռ Յակոբիկ ասորական եկեղեցու պատրիարքները սկսեցին սերտորեն համագործակցել Ռուբինյան դինաստիայի ներկայացուցիչների հետ: Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում և վերջինիս միջամտության արդյունքում Յակոբիկ ասորի եկեղեցու պատրիարքների նստավայրերից մեկն էլ դարձավ Սիս մայրաքաղաքը:

1198 թ. Լևոն Մեծագործի թագադրման հանդեսին այլ պատվավոր հյուրերի շարքում ներկա էր նաև Միքայել Մեծ պատրիարքը, որի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին: Բացի այդ, գերմանացի հայտնի ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբուրգցին 1212 թ. հունվարի 6-ին հիշատակում է Յակոբիկ եկեղեցու ներկայացուցչին Սսում՝ Ս. Ծննդյան և Յայտնության տոնի թափորի մեջ, Ամենայն հայոց կաթողիկոսի և Անտիոքի պատրիարքի հետ: Յայտնի է նաև, որ Լևոն Մեծագործը ընծաներ է ուղարկել Յակոբիկ եկեղեցու հոգևոր կենտրոն Մար-Բարսումա վանքին, որը գտնվում էր Մալաթիայի (Մելիտենեի) մոտակայքում: Բացի այդ, 1210-ական թվականներին Լևոն Մեծագործը Կիլիկիո Գավիկաթի ասորական վանքի միաբանների խնդրանքով միջնորդում է Իկոնիայի սուլթանին՝ Յովհաննես ԺԴ-ին հակոբիկ եկեղեցու պատրիարք (1208-1220) ճանաչելու համար, քանի որ հակոբիկների հոգևոր կենտրոնը՝ Մար-Բարսումայի վանքը, գտնվում էր սուլթանության սահմաններում:

Հայ-ասորական եկեղեցական փոխհարաբերությունները շարունակվեցին նաև Լևոն Մեծագործի հաջորդների, մասնավորապես Յեթում Ա արքայի կառավարման ժամանակաշրջանում: Հայտնի է, որ սկսած 13-րդ դարի 20-ական թթ. հակոբիկների Իգնատիոս II պատրիարքը (1222-1252) Կիլիկիայում իրագործում է մի շարք շինարարական աշխատանքներ: Կառուցվեցին եկեղեցիներ Սսում, Յոռմկլայում և Մամեստիայում: Յեթում Ա-ի իշխանության տարիներից Հակոբիկ ասորական եկեղեցու նստավայրը տեղափոխվում է Սսի մերձակայքում գտնվող Գավիկաթ վանքը, որն ավելի է նպաստում երկու եկեղեցիների պատմամշակութային փոխհարաբերությունների սերտացմանը:

1250 թ. հայոց Կոստանդին Ա կաթողիկոսը Խառանի եկեղեցում հայերի համար մի սեղան է պահանջում Իգնատիոս II պատրիարքից: Վերջինս առերես խոստանում, բայց չի կատարում իր խոստումը՝ դրանով շարժելով Յեթում Ա արքայի զայրույթը:

1292 թ. Հակոբիկ եկեղեցու մասնատման հետևանքով առաջացած երեք պատրիարքություններից մեկը պաշտոնապես հաստատվեց Սսում, իսկ 1349 թ. Բարսեղ Մելիտենացին Անտիոքի և Ասորիքի պատրիարք է ընտրվում Կիլիկիայի Սիս քաղաքում, քանի որ այդ ժամանակ Մար-Բարսումայի վանքը ավերված էր: Իսկ իր նախորդը՝ Կոստանդին պատրիարքը, այդ ավերածի պատճառով Սիս էր տեղափոխել վանքի գրադարանի արժեքավոր ձեռագրերը: Անշուշտ,

հետագա տասնամյակներին էլ շարունակվեցին հայոց եկեղեցու և Հակոբիկ ասորի եկեղեցու փոխհարաբերությունները: Եվ վերջապես Կիլիկիայի տարբեր քաղաքներում հաստատված ասորի հոգևորականները նպաստել են Կիլիկիայի մշակութային կյանքի տարբեր ոլորտների զարգացմանը, մասնավորապես հայերեն են թարգմանել ասորական մշակույթի մի շարք կարևորագույն աշխատանքներ:

3.3 Եկեղեցաքաղաքական իրավիճակը Կիլիկյան Հայաստանում 1250-1280-ական թվականներին:

1248 թ. Ինոկենտիոս IV պապը Կիլիկիա ուղարկեց Տիմանջ եպիսկոպոսին, որը պետք է համոզեր հայերին, որ քաղաքական տեսանկյունից հայերի համար երկու եկեղեցիների միությունը շահեկան է: Հեթում Ա արքան պապի նամակը ուղարկում է Հռոմկա Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին՝ խնդրելով պատասխանել: Հայոց կաթողիկոսը, որքան էլ որ նախկինում հարգանք էր տածում Հռոմի աթոռի նկատմամբ, չէր կարող ընդունել այն պայմանները, որ առաջարկում էր պապը: Ուստի նա 15 հատվածից բաղկացած մի գրություն ուղարկեց Հեթում Ա թագավորին՝ հերքելով կաթողիկ եկեղեցու վարդապետությունը, հորդորելով՝ թագավորին հավատ չընծայել պապի ներկայացուցչի խոսքերին: Հեթում Ա արքան պաշտպանեց հայոց կաթողիկոսարանի դիրքորոշումը և թույլ չտվեց ճնշումներ գործադրել կաթողիկոսարանի վրա: Հռոմի պապական աթոռը, ստանալով նման պատասխան, սահմանափակում է առաջարկները և 1250 թ.

գրած նամակում առաջարկում էր միայն ընդունել Ֆիլիոքվեի վարդապետությունը, ըստ որի՝ Ս. Հոգին բխում է ոչ միայն Հայր Աստծուց, այլև Որդի Աստծուց:

Այս առաջարկին պատասխանելու համար Կոստանդին կաթողիկոսը Սիս քաղաքում 1251 թ. գումարում է մի նոր եկեղեցական ժողով: Լսելով առաջարկվող խնդիրը և չկարողանալով վերջնական եզրակացության գալ՝ ժողովը դիմում է Արևելյան վարդապետներին՝ Վանական վարդապետին, Վարդան Արևելցուն և Ս. Թադեի վանքի առաջնորդ Հովսեփ վարդապետին: Վերջիններին պատասխանը մերժում էր կաթողիկ եկեղեցու վերը նշված դավանաբանական դոգման: Այս փաստը ցույց է տալիս, որ Կիլիկիայի հայկական եկեղեցու ղեկավարությունը դավանաբանական հարցերում համամիտ էր Հայաստանի հոգևորականության հետ:

Այս դեպքերից որոշ ժամանակ անց Կիլիկիայի հայկական թագավորության պատվիրակությունը ուղևորվեց մոնղոլական կայսրություն՝ Հեթում Ա արքայի գլխավորությամբ, նպատակն էր դաշնակցային պայմանագիր կնքել օրեցօր հզորացող մոնղոլական պետության հետ: Հայկական այս պատվիրակության կազմում եղել են նաև հայ եկեղեցու մի շարք ներկայացուցիչներ, որոնցից էին Ստեփանոս եպիսկոպոսը, Մխիթար վարդապետ Սկևռացին, Բարսեղ քահանան և ուրիշներ: Պատվիրակությունը հայոց արքայի գլխավորությամբ կարողացավ հաջող բանակցությունների վարել մոնղոլական պետության ղեկավարության հետ, որի արդյունքում

1254 թ. Յեթում Ա արքան Մանգու մեծ խանի հետ կնքեց մի կարևոր պայմանագիր, որի բովանդակային դրույթներից մի քանիսը վերաբերում էին Հայ Առաքելական Եկեղեցուն, հոգևորականներին և ընդհանրապես քրիստոնեությանը:

Ըստ այդ պայմանագրի մոնղոլները համաձայնվում էին քրիստոնյա դառնալ, սակայն դա պետք է կատարվեր յուրաքանչյուրի կամքով: Մյուս կարևոր համաձայնությունն այն էր, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու եկեղեցու պաշտոնյաները ազատ էին լինելու ամեն տեսակ հարկերից: Եվ վերջապես մեծ խանի եղբայր Հուլավուլի գլխավորությամբ մոնղոլներն ազատագրելու էին քրիստոնյաների Սուրբ երկիրը՝ Պաղեստինը:

Փաստորեն 1254 թ. կնքված պայմանագիրը բավականին շահեկան էր նաև հայոց եկեղեցու համար:

Պետք է նշել, որ 13-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայի հայ եկեղեցու հետ մերձեցմամբ շահագրգիռ էր Հռոմի պապական աթոռը, քանի որ Կիլիկիայի հայկական թագավորության դիրքը նշյալ տարածաշրջանում շատ նպաստավոր էր: Իրոք, 13-րդ դարի սկզբներից մինչև թագավորության անկումը սկիզբ են առնում նաև հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները, սակայն դրանք արդյունք չեն տալիս:

1259 թ. կաթողիկոսը Յեթում Ա արքայի հետ մեկնել է Միջագետք, հանդիպել մոնղոլ իլխան Հուլավուլի հետ, ամրապնդել հայ-մոնղոլական դաշինքը և բարելավել քրիստոնյաների կացությունը:

1262 թ. Արևելք է գալիս Ուրբանոս IV պապի (1261-1264) նվիրակ Գուլիելմոս եպիսկոպոսը: Նվիրակին պատվելու համար Յեթում թագավորը ուղարկում է իր Օշին եղբորը, իսկ Կոստանդին կաթողիկոսը՝ Մխիթար Սկևռացի վարդապետին: Այս առիթով մի վիճաբանություն է տեղի ունենում Յոմի նվիրակի և Մխիթար Սկևռացու միջև, հիմնականում պապի՝ եկեղեցու գլուխ լինելու հարցի շուրջ: Մխիթար Սկևռացին փաստերով ցույց է տալիս, որ եկեղեցու գլուխ ոչ թե Յոմի պապն է, այլ Քրիստոսը: Երկկողմ եկեղեցաքաղաքական հարաբերությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին:

1264 թ. Կոստանդին Ա Բարձրբերդցին և Յեթում Ա արքան մերժել են նաև Յոմի պապի նվիրակի դավանաբանական առաջարկությունները և ամուր պահպանել Հայ Առաքելական Եկեղեցու ավանդույթները: Մի քանի տարի անց էլ Ուրբանոս IV-ին հաջորդած Կղեմես IV-ի առաջարկը նույնպես մերժվում է հայոց արքայի և հայ հոգևորականության կողմից:

13-րդ դարի երկրորդ կեսին, տարածաշրջանում կարևոր քաղաքական դեր ունեին մոնղոլները և Եգիպտոսի սուլթանությունը: Մերժելով բյուզանդացիներին ու Յոմի պապական աթոռին՝ Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր իշխանությունները շատ մեծ կորուստներ չունեցան: Ավելին, հաճախ հենց կաթոլիկ հոգևորականության հետ հարաբերությունների խորացման արդյունքում էլ հայոց կաթողիկո-

սարանը և թագավորությունը ունենում էր բավականին լուրջ խնդիրներ թշնամիների կողմից (մասնավորապես Եգիպտոսի մամլուքյան սուլթանության և թուրքմեն-կարամանների):

1266 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը ավերիչ արշավանք ձեռնարկեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ: Մառի կոչված վայրում տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը ցավալի պարտություն կրեց: Հետո և արքայի մի որդին՝ Թորոսը սպանվեց, իսկ երկրորդը՝ Լևոնը, շատերի հետ գերի տարվեց Եգիպտոս: Եվ գրեթե մեկ տարի հայոց արքան անընդհատ բանակցում էր Եգիպտոսի սուլթանի հետ՝ իր որդուն պատանդությունից ազատելու համար:

Կիլիկիայի հայկական թագավորության համար այս ծանր շրջանում, 1267 թ. ապրիլին մահացավ կաթողիկոս Կոստանդին և Բարձրբերդցին: Նոր կաթողիկոսի ընտրությունը ձգձգվեց:

Եվ միայն 1268 թ. պայմանագրի կնքումից և Լևոն արքայազնի վերադարձից հետո գումարվում է եկեղեցական ժողով, որին մասնակցում էին ոչ միայն Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հոգևորականները, այլև մի շարք արևելյան վարդապետներ: Ժողովը որոշում է կաթողիկոս ընտրել արժանի հոգևորական Հակոբ Կլայեցուն, որը կաթողիկոսական գահին բազմեց մինչև 1286 թ.: Ըստ Սամուել Անեցու՝ նա «սուրբ առաքինի այր էր, որը մեկնաբանում էր

դժվար լուծելի խնդիրներ պարունակող գրքեր»։ Հակոբ Կլայեցու մասին մեծ գովեստով է խոսում նաև Վահրամ Բաբունին։ Մինչ կաթողիկոս դառնալը նա երկու անգամ (1242 և 1254 թթ.) մեկնել է Կոստանդնուպոլիս, ապա Նիկիա՝ կայսրության վերնախավի հետ հայ և բյուզանդական եկեղեցիների միավորման շուրջ բանակցություններ վարելու։ Երկար տարիներ եղել է նաև Մեծքարի ուխտի առաջնորդը։ Պետք է նաև նշել, որ կաթողիկոսի ընտրությունից մի քանի ամիս անց մահացավ հայոց արքան՝ Հեթում Ա-ն, որի մասին դրվատանքով են խոսում ոչ միայն հայ, այլև օտարազգի հեղինակները։ Հեթում Ա արքան իր կառավարման շրջանում մեծ հարգանքով է միշտ վերաբերվել հայ առաքելական եկեղեցու ղեկավարությանը։ Նրա օրոք հայոց եկեղեցին զարգացավ ու ընդլայնեց իր տիրույթները։

1269 թ. Կիլիկիայի Նոր արքա դարձավ Լևոն Բ-ն (1269-1289), որին թագավոր օժեց Հակոբ Կլայեցին։ Նոր տիրակալի օրոք Կիլիկյան Հայաստանում ջանցլերի (կանցլեր) կարևոր պաշտոնը շնորհվում է հոգևորական Վահրամ Բաբունուն, որը երկար ժամանակ իրականացրել է երկրի արտաքին քաղաքականության ղեկավարումը։ Սա խոսուն փաստ է այն մասին, որ Լևոն Բ արքայի օրոք ևս հոգևորականները լուրջ մասնակցություն են ունեցել պետական-քաղաքական կառավարմանը և հատկապես արտաքին քաղաքականությանը։ Մեկ կարևոր հանգամանք ևս. նշյալ ժամանակաշրջանում չեն եղել լուրջ տարածայնություններ Կիլիկիայի հայ-

կական պետության և եկեղեցու ղեկավարության միջև և Զոռմկլայի կաթողիկոսարանը գործել է համեմատաբար խաղաղ իրադրության մեջ:

Հակոբ Կլայեցու աթոռակալության տարիներին կարևոր եկեղեցաժողովներ են տեղի ունեցել նաև Մեծ Հայքում: Դրանց մեջ հատկապես կարելի է առանձնացնել 1270 թ. հունվարի 15-ին Կոտայք գավառի Ձագ գյուղի վանքում տեղի ունեցած եկեղեցական ժողովը (*Ձագավանի ժողով*): Այն հրավիրվել էր ժամանակի նշանավոր իշխանավորների նախաձեռնությամբ՝ (Խոշաք Չաքարյան, Սադուն Արծրունի, Պռոշ Խաղբակյան, Սմբատ Օրբելյան): Կաթողիկոսի հանձնարարությամբ ժողովին մասնակցել է Վարդան Արևելցին: Ժողովը նախագահել է Բջնիի Արարատյան թեմակալ Գրիգոր Եպիսկոպոսը: Ժողովի նպատակը հայոց եկեղեցու հեղինակության բարձրացումն էր: Մշակվել են երեք խումբ կանոններ (աշխարհական-հասարակական, քահանայական, վանական), որոնք վերաբերում էին եկեղեցավարչական, վանական-տնտեսական, կրոնադավանաբանական, նվիրապետական, ծիսական, միջեկեղեցական և եկեղեցական իրավահարաբերություններին, որոնց հեղինակն է եղել Վարդան Արևելցին: Եվ ընդհանրապես Վարդան Արևելցին նախապես այցելել է Մեծ Հայքի գրեթե բոլոր գլխավոր վանական կենտրոններ և ժողովի ընդունվելիք դրույթները քննարկել գիտակ վանականների ու վարդապետների հետ: Ժողովում կանոնակարգվում են հայ հասարակության կյանքի մի

շարք նորմեր, ընդունվում բազմաթիվ կանոններ, որոնք վերաբերում էին ամուսնության, քահանաների և ժողովրդի փոխադարձ պարտականությունների, վանականների մաքրակեցության, երեխաների կրոնական դաստիարակության մասին և այլն: Դրանցում կանոնակարգվում էին նաև հայ հասարակության կյանքի մի շարք նորմեր: Ձագավանի եկեղեցական ժողովի կանոններով քահանաները պետք է ժամանակին ներկայանային սրբավայրեր, կատարեին եկեղեցական արարողություններ՝ ըստ ծեսի պահանջների, խոստովանությունների գաղտնիությունը պահել, այդ մասին ուրևէ մեկին չհայտնել և այլն: Կանոնները գրված էին ժողովրդական մատչելի լեզվով և պարզությամբ:

Ի վերջո կարող ենք նշել, որ Ձագավանի եկեղեցական ժողովի որոշումները կարևոր դեր խաղացին 13-րդ դարի թե՛ հայ իրավական մտքի զարգացման գործում և թե՛ հայ եկեղեցու անաղարտ վարկի պահպանմանը:

Չայոց կաթողիկոսը մահացավ 1286 թ. փետրվարի 12-ին՝ Յոռմկայում, թաղվեց տեղի հայրապետական գերեզմանոցում: Նրան փոխարինեց Կոստանդին Բ Կատուկեցին (1286-1289): Վերջինս հայտնի էր որպես գիտնական ու հռետոր, մեծ վարդապետ, մեկնիչ ու բանաստեղծ: Նա եղել է Մեծքարի վարդապետանոցի առաջնորդը, ապա՝ կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու օգնականն ու տեղապահը: Մասնակցել է Սսի 1243 թ. եկեղեցական ժողովին: Նրա կաթողիկոսության տարիներին հայ եկեղեցու և հատկապես

Հռոմկլայի կաթողիկոսարանի համար շատ ծանր շրջան էր, քանի որ նշյալ ժամանակահատվածում Հեթում Բ-ն էր հայոց արքան, որը լատինամոլ դիրքորոշում ուներ: Իր գործունեությանը վնասում էր թե՛ պետությանը և թե՛ հայ եկեղեցուն: Նոր կաթողիկոսի աթոռակալման տարիներին մոնղոլ իլխանը՝ Արղունը (1284-1291), Արևմտյան Եվրոպայի հետ դիվանագիտական հարաբերություններ է պահպանում: Նա առաջարկում է Հռոմի պապին և Եվրոպական երկրների արքաներին միացյալ ուժերով գրավել Սիրիան ու Պաղեստինը, սակայն Արղունի դեսպանները չկարողացան Էական հաջողության հասնել:

1287 և 1289 թթ. մոնղոլ իլխանի ուղարկած դեսպանությունները Եվրոպայում անցնում են ապարդյուն: Խնդիրն այն է, որ այդ պահին Եվրոպական երկրներին ձեռնտու չէր ընդհարվել Եգիպտոսի սուլթանության հետ, քանի որ Արևմուտքի միապետերի մեծ մասը այլևս չէին հավատում նոր խաչակրաց արշավանքների հաջողությանը: Բացի այդ, Եվրոպական ավատատերերը խաչակրաց արշավանքների մեկնելու փոխարեն գերադասում էին ինքնուրույն առևտրատնտեսական գործունեություն ծավալել, որից մեծ եկամուտներ էին ակնկալում: Եթե հաշվի առնենք 13-րդ դարի վերջին Արևմտյան Եվրոպայում տիրող բարդ իրադրությունը, լարվածության աճը Անգլիայի և Ֆրանսիայի միջև, հարաբերությունների սրումը Ֆրանսիայի արքայի և Հռոմի պապի միջև, ապա պարզ կդառնա, որ նոր խաչակրաց ար-

շավանքի մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Փաստորեն հակախալամական դաշինք ստեղծելու Կիլիկիայի հայկական թագավորության և մոնղոլական իլխանության բազմաթիվ ճիգերն ապարդյուն անցան: Արևմուտքի համագործակցությունն Արևելքի քրիստոնեական երկրների հետ ունեցավ միայն մեկ հետևանք: Ռոմի պապի կողմից դրված արգելքն անհնար դարձրեց քրիստոնյա վաճառականների առևտուրը Եգիպտոսի սուլթանության հետ, և ստեղծված հնարավորությունից օգտվեցին հատկապես իտալական քաղաք-պետությունները՝ Վենետիկը, Ջենովան և ուրիշներ, որոնք Կիլիկիայից ու Կիպրոսից գնված Էժան ապրանքները հետագայում թանկ գնով վերավաճառում էին մահմեդականներին:

1286 թ. Կոստանդին Բ Կատուկեցին Ստեփանոս Օրբեյանին ձեռնադրեց եպիսկոպոս, նշանակեց «Սյունյաց մեծ աթոռի մետրոպոլիտ» և հատուկ շրջաբերականով հաստատեց Սյունյաց մետրոպոլիտական աթոռը և վերջինիս առաջատար դիրքը արևելահայ եպիսկոպոսների նկատմամբ: Բացի այդ, Ստեփանոս Օրբեյանն Ամենայն հայոց կաթողիկոսի փոխանորդն էր Հայաստանում և լիազորություն ուներ նրա անունից կատարելու եպիսկոպոսական ձեռնադրություններ:

1289 թ. Հեթում Բ-ն լատինամետ հոգևորականների հետ ժողով է գումարում մայրաքաղաք Սսում: Ժողովին չի հրավիրվում հայոց կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկե-

ցին, քանզի վերջինս դեմ էր հայ և կաթողիկ եկեղեցիների միավորմանը: Ժողովականները կաթողիկոսի վրա բարդում են մտացածին մեղադրանքներ, կանոնազանցումներ, աշխարհիկ գայթակղություններ, ուստի Կոստանդին Բ Կատուկեցին կամովին հրաժարվում է կաթողիկոսական աստիճանից: Նա չի դիմադրում կամ պաշտպանվում, այլ հոժարակամ նախ օրհնություն և մաղթում հայոց աշխարհին, իսկ հետո կամավոր հանձնում է հայրապետական բոլոր տարբերանշանները: Դրանից հետո լատինամուկ կղերականները նրան նետում են Լամբրոն բերդաքաղաքի բանտը: Ինչպես հավաստում է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, Կիլիկիայի լատինամետ հոգևորականները վախենում էին, որ Կոստանդին Բ Կատուկեցին կարող է հաստատվել Հայաստանում և օժանդակություն գտնել: Նույն հեղինակի վկայությամբ՝ բանտարկվելուց առաջ կաթողիկոսը վերցրել է Լուսավորչի աջը և օրհնել հայոց թագավորությունն ու հայ ժողովրդին: Այս դեպքերից հետո հոգևորականության շրջանում ուժեղացավ Գրիգոր Անավարզեցու դերը, նրան կաթողիկոս դարձնելու փորձեր էին արել դեռ 1286 թ., սակայն դա տեղի չունեցավ Լևոն Բ թագավորի միջամտության հետևանքով:

Չորս տարի բանտում անցկացնելուց հետո Կոստանդին Բ Կատուկեցին Հեթում Բ արքայի կամքով 1293 թ. ազատ է արձակվում և նշանակվում Սկևռա վանքի առաջնորդ:

3.4 Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունների բարդացումը և Յոնուկայի կաթողիկոսարանի կործանումը:

1290 թ. Յոնուկայում տեղի ունեցավ կաթողիկոսության նոր ընտրություն: Այս ընտրությանը պետք է՝ մասնակցեին Նաև Սյունիքի, Արտազի, Այրարատի և Աղթամարի աթոռների ներկայացուցիչները, սակայն 1290 թ. ժողովին ներկա էին միայն Կիլիկիայի և հարակից շրջանների ներկայացուցիչները¹⁴: Հակառակ Յեթում Բ-ի գործադրած ջանքերի՝ կաթողիկոս ընտրվեց ոչ թե Գրիգոր Անավարզեցին, այլ՝ Ստեփանոս Յոնուկայեցին: Վերջինս մինչ կաթողիկոս ընտրվելը ուսանել, այնուհետև պաշտոնավարել էր Յոնուկայի կաթողիկոսարանում, որի հետևանքով ստացել է Յոնուկայեցի անվանումը: Նա Յոնուկայի կաթողիկոսարանի վերջին հայրապետն էր (1290-1292) և բավական կարճ ժամանակ կառավարեց: Նա դեմ էր կաթոլիկ եկեղեցու հետ մերձեցմանը: Ընդհանրապես միջնադարյան աղբյուրները նրան դրական են բնութագրում: Թեև կաթողիկոս ընտրվեց Ստեփանոս Յոնուկայեցին, սակայն փաստացի հայրապետական իշխանությունը գտնվում էր Գրիգոր Անավարզեցու ձեռքում: Նա համագործակցում էր Կիլիկիայի պետության ղեկավարության հետ: 1292 թ. Յեթում Բ արքան և Գրիգոր Անավարզեցին առանց կաթողիկո-

¹⁴ Որոշ հետազոտողներ այս կարևոր ժողովը թվագրում են նաև 1289 թվականին:

սի մասնակցության և համաձայնության, եկեղեցական ժողով են գումարել և որոշել Չատկի տոնը նշել կաթողիկոսների հետ ապրիլի 6-ին, թեև այն հետո չընդունվեց Մեծ Հայքում: Նշենք նաև, որ այս շրջանում արդեն բավական սրվել էին Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները: Նշյալ ժամանակաշրջանում Եգիպտոսի սուլթանության զորքերը մեկը մյուսի հետևից սկսեցին կործանել Արևելքում խաչակրաց պետությունների մեծ մասը՝ սպառնալով նաև Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանին:

Այսպես, նրանք գրավեցին Տրիպոլիսը, որից հետո սուլթան Աշրաֆը (1290-1293), շարունակելով իր հոր վարած արտաքին քաղաքականությունը, 1291 թ. գարնանը հարձակվեց Աքրայի վրա: Աքրան գրավելուց հետո՝ մայիսի 8-ին մամլուքները մեկը մյուսի հետևից տիրացան նաև Տյուրոսին, Սիդոնին, Բեյրութին: Այս տարածքների գրավումով վերջ տրվեց խաչակիրների իշխանությանը Սիրիայում: Հզոր թշնամիների դեմ Արևելքում մնացին ընդամենը երկու քրիստոնյա պետություններ՝ Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսի թագավորությունը: Մամլուք սուլթանը, խաչակիրների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, զենքն ուղղեց Կիլիկյան Հայաստանի դեմ: Կիլիկիայի դրությունն ավելի բարդացավ, երբ 1291 թ. մահացավ Արղունը, իսկ նրան հաջորդած Զեյդաթու իլխանը (1291-1295), ընդգծված հակամահմեդական քաղաքականություն չէր վարում և ավելի շատ պայքարում

Էր երկրի ներսում իր իշխանությունն ամրապնդելու և հզորացնելու համար:

Շուտով Եգիպտոսի սուլթան Աշրաֆը որոշեց հաջորդ հարվածն ուղղել Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի դեմ, որը սեպի պես խրված էր մահմեդականներին պատկանող տարածքների մեջ: Ակնհայտ էր, որ Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության վրա բավականին մեծ էր հայոց կաթողիկոսարանի դերը, և հաճախ հենց նրանց նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ էին տեղի ունենում մի շարք պատվիրակությունների ուղևորությունները Արևմտյան Եվրոպա և հատկապես Հռոմ: Մի հանգամանք, որի մասին անմիջապես տեղյակ էր լինում Կիլիկյան Հայաստանի ռիսերիմ թշնամին՝ Եգիպտոսի սուլթանությունը: Հետևանքին երկար չսպասեցին:

1292 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը ուղղվեցին դեպի Հռոմկլա: Բերդաքաղաքի պաշարումը տևեց 33 օր: Բերդը գրավվեց 1292 թ. հուլիսի 28-ին: Բերդում գտնվողները սրի քաշվեցին: Գերեվարեցին հայոց կաթողիկոսին՝ Ստեփանոս Հռոմկլայեցուն, և բոլոր նրանց, ովքեր միջնաբերդում էին: Թշնամու զորքերը ավերեցին Ս. Գրիգոր, Ս. Աստվածածին և Ս. Փրկիչ եկեղեցիները, ինչպես նաև կաթողիկոսի ապարանքը: Հռոմկլայի համար այս ծանր օրերին Հեթում Բ հայոց արքան չկարողացավ օգնական ուժ ուղարկել և պաշտպանել կաթողիկոսարանը:

Հռոմկլայի անկումը ժամանակակիցները մեծագույն աղետ են համարել, և հայ պատմիչները խոր կսկիծով են ներ-

կայացրել այդ դեպքերը: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Յոզմկլայի անկումը բնութագրում է որպես աստվածային պատիժ, որի պատճառը նախորդ կաթողիկոսի հանդեպ Յեթում Բ-ի թագավորության թշնամական վերաբերմունքն էր: Յոզմկլայի աղետը մեծ վիշտ էր ժամանակակիցների համար: Մ. Օրմանյանը նշում է, որ ժամանակակիցները այն նմանեցնում էին Երուսաղեմի կործանմանը:

Գերեվարված հայոց կաթողիկոս Ստեփանոս Յոզմկլայեցին մի շարք հոգևորականների հետ տարվեց Եգիպտոս, իսկ որոշ ժամանակ անց մահացավ բանտում: Մամուլքյան գորքերի կողմից Յոզմկլայի բերդաքաղաքի գրավումը և հայոց կաթողիկոսարանի կործանման մասին լուրը խոր զայրույթ առաջ բերեց նաև մոնղոլական իլխանությունում: Յավանաբար դա է պատճառը, որ մոնղոլ իլխան Քեյդաթուն նամակ գրեց սուլթան Աշրաֆին: Նամակում նա հայտնում էր իր զայրույթը և սպառնում գրավել Յալեպը: Եգիպտոսի սուլթանն էլ իր հերթին պատասխանեց, որ ինքը նախատեսել է գրավել Բաղդադը, այն կրկին իսլամի կենտրոն դարձնելու համար: Ցավոք, մոնղոլ իլխանը չկարողացավ իրականացնել իր սպառնալիքը, որովհետև շուտով երկրում լարված պայքար սկսվեց իշխանության համար:

Յոզմկլայի կաթողիկոսարանի կործանման համար որոշակի մեղքի բաժին ուներ Կիլիկիայի հայկական թագավորությունը և անձամբ Յեթում Բ արքան՝ իր հայտնի լատինամոլ քաղաքականությամբ: Բացի այդ, հայ դիվանագետները

հաշվի չէին առել այն, որ ուժերի հարաբերակցությունը մերձավորարևելյան տարածաշրջանում վաղուց արդեն փոխվել էր, իսկ հայկական թագավորության դաշնակից մոնղոլական իլխանությունն էլ գնալով թուլանում էր և չէր կարողանալու էական աջակցություն ցույց տալ ոչ թագավորությանը, և ոչ էլ կաթողիկոսարանին:

Այսպիսով՝ հայոց կաթողիկոսարանը Յոնմկայում գործեց 143 տարի և իրականացրեց մի շարք կարևոր գործեր՝

1. Կաթողիկոսարանը կարողացավ կարգավորել իրենից առաջ սկսված եկեղեցական թեմերի պառակտողական ձգտումները, որոնք մեծ վնաս էին տվել թե՛ հայության և թե՛ հայ եկեղեցու միասնությանը:
2. Մեծ աջակցություն ցույց տվեց ժամանակի ամենանշանավոր դեմքերից մեկին՝ Լևոն Մեծագործին և նրա հաջորդներին հայոց պետականության ստեղծման, պահպանման և զարգացման հարցում:
3. Հսկայական ջանքերի գնով կարողացավ պահպանել Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանությունը՝ մերժելով թե՛ բյուզանդական կայսրությանը և թե՛ Հռոմի պապական աթոռին:
4. Մեծապես նպաստեց հայկական մշակույթի տարբեր ոլորտների զարգացմանը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԱԹՈՈՐ 1293-1441 ԹԹ..

4.1 Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը

Սիւ: Գրիգոր Է Անավարզեցին հայոց կաթողիկոս:

Հայ եկեղեցու պատմության մեջ մի յուրահատուկ և կարևոր նշանակություն ունի պատմական այն ժամանակաշրջանը, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը գտնվում էր Կիլիկիայի թագավորության մայրաքաղաքում Սսում (1293-1441):

Ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1292 թ. Եգիպտոսի սուլթանությունը գրավեց Հռոմկլայի կաթողիկոսարանը, որից հետո բնականաբար առաջ եկավ մի հրատապ հարց, թե որ վայրում պետք է հաստատվի հայոց կաթողիկոսարանը: Հասկանալի է, որ նշյալ ժամանակաշրջանում, երբ գործում էր Կիլիկիայի հայկական թագավորությունը, առավել անվտանգ կարող էր լինել Նրա որևէ տարածքը: Հավանաբար դա էր պատճառը, որ Հռոմկլայի գրավումից հետո Կիլիկիայի թագավորական վերնախավը, ինչպես նաև հայ բարձրաստիճան հոգևորականությունը 1293 թ. որոշում են Ամենայն

Հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխել Կիլիկիայի մայրաքաղաք Սիս, որտեղ կաթողիկոսարանի համար կային առավել անվտանգ պայմաններ: Այս տեղափոխմանը կողմնակից էին թագավորական իշխանության ներկայացուցիչները, քանի որ ուժեղանում էր արքայի հսկողությունը կաթողիկոսարանի վրա, որի արդյունքում հնարավոր էր լինում մի շարք կարևոր հարցերում ստանալ կաթողիկոսի գործունե աջակցությունը, մի հանգամանք, ինչը ոչ միշտ է եղել Հռոմկլայի կաթողիկոսարանի գործունեության ժամանակ:

Քանի որ հայոց կաթողիկոս Ստեփանոս Դ Հռոմկլայեցին 1292 թ. գերվել էր և որոշ ժամանակ անց մահացել էր Եգիպտոսում, առաջ եկավ նոր հայրապետի ընտրության հարցը:

Ուստի 1293 թ. առանց ազգային-եկեղեցական ժողով գումարելու, Հեթում Բ արքայի նախաձեռնությամբ կաթողիկոս օծվեց Գրիգոր Է Անավարզեցին (1293-1306/07), ով մտերիմ հարաբերությունների մեջ էր նաև Կիլիկիայի թագավորական վերնախավի հետ: Նա ժամանակին կրթություն էր ստացել Մեծքարի վանքում, տիրապետում էր ասորերենին, լատիներենին, հունարենին, քաջահմուտ էր երաժշտության և պոեզիայի մեջ: Գրիգոր Է-ն 1263 թ. մինչև կաթողիկոս դառնալը Անարզաբայի եպիսկոպոսն էր:

4.2 Գրիգոր Անավարզեցու իրականացրած

փոփոխությունները: 1297 թ.

Նորավանքի եկեղեցական ժողովը:

Նոր աթոռակալը եկեղեցիների միավորման կողմնակից էր և պատրաստ էր հանուն դրա զոհել հայ եկեղեցու որոշ դավանաբանական ավանդներ: Կաթողիկոս օծվելուց հետո նա պատվիրեց ճրագալույցներին պահք չլուծել, հիվանդների համար ձեթ օրհնել, Ս. բաժակի մեջ ջուր խառնել և այլն: Միաժամանակ կաթողիկոսը պահանջեց, որ իբրև փոխատուցում, Անտիոքի պատրիարքական աթոռը ենթարկվի հայոց կաթողիկոսությանը: Անշուշտ, Գրիգոր Անավարզեցու իրականացրած փոփոխությունները լուրջ դժգոհություն առաջացրին թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությունում և թե՛ բուն Հայաստանում:

Հռոմի պապական աթոռից և Արևմտյան Եվրոպայից օգնություն ստանալու ակնկալությամբ հայոց արքան և կաթողիկոսը բանակցություններ էին վարում նրանց հետ և խոստանում կատարել դավանաբանական զիջումներ, որն էլ, սակայն, հանդիպում էր Կիլիկիայի և բուն Հայաստանի հոգևորականության լուրջ դիմադրությանը:

Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը խիստ դիրք է գրավում Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի դավանանքային գործողությունների նկատմամբ: Վերջինս սկսել էր զանազան «նորամուծություններ» մտցնել՝ շեղվելով հայ եկեղեցու ավանդույթներից՝ բացահայտորեն հարելով կաթո-

լիկ եկեղեցուն: Շուտով կաթողիկոսը այս նորույթները բոլոր եկեղեցիներում տարածելու նպատակով իր առաջարկները բովանդակող հատուկ նամակով բուն Հայաստան և ուղարկում համախոհ ու գործակից պատվիրակ՝ Կեսարիայի եպիսկոպոս Կոստանդինին: Նամակը առաջացնում է տեղի հոգևոր և աշխարհիկ իշխանական դասերի զայրույթը:

Արդյունքում Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ 1297 թ. Նորավանքում հրավիրվում է եկեղեցական բարձրաստիճան կրոնավորների ժողով, որին մասնակցում էր 11 բարձրաստիճան հոգևորական Հայաստանից և չորս իշխան՝ երկուսը Օրբելյան տոհմից, երկուսը՝ Պռոշյան: Ժողովում որոշվում է մերժել հայոց կաթողիկոսի առաջարկները: Պատասխան նամակը հանձն է առնում գրել հենց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը: Այդ արժեքավոր փաստաթուղթը մեզ է հասել ամբողջությամբ: Պատասխան նամակում առաջարկվում էր հավատարիմ մնալ հայ եկեղեցու ավանդույթին և մեկ առ մեկ քննադատվում էին կաթողիկոսի առաջարկած ծիսական, պաշտամունքային ու նման կարգի այլ նորամուծությունները: Ժողովը մերժում է դրանք. «Աւելի լաւ է մեր պապերի հետ դժոխք գնալ, քան օտարների հետ երկնային արքայութիւն...»: Այս խոսքերը, ինչպես նաև Լոռու և Սյունիքի հոգևոր կենտրոնների բուռն դիմադրությունը ցույց են տալիս, որ ինչքան էլ Կիլիկիայի հայկական թագավորությունը, սեփական շահերից ելնելով, փորձում էր որոշակի զիջողական քաղաքականության գնալ Հռոմի պապի և արևմտյան միապետների հետ հարաբերություններում ու

ակնկալել որոշակի օգնություն, փաստ էր, որ առանց բուն Հայաստանի հոգևորականության և ժողովրդի համաձայնության անհնար էր իրականացնել այդ փոփոխությունները: Զետագա տասնամյակների ընթացքն էլ ապացուցեց դա:

4.3 Գրիգոր Անավարզեցու մահը և Սսի 1307 թ.

Եկեղեցական ժողովը:

14-րդ դարում իրադրությունը մերձավորարևելյան տարածաշրջանում Եականորեն փոխվեց: Մոնղոլները, որոնք Կիլիկիայի հայկական թագավորության գլխավոր դաշնակիցներն էին, թուլացան, աստիճանաբար դադարեցին այդպիսին լինել: Տարածաշրջանում ուժեղանում էր Եգիպտոսի սուլթանության դերը: Գրիգոր Է Անավարզեցին իր կառավարման վերջին ժամանակաշրջանում փոխում է սեփական դիրքորոշումը և հասկանում, որ անհիմաստ է եկեղեցիների միավորման հարցով զբաղվելը, քանի որ այն միայն վնաս էր բերում թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությանը և թե՛ հայությանը ընդհանրապես: Հայոց կաթողիկոսը մերժեց այդ պահանջը, որի պատճառով էլ հեռացվեց և արքորվեց, որտեղ էլ մահացավ 1306 թվականին՝ մահվան մահճում հայտարարելով՝ «Հայ եմ և հայ մեռանիմ»:

Հայ-հռոմեական հարաբերություններն ավելի խորացան 14-րդ դարի սկզբներին, երբ Արևելքում վերացան խաչակրաց պետությունները, իսկ Կիլիկիայի դաշնակից մոնղոլներն էլ թուլացան: Նման պայմաններում հայոց արքունիքն իր հայացքը հառեց դեպի Արևմուտք:

Հայկական թագավորության համար բացասական էր նաև այն, որ 1307 թ. փաստացի դադարեց գործել հայ-մոնղոլական համագործակցությունը: Եվ քաղաքական նմանատիպ պայմաններում Կիլիկիայի հայկական թագավորության վերնախավը իր հայացքը հառում է դեպի արևմուտք՝ հույս ունենալով այստեղից օգնություն ստանալ: Հռոմի պապական աթոռն օգնության դիմաց պահանջում էր, որ հայոց եկեղեցին դավանաբանական գիշումներ անի, այլ խոսքով ասած՝ ընդունի կաթոլիկություն: Նման պայմաններում հայ եկեղեցու ներսում առաջացան երկու հակադիր խմբավորումներ, որոնք կատաղի պայքար սկսեցին միմյանց դեմ: Խմբավորումներից մեկը կողմնակից էր կաթոլիկության ընդունման (ունիթորներ) որով իբր օգնություն կստանային արևմուտքից, իսկ մյուսը դեմ էր դրանց, չէր ցանկանում հրաժարվել Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական ու ծիսական ավանդույթից (հակաունիթորներ):

Կարևորենք նաև այն, որ՝ նույն այդ ժամանակաշրջանում հայոց եկեղեցին շարունակում էր ազդեցություն ունենալ Կիլիկիայի հայոց պետության կառավարման համակարգում: Մի շարք հայ բարձրաստիճան հոգևորականներ կարևոր դեր էին խաղում ոչ միայն Սսի կաթողիկոսարանի, այլև Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքական կյանքում: Բայց մյուս կողմից էլ աշխուժանում էին հայ-կաթոլիկ հարաբերությունները:

1306 թ. Կիլիկիայի Լևոն Գ արքայի (1301-1307) դեսպանները Նեապոլով ուղևորվեցին Արևմտյան Եվրոպա՝ Զոմ և Փարիզ: Զոմի պապ Կղեմես V-ը, Կիլիկիայի թագավորությանը օգնություն խոստանալով, պահանջեց, որ հայ եկեղեցին ընդունի կաթոլիկ եկեղեցու ծիսակարգը և դավանաբանական սկզբունքները:

Փաստորեն, դիվանագիտական հարաբերությունները շոշափեցին նաև դավանաբանական ինդիդներ, ինչը վկայում էր, որ սոցիալ-քաղաքական շահերից բացի մեծ կարևորություն էին ներկայացնում նաև հոգևոր, մասնավորապես կրոնական հետաքրքրությունները: Կաթոլիկ արևմուտքի և Բյուզանդիայի հետ մշակվող քաղաքական հարաբերություններում որոշիչ դեր ունեին նաև կրոնական հարցերը: Արևմտյան Եվրոպայում արքունիքներից բացի դեսպանները հաճախ բախում էին նաև պատրիարքական ու պապական նվիրապետությունների դռները: Դավանաբանական գիջումների ճանապարհով Արևմտյան Եվրոպայից և Բյուզանդիայից օգնություն ստանալու քաղաքական ծրագրի կենսագործման համար արքունիքը 1307 թ. Ստում հրավիրեց եկեղեցական ժողով:

Պետք է նշել, որ նշյալ ժամանակաշրջանում Արևմուտքի հետ հարաբերությունների զարգացման օգտին էին գործում նաև Զեթում թագավորահայրը (սա մինչ թագավոր օծվելը դարձել էր կաթոլիկ ֆրանցիսկյան միաբանության անդամ) և Լևոն Գ արքան: Թագավորահայրը գլխավորեց երկրի լա-

տիկնասերների հոսանքը և պահանջեց, որ հայերը կաթողիկոսություն ընդունեն և միավորվեն կաթողիկ եկեղեցու հետ: Իբրև քաղաքական գործիչ՝ Յեթում Բ-ն, հոգևոր եղբայրության անդամ լինելով, չէր բաժանվում սրից: Նա չթագադրված միապետ էր, խոստովանահայր, խնամակալ: Աչքի էր ընկնում անկայունությամբ և մի ծայրահեղությունից մյուսն էր ընկնում. գործում էր ըստ իրադրության, կարծում էր, թե Կիլիկիայի հայկական պետությունը կարող է հույսը դնել պապի օգնությանը:

Այսպիսի նկատառումով 1307 թ. մարտի 19-ին Կիլիկիայի թագավորության մայրաքաղաք Սսում Յեթում Բ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ մի կարևոր եկեղեցական ժողով: Ժողովին մասնակցում էին արքան, երկու տասնյակից ավելի եպիսկոպոսներ, իշխաններ, ազատներ, քահանաներ ու կրոնավորներ: Ժողովին չէին մասնակցում բուն Յայաստանի ներկայացուցիչները: Այն ընթացավ չափազանց լարված պայմաններում, քանի որ առկա էին մի շարք լուրջ տարաձայնություններ մասնակիցների միջև: Այս ժողովում գլխավոր դերը պատկանում էր Յեթում Բ արքային: Ժողովի օրակարգում դրված էր երկու կարևոր հարց՝

1. Նոր կաթողիկոսի ընտրությունը,
2. հայ եկեղեցու դավանաբանական և ծիսական համակարգում փոփոխություններ կատարելու խնդիրը:

Ժողովը ընտրեց նոր կաթողիկոս՝ Կոստանդին Գ Կեսարացուն (1307-1322), որից հետո քննարկեց դավանաբանա-

կան փոփոխությունների խնդիրը: Հայոց արքան ժողովի մասնակիցներին ներկայացրեց մի նամակ, որն իբր թե գրվել է կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու կողմից: Այն բաղկացած էր ինը գլխից և հիմնականում բովանդակում էր հետևյալ դավանաբանական ու ծիսական փոփոխությունները՝

1. Զրիստոսի մեջ խոստովանել երկու բնություն, երկու կամք, երկու ներգործություն,
2. սբ. բաժակի մեջ ջուր խառնել,
3. ընդունել կաթոլիկ եկեղեցու կողմից տիեզերական յոթ ժողովների որոշումները,
4. տերունական տոները նշել հույների և կաթոլիկների հետ՝ Ծնունդը դեկտեմբերի 25-ին, Ավետումը՝ մարտի 25-ին, Տեառնընդառաջը՝ փետրվարի 2-ին և այլն,
5. Ս. Ծննդյան և Ս. Հարության ճրագալույցները լուծել միայն ձեթով և ձկով,
6. «Ս. Աստուած-ը» երգել «Զրիստոս» բառի հավելումով...« Զրիստոս, որ խաչեցար»» և այլն,
7. Ս. Ծննդյան շաբաթապահքն սկսել դեկտեմբերի 19-ին և ավարտել 24-ի ճրագալույցին,
8. հայոց տոնացույցից վերացնել յոթնեկական դրությունը,
9. կիրառել եկեղեցական զգեստները ըստ նվիրապետական աստիճանների:

Հայ եկեղեցու պատմության հայտնի մասնագետ Մ. Օրմանյանը այս կետերին ավելացնում է ևս մեկը, համաձայն ո-

րի՝ Ս. Սեդանի սկիհի տակ դնել քառակուսի սպիտակ կտավ՝ գորբորա:

Ժողովականները, բացառությամբ հինգ եպիսկոպոսների, ընդունում են առաջարկվող փոփոխությունները: Ու թեև ժողովը առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ որոշում ընդունեց, այնուամենայնիվ այն լուրջ ընդդիմություն առաջ բերեց թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությունում և թե՛ բուն Հայաստանում: Խնդիրն այն է, որ թե՛ ժողովրդի ճնշող մեծամասնությունը և թե՛ իշխանների և հոգևորականության մեծ մասը դեմ էին Սսի եկեղեցական ժողովի ընդունած որոշմանը և ամենևին էլ չէին պատրաստվում գործնականում դրանք կիրառել:

Սսի՝ 1307 թ. եկեղեցական ժողովից հետո Կիլիկիայի հայկական թագավորությունում խիստ սրվեց ներքաղաքական իրավիճակը: Նույնիսկ ժողովի ամենաջերմ պաշտպանները խուսափում էին ամենուրեք գործադրության մեջ դնել այդ կանոնները: Այս ժողովի հետևանքով Կիլիկիայի հայկական թագավորությունում առաջացան իրարամերժ խմբավորումներ՝ միարարներ (ունիթորներ) և հակամիարարներ (հակաունիթորներ), որոնք սկսեցին կատաղի պայքար ծավալել իրար դեմ և էլ ավելի թուլացրին երկրի քաղաքական միասնությունը: Բացի այդ, պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ ավելի սրվեցին Կիլիկիայի հայկական թագավորության և շրջակա իսլամադավան պետությունների

հարաբերությունները: Վերջիններս այդ որոշումը դիտում էին որպես խաչակիրներին Արևելք հրավիրելու նոր փորձ:

4.4 Սսի կաթողիկոսական աթոռը և Կիլիկիայի հայկական թագավորությունը 1308-1337 թթ.:

1308 թ. Կիլիկիայի հայոց գահին բազմեց Օշին արքան (1308-1320), որի իշխանության տարիներին ևս փորձեր կատարվեցին արմատավորել Սսի 1307 թ. ժողովի որոշումները: Ի պատասխան դրա՝ 1308 և 1309 թթ. երկրում տեղի ունեցան հակակառավարական ցույցեր, որոնց մասնակցեցին ժողովրդական լայն զանգվածներ և մեծաթիվ հոգևորականներ: Օշին արքան արյունալի դատաստան տեսավ ապստամբների հետ: Նրանցից շատերը բանտեր նետվեցին կամ աքսորվեցին: Այդ ամենը հիմք է տալիս վստահաբար պնդելու, որ միայն արքունիքն ու կաթողիկոսարանն էին կողմնակից եկեղեցիների միավորման հարցում, սակայն պետական հավաճանքները չկարողացան վերջնականապես ճնշել հակաունիթորներին: Թագավորի քաղաքականությանը կողմ էին հատկապես Կիլիկիայում բնակություն հաստատած լատինական տարրերը, բարձրաստիճան որոշ հոգևորականներ և արքունիքի առանձին հեղինակավոր ծառայողներ: Յենց նրանք էլ հարում էին այսպես կոչված ունիթորական հոսանքին: Ի հակակշիռ դրա՝ Կիլիկիայի հայ հոգևորականության մեծ մասը, խոշոր հողատերերի մի զգալի մասը, ժողովրդական զանգվածները դեմ էին եկեղեցիների միությանը և կազմում էին հակաունիթորական հոսանքը:

Նման պայմաններում Երուսաղեմի Սարգիս պատրիարքը անադարտ պահելու համար հայ առաքելական եկեղեցու վարդապետությունը, Եգիպտոսի սուլթանից հրովարտակ ձեռք բերելով, անջատում է իր աթոռը Կիլիկիայի եկեղեցական իշխանությունից և սկսում անկախորեն վարել իր աթոռի գործերը սկսած 1311 թ.:

Կարևոր է նաև նշել, որ Արևմուտքում տեղյակ էին Կիլիկիայի հայկական թագավորության ներքին իրավիճակից, և գիտեին, որ Սսի 1307 թ. ժողովի որոշումները չեն կատարվում: Հավանաբար դա էր պատճառը, որ Հռոմի պապ Հովհաննես XXIII պահանջում էր Կիլիկիայի թագավորական վերնախավից և կաթողիկոսից նոր եկեղեցական ժողով գումարել և հաստատել Սսի ժողովի որոշումները:

Օշին արքան և Կոստանդին Գ կաթողիկոսը մի քանի համախոհների հետ Ադանա քաղաքում 1317 թ. նոր ժողով են գումարում, որի օրակարգում վերստին դավանաբանական և ծիսական փոփոխություններն էին: Ժողովին մասնակցելու համար իրավիրվեցին մեծ քանակությամբ հոգևորականներ, բայց ինչպես Մ. Օրմանյանն է նշում, շատ քչերն ընդառաջ գնացին այդ իրավերին և մասնակցեցին ժողովին: Նույնիսկ Կիլիկիայի եպիսկոպոսների մի մասը ներկա չգտնվեց: Ադանայի ժողովը վերհաստատեց Սսի 1307 թ. եկեղեցական որոշումը: Ինչպես Սսի 1307 թ., այնպես էլ Ադանայի 1317 թ. եկեղեցական ժողովներին մասնակցած հայ հոգևորական ավատատերերի ցուցակից երևում է, որ այդ

շրջանում խիստ մեծացել էր Կիլիկիայի բարձր հոգևորականության քաղաքական ազդեցությունը: Կիլիկիայի հոգևորական դասի քաղաքական ազդեցությունը առավել չափով ուժեղանում է թագավորության թուլացման և կործանման շրջանում, երբ բարձր հոգևորականության ներկայացուցիչները գործուն մասնակցություն էին ունենում արքունի խորհրդի նիստերին և աշխարհիկ ավատատերերի հետ մեկտեղ որոշում երկրի առջև ծառայած նաև քաղաքական մի շարք հարցեր:

Այս շրջանում, անկախ ավանդապահ հոսանքի դիմադրությունից, կաթոլիկական գաղափարախոսության ներթափանցումը լայն ասպարեզ էր գտել Կիլիկյան Հայաստանում: Սսի և Ադանայի եկեղեցական ժողովներին հիմնականում մասնակցել են Կիլիկյան Հայաստանի թեմերի ներկայացուցիչները, այլ ոչ թե բուն Հայաստանի: Հավանաբար դա էր պատճառը, որ բուն Հայաստանի հոգևորականները գտնում էին, որ այդ ժողովների որոշումները իրավական ուժ չունեն, հետևաբար՝ անընդունելի են: Այդ ժողովների որոշումներից հետո էլ բուն Հայաստանում մեծացավ Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ վերնախավի նկատմամբ դժգոհությունը: Հայաստանի եպիսկոպոսների և վարդապետների մեծ մասը հրաժարվեց ընդունել վերոնշյալ ժողովների որոշումները: Ստեղծվեց բավական վտանգավոր իրավիճակ, որ սասանում էր հայ եկեղեցու միասնությունը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Սսի 1307 և Ադանայի 1317 թ. եկեղեցական ժողովների որոշումները նույնիսկ Կիլիկյան Հայաստանում մեծ մասամբ մնացին թղթի վրա:

Փաստորեն 14-րդ դարի առաջին տասնամյակում հայկաթուխիկ աշխուժացած հարաբերություններն այն հետևանքն ունեցան, որ երկրում ներքին քաղաքական իրադրությունը սրվեց, իսկ միարարության վերաբերյալ որոշումներն առաջացրին Կիլիկյան թագավորության գլխավոր թշնամու՝ Եգիպտոսի սուլթանության գայրույթը:

1320-1322 թթ. Կիլիկիայի հայկական թագավորությունը գտնվում էր շատ ծանր իրավիճակում, քանի որ Եգիպտոսի սուլթանությունը, և նրանց դաշնակիցները՝ թուրքմեն-կարամանները ներխուժեցին հայկական թագավորության սահմանները, մի շարք տարածքներ նվաճեցին և զգալի վնաս հասցրին հայկական թագավորությանը: Նման ծանր պայմաններում Արևմտյան Եվրոպայի երկրներից և ոչ մեկը իրական օգնություն ցույց չտվեց հայկական թագավորությանը:

1323 թ.՝ հունվարի 6-ին, Ծննդյան տոնին, Կոստանդին Լամբրոնացին օծվում է հայոց կաթողիկոս (1323-1326): Նա ժամանակին մասնակցել էր Սսի և Ադանայի եկեղեցական ժողովներին: Հայրապետական բարձր պաշտոնը ստանձնելուց հետո՝ վերջինս փորձել է վերանայել այդ ժողովների որոշումները և չի խրախուսել ունիթորական շար-

ժումը: Դավանաբանական վեճերի ժամանակ գրավել է չեզոք դիրք: Չբաղվել է նաև դիվանագիտական գործունեությամբ. 1323 թ. հայոց կաթողիկոսը, պատվիրակության գլուխ անցած, մեկնեց բանակցությունների և կարողացավ հաշտության պայմանագիր կնքել Եգիպտոսի սուլթանության հետ: Զետագա տարիների Նրա գործունեության մասին այլ մանրամասնություններ պատմիչները չեն հայտնում: Մահացել է 1326 թ. վերջերին և թաղվել Դրազարկի վանքում:

1327 թ. հունվարին Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Զակոբ Բ Անավարզեցին (1327-1341, 1355-1359), ով ժամանակին ուսանել էր Սսի կաթողիկոսարանում, կարգվել կաթողիկոսարանի եպիսկոպոս, ապա Անարզաբա քաղաքի արքեպիսկոպոս: Նրա աթոռակալման ժամանակաշրջանում Կիլիկիայում և բուն Հայաստանում եռանդուն քարոզչություն էին իրականացնում Դոմինիկյան լատին քարոզիչները, որոնց հանդեպ կաթողիկոսն իր աթոռակալման սկզբնական շրջանում հանդուրժողականություն էր ցուցաբերում: Բայց շուտով Զակոբ Բ Անավարզեցին նրանց պարագլուխ Զովհաննես Քննեցի վարդապետին զգուշացրել էր Հայաստանում կաթոլիկությունը տարածելու բացասական հետևանքների մասին, սակայն չէր կարողացել կասեցնել կաթոլիկության քարոզչությունը Կիլիկյան Հայաստանում, Սյունիքի Նախիջևան և Երնջակ գավառներում: Կաթողիկոսը նամակով Բենեդիկտոս XII պապից (1334-1342) պահանջել է կար-

գի հրավիրել իր քարոզիչներին և արգելել նրանց պառակտիչ գործողությունները: Նման պայմաններում այնքան են բարդանում հայոց կաթողիկոսի և արքայի հարաբերությունները, որ Լևոն Գ արքան և նրա կուսակիցները 1341 թ. աթոռակ են անում Չակոբ Անավարզեցուն, որին փոխարինում է Մխիթար Գռնեղցին՝ (1341-1355): Զաղաքական իրավիճակը Կիլիկիայի հայկական թագավորությունում գնալով էլ ավելի էր բարդանում:

1335-1337 թթ, Կիլիկիայի հայկական թագավորության դեմ արշավեցին Եգիպտոսի սուլթանության զորքերը և մեծ վնաս պատճառեցին հայկական թագավորությանը: Ստեղծված պայմաններում 1337 թ. հայոց արքան ստիպված էր մի նոր պայմանագիր կնքել Եգիպտոսի սուլթանության հետ, որով Կիլիկիայի թագավորությունը նյութական մեծ կորուստներ ունեցավ և զրկվեց մի շարք կարևոր տարածքներից:

4.5 Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը և Սսի կաթողիկոսարանը:

1337 թ. հայ-եգիպտական հաշտության պայմանագրի կնքումից հետո Կիլիկիայի հայկական թագավորության անկման գործընթացն արագացավ, որը բնականաբար խիստ բացասական էր նաև հայոց եկեղեցու համար:

Չայտնի է, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը 14-րդ դարի կեսերից հայտնվեց այնպիսի ծանր վիճակում, որ որոշակի վտանգ էր սպառնում նաև հայոց եկեղեցու հա-

մար: Խնդիրն այն էր, որ հայկական թագավորությունը, ժամանակի ընթացքում կորցնելով իր դաշնակիցներին, նոր ռազմական գործընկերների անհաջող փնտրտուք սկսեց արևմուտքում՝ փորձելով արևմտաեվրոպական երկրներից և Ջոռմի պապերից օգնություն ստանալ: Բնական է, որ այդ հարաբերություններում չափազանց մեծանում էր հայոց եկեղեցու դերը: Իրենց հերթին էլ արևմտաեվրոպական տերությունները և պապը ամեն ինչ անում էին, որպեսզի իրենց հսկողության տակ պահեին հայոց եկեղեցին և փորձում էին որոշակի խոստումներով հասնել նրան, որպեսզի նա հրաժարվի իր դավանանքից և ընդունի կաթոլիկություն: Անշուշտ նման փորձեր եղել էին նաև նախկինում, բայց Եական հաջողության կաթոլիկ արևմուտքը չէր հասել:

Բացի դրանից նշյալ շրջանում Սսի հայոց կաթոլիկությունը սկսեց դիմադրություն ցույց տալ, քանի որ գիտակցում էր, որ Արևմուտքի խոստումները մերկապարանց են:

1345 թ. Կիլիկիայում գահ բարձրացավ Կոստանդին Դ թագավորը (1345-1363), որը կառավարեց երկիրը բավական ծանր ժամանակաշրջանում: Այս ընթացքում եռանդուն կերպով շարունակվում էին հայկական պետության և պապականության միջև բանակցությունները: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս անգամ իրական օգնության փոխարեն հռոմեական եկեղեցու ղեկավարությունը պահանջում էր անհապաղ երկու եկեղեցիների միավորում՝ պայման, որին դեմ էր Կիլիկյան Հայաստանի բնակչության

ճնշող մեծամասնությունը: Ամեն դեպքում 1345 թ. նշանավոր է նրանով, որ տեղի ունեցան երկկողմ կարևոր բանակցություններ, ինչպես նաև Սսի եկեղեցական ժողովը:

1345 թ. Կղեմես VI-ի դեսպանները հայոց արքային փոխանցեցին պապի առաջարկը: Հայոց կաթողիկոսի և թագավորական իշխանության մասնակցությամբ Սիս քաղաքում տեղի ունեցավ մի նոր ժողով՝ քննելով եկեղեցիների միավորման հարցը: Ժողովին ներկա էին մի քանի տասնյակ եպիսկոպոսներ, վարդապետեր, իշխաններ՝ Մխիթար կաթողիկոսի գլխավորությամբ: Ժողովի մասնակիցները եկել էին Կիլիկիայի տարբեր շրջաններից և հարևան երկրներից: Շատ կարևոր է նշել, որ բուն Հայաստանի հոգևորականությունը, որը դեմ էր եկեղեցական միությանը, ներկա չէր:

Անշուշտ ժողովականների վրա բավականին ուժեղ ազդեցություն էր գործում թագավորական իշխանությունը, որը կարծում էր, թե կատարելով պապի պահանջը, կարելի էր ռազմական օգնություն ստանալ Եվրոպայից: Ժողովն անցավ լարված մթնոլորտում. բավական բուռն քննարկումներ տեղի ունեցան: Ի վերջո որոշվեց մի քանի զիջումներ կատարել և ավելի շուտ ձևական, քան իրական միավորման ճանաչմամբ ձեռք բերել պապի և արևմտյան երկրների օգնությունը: Որոշ ժամանակ անց պապը համաձայնվեց 12 հազար ոսկի և հազար ձիավոր տրամադրել Կոստանդին Բ Կիլիկիայի թագավորության պաշտպանությունը կազմակեր-

պելու համար, որը սակայն ինչ-ինչ պատճառներով չիրականացավ:

Թեև վերը նշված եկեղեցական ժողովի որոշումը կատարվեց արևմուտքից օգնության ակնկալիքով, սակայն հայկական պետության և եկեղեցու համանման քաղաքականությունը հարուցեց Եգիպտոսի սուլթանության կասկածանքը և զայրույթը, ուժեղացրեց նրա զավթողական մտադրությունները, արագացրեց Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը:

1347 թ. Եգիպտոսի մամլուքյան սուլթանության գորքերը արշավեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ ավերելով երկրի քաղաքներն ու գյուղերը: Այս անգամ, սակայն, Հռոմի պապի գործուն միջամտությամբ Կոստանդինը օգնություն ստացավ: Շուտով հայկական գորքը, դաշնակցած Հռոդոսի հիվանդախնամների և Կիպրոսի թագավորության հետ, համատեղ ուժերով հետ շարտեցին նրանց և վերագրավեցին Այասը: Ավաղ, սա այն եզակի դեպքերից էր, երբ Արևմուտքի օգնությամբ տեղի էր ունենում ռազմական համատեղ գործողություն: Ցավոք, հայերը Այասը երկար պահել չկարողացան և այն կրկին անցավ թշնամու ձեռքը, քանի որ հետագա տարիներին գրեթե օգնություն չստացվեց:

1355 թ. երկրորդ անգամ կաթողիկոս ընտրվեց Հակոբ Բ Անավարզեցին և շարունակեց հավատարմությունը հայ եկեղեցու դավանությանը ու կանոններին: Այդ նույն թվականից

վերսկսվեցին Եգիպտոսի սուլթանության և թուրքմեն-կարամանների ավերիչ արշավանքները, ինչն աղետալի էր հայոց թագավորության համար: Ինչ վերաբերում է պապին և արևմտաեվրոպական երկրների ներկայացուցիչներին, ապա պետք է նշել, որ նրանք իրական օգնություն ցույց չտվեցին հայ ժողովրդին՝ բավարարվելով կեղծ խոստումներով: Բացի այդ, վերը նշյալ շրջանում արևմտաեվրոպական երկրներում քաղաքական լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել, քանի որ 1337 թ. սկսվեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև հարյուրամյա պատերազմը, և երկրորդական պլան մղվեցին խաչակրաց նոր արշավանքի ծրագրերը: Իտալական քաղաք-պետությունները, մոռանալով քրիստոնեական համերաշխության մասին, շարունակում էին բազմակողմանի առևտրական հարաբերություններ հաստատել Եգիպտոսի սուլթանության հետ: 1345 թ. Վենետիկի և մամլուքների միջև կնքվեց պայմանագիր, որով Վենետիկի և Ալեքսանդրիայի միջև մեծ ծավալների առևտուր սկսվեց:

Այսպիսով միջազգային ասպարեզում կատարված տեղաշարժերը անբարենպաստ էին Կիլիկիայի հայկական թագավորության համար: Իր հերթին, պապական աթոռն էլ լրտեսների միջոցով տեղյակ էր, որ Կիլիկյան Հայաստանի կառավարող շրջանակները միջոցառումներ չեն իրականացնում երկրում կաթոլիկության տարածման համար, և եկեղեցիների իրական միացում տեղի չի ունեցել: Այդ նպատակով Կիլիկիա ուղարկվեցին պապի պատվիրակները, որոնք երկ-

րի ղեկավարներից գրավոր պարտավորություն վերցրին, թե Կիլիկիայի հայերը կաթողիկոսություն կդավանեն, և խոստացան դրամական օգնություն ցույց տալ երկիրը պաշտպանելու ունակ զորք պահելու համար, սակայն, ինչպես տեղեկացնում է Ներսես Պալիենցը, խոստացված օգնությունն էլ չտրվեց:

1359 թ. կաթողիկոս է ընտրվում Մեսրոպ Ա Արտազեցին (1359-1372), ով նախապես եղել էր Արտազի թեմի առաջնորդը և Ս. Թադե վանքի վանահայրը: Ընդհանրապես այս կաթողիկոսն իր հայրապետության տարիներին պայքարել է կաթողիկոսության դեմ և պաշտպանել հայ եկեղեցու ավանդությունը, դավանությունն ու ծեսը: Եվ նրա օրոք ունիթորական շարժումը չկարողացավ ընդարձակվել Կիլիկյան Հայաստանում:

Ի վերջո, պետք է նշել, որ Կիլիկյան Հայաստանի ղեկավարությունը, ինչպես նաև կաթողիկոսը՝ Մեսրոպ Արտազեցին, գիտակցելով, որ Արևմուտքի և պապի հետ հարաբերությունները, ինչպես նաև կաթողիկոսության ընդունմանը միտված որոշումները որևէ դրական ազդեցություն չեն ունենում (բացասական հետևանքներ են թողնում)՝ գործնական քայլերի դիմեցին:

1361 թ. մայրաքաղաք Սսում հրավիրվեց եկեղեցական մի նոր ժողով՝ քննության առնելու պապի, արևմուտքի միապետերի վարքագիծը, ինչպես նաև ստեղծված իրավիճակը: Այս ժողովի ընթացքի և մանրամասնությունների մասին

հանգամանալից հաղորդումներ չունենք, քանի որ դրանց մասին միջնադարյան պատմիչները բավարար չափով տեղեկություններ չեն թողել: Հայտնի է միայն, որ թե՛ Կիլիկյան Հայաստանի բարձր հոգևորականությունը, և թե՛ արքունիքը կարողացան ճշգրիտ մոտեցում ցուցաբերել և տալ կատարվածի ճիշտ քաղաքական գնահատականը:

Սաի եկեղեցական ժողովը չեղյալ հայտարարեց եկեղեցական միության վերաբերյալ նախկին ժողովների որոշումները: Ժողովի որոշմամբ հայոց եկեղեցու ծիսակարգից վերացվեցին այն բոլոր նորամուծությունները, որոնց պատճառը Կիլիկյան առանձին թագավորների լատինամետ քաղաքականությունն էր: Շարունակելով իր գործունեությունը՝ հայոց կաթողիկոսը 1364թ. հիմնեց նաև Լեհաստանի հայոց հոգևոր թեմը, բացի այդ՝ փորձ արեց նաև բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան մահմեդական ամիրությունների հետ:

Փաստորեն, 14-րդ դարում Կիլիկիայի հայկական թագավորությունում կաթոլիկություն տարածելու ուղղությամբ պապականության գործադրած բոլոր ջանքերը վերջնականապես ձախողվեցին: Ինչ վերաբերում է հայոց թագավորության վերջին 15 տարիների պատմությանը, ապա պետք է նշել, որ ինչպես պետությունը, այնպես էլ կաթողիկոսությունը գտնվում էին շատ ծանր իրավիճակում:

1365 թ. հայ իշխանների որոշմամբ Կիլիկիայի հայոց թագավոր Է ընտրվում Կոստանդին Գ (1365-1372), սակայն դրուբյունը շարունակում է մնալ օրհասական:

1372 թ. հայոց հայրապետական աթոռին բազմեց Կոստանդին Ե Սսեցին (1372-1374): Նա նախապես եղել էր Սսի մայր աթոռի միաբան, արքունի եպիսկոպոս: Մայրաքաղաք Սիսը գրեթե կտրված էր արտաքին աշխարհից: Նոր կաթողիկոսի գործունեության մասին շատ տեղեկություններ հայտնի չեն, սակայն պարզ է, որ վերջինս համակրում էր Լուսինյաններին, որոնք այդ ժամանակ ավելի էին հզորացել: Նորընծա կաթողիկոսը գործուն մասնակցություն է ունենում կաթոլիկ արևմուտքի հետ համագործակցելու ուղղությամբ ձեռնարկված քայլերին: Երբ սպանվեց Կոստանդին Ե արքան, հայոց կաթողիկոսը գլխավորեց այն քաղաքական ուժերին, որոնք ձգտում էին հայոց գահը հանձնել կաթոլիկ Լուսինյաններին, (Կոստանդին Ե Սսեցին եղել է Լևոն Լուսինյանին Կիլիկիա հրավիրելու և հայոց թագավոր հռչակելու նախաձեռնողը): Կաթողիկոսը մահացավ 1374 թ. գարնանը Սսում: Նոր կաթողիկոս ընտրվեց Պողոս Սսեցին (1374-1382), ով այդ աթոռին բազմեց թագավորության չորս ինամակալների և բարձրաստիճան հոգևորականության հավանությամբ: Եղել է Սսի կաթողիկոսարանի միաբաններից: Նրան է բախտ վիճակվում նաև օժելու հայոց վերջին թագավորին:

Այսպես՝ 1374 թ. սեպտեմբերի 14-ին Սսի Սուրբ Սոֆյա տաճարում տեղի ունեցավ Լևոն Լուսինյանի թագադրման հանդիսավոր արարողությունը: Լևոնը ցանկանում էր օժվել կաթոլիկ ծեսով, սակայն հանդիպելով հայ իշխանների և հոգևորականության դժգոհությանը՝ խուսափեց անախորժություններից և թագադրվեց և՛ կաթոլիկ, և՛ հայկական ծեսով:

Պողոս Սսեցու գահակալությունը զուգադիպել է հայոց պետականության անկմանը: Նա պայքարել է Լևոն Լուսինյանի կաթոլիկ քաղաքականության դեմ: Կաթողիկոսը ջանք չի ինսայել պաշտպանելու հայ եկեղեցու իրավունքներն ու սկզբունքները թագավորի և նրան շրջապատող կաթոլիկների ոտնձգություններից: Բացի այդ՝ հայոց կաթողիկոսը հայ իշխանների հետ մասնակցել է Սսի հերոսական ինքնապաշտպանությանը և իր ներկայությամբ ոգեշնչել մարտնչողներին:

1375 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը և նրանց դաշնակիցները գրավեցին Սիսը և կործանեցին Կիլիկիայի հայկական թագավորությունը, ինչի հետևանքով բավական ծանր իրավիճակի մեջ հայտնվեց Նաև Սսի կաթողիկոսական աթոռը:

4.6 Սսի կաթողիկոսարանը Կիլիկիայի հայկական թագավորության կործանումից հետո:

Հայ Առաքելական Եկեղեցու պատմության մեջ բավական ծանր ժամանակաշրջան էր 14-րդ դարի վերջը և 15-րդ

դարի ամառին կեսը, քանի որ նշյալ ժամանակահատվածում հայկական պետականություն գոյություն չունեի ո՛չ Կիլիկիայում և ո՛չ էլ բուն Հայաստանում: Կիլիկիայի լեռնային որոշ շրջաններում կամավարում էր Կոստանդին իշխանը, ով իրեն հռչակել էր հայոց թագավոր:

Եգիպտոս գերի տարված Պողոս Ա Սսեցի կաթողիկոսը կարողացել էր ազատվել գերությունից և վերադառնալ Սիս: Չնայած կաթողիկոսական աթոռը շարունակում էր մնալ Սսում, սակայն վիճակն այնքան բարդ էր, որ ոչ միշտ էր, որ հայոց կաթողիկոսները մնում էին այնտեղ: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո ամենայն հայոց կաթողիկոսության համար ստեղծվել էին անբարենպաստ պայմաններ: Սսի հայոց կաթողիկոսությունը հայտնվել էր քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային ծանր վիճակում: Կաթողիկոսությունը, գտնվելով մահմեդական տարբեր իշխանությունների տիրապետության տակ՝ ծանր հարկատվության էր ենթարկվում: Շատ հաճախ հայոց կաթողիկոսները հայրապետի պաշտոնից ազատվում կամ հեռացվում էին մահմեդական իշխողների ցանկությամբ: Ստեղծված պայմաններում տարբեր խմբավորումներ մշտապես պայքարում էին հայոց հայրապետի աթոռին տիրանալու համար, որը խիստ վտանգավոր երևույթ էր: Եվ նման իրավիճակը շարունակվեց նաև 15-րդ դարի սկիզբը:

Պողոս Սսեցուն հաջորդել է Թեոդորոս Բ Կիլիկեցին (1382-1392), ով եղել է Սսի կաթողիկոսական աթոռի ամե-

Նաազդեցիկ միաբաններից: Պողոս Բ-ի գերեվարության ժամանակ Նա վարել է կաթողիկոսարանի գործերը: Այս ժամանակ Կիլիկիայում իրենց գործունեությունն էին շարունակում կաթոլիկ միսիոներները, որոնց դեմ էլ պայքար էր մղում հայոց հայրապետը: Նա կարողացավ Մայր աթոռից հեռացնել լատին և լատինամետ հոգևորականներին: Ավաղ, 1392 թ. Թեոդորոս Բ Կիլիկեցին 16 հայ նշանավոր իշխանների հետ սպանվեց Սսի նոր ամիրա Օմարի կարգադրությամբ:

Նույն թվականին էլ կաթողիկոս է դառնում Կարապետ Ա Կեղեցին (1392-1404), որն իր կրթությունը ու դաստիարակությունը անցել է Սսի կաթողիկոսարանում: Նրա ընտրությանը համամիտ է եղել և հովանավորել Սսի ամիրան: Նրա աթոռակալության ժամանակաշրջանը քաղաքական և տընտեսական ծանր պայմանների շրջան էր, քանի որ Կիլիկիան հարձակման էր ենթարկվում թուրքմենների ու Եգիպտոսի սուլթանության կողմից, իսկ մյուս կողմից՝ եռանդուն էին գործում ունիթորները:

1404 թ. կաթողիկոս Կարապետ Ա Կեղեցին իշխանների հետ ժողով է գումարում և հաշվի առնելով ծանր վիճակը, որոշում է բնակչությանը գաղթեցնել երկրից:

Նույն թվականի հունիսին առանձին քարավաններով Կիլիկիայի հայ բնակչության մի զգալի մասը Սսից հեռացել է Կիպրոս և եվրոպական մի շարք երկրներ, իսկ կաթողիկոսին էլ գահընկեց են անում և սպանում թունավորելով: Նույն այս ժամանակաշրջանում հայոց եկեղեցու ղեկավարումը

Սսի մահմեդական նոր տիրակալ Ռամազան ամիրայի աջակցությամբ և առանց ընտրության ստանձնում է Չակոբ Գ Սսեցին (1404-1411), ով գործուն մասնակցություն էր ունեցել Կարապետ Ա Կեղեցու գահընկեցության գործընթացին: Վերջինս ժամանակին եղել էր Սսի կաթողիկոսարանի բարձրաստիճան հոգևորականներից: Ի նշան երախտիքի՝ Չակոբ Գ Սսեցին կաթողիկոսարանի թանկարժեք շատ սպասքներ ընծայել է ամիրային: Իր կաթողիկոսության տարիներին նա թղթակցել է Գրիգոր Տաթևացու հետ, որի խորհրդով բաՆադրանքից ազատել է Աղթամարի կաթողիկոսությունը և կատարել առաջին քայլն այդ աթոռի հավակնությունը ի չիք դարձնելու ուղղությամբ: Կաթողիկոսության տարիներին Չակոբ Գ Սսեցին որոշ քայլեր է ձեռնարկել կիլիկյան եկեղեցիների տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ, փորձել է վերականգնել կաթողիկոսական աթոռի հեղինակությունն ու վարկը: Սակայն նրա գործադրած ջանքերը ապարդյուն են անցել և Սսի հայոց կաթողիկոսարանը շարունակում էր անկում ապրել:

4.7 Սսի հայոց կաթողիկոսական աթոռը 1411-1439 թթ.:

15-րդ դարի երկրորդ տասնամյակում Սսի հայոց կաթողիկոսարանի վիճակն էլ ավելի բարդացավ, քանի որ հայոց հայրապետի աթոռին բազմեց Գրիգոր Ը-ն (1411-1418): Նա այդ պաշտոնին հասավ Չակոբ Գ Սսեցուն թունափորելուց հետո: Մ. Օրմանյանի դիտարկմամբ՝ նա Սսի կաթողիկոսարանի վերջին շրջանի ամենաբացասական ղեկավարն է ե-

ղել, իսկ Թովմա Մեծոփեցին էլ նշում է, որ նրա Գրիգոր ա-
նունը կարծես անարգանք լիներ սուրբ Լուսավորչի հիշա-
տակի նկատմամբ: Վերջինս հայտնի էր նաև «Խանձողատ»
մականունով: Գրիգոր Ը-ն աչքի է ընկել դաժանությամբ, քի-
նախնդիր բնավորությամբ: Նրա աթոռակալության տարիներ-
ին կաթողիկոսարանն էլ ավելի է անկում ապրել. դադարել է
համազգային եկեղեցական շահերն արտահայտող կենտրոն
լինել, առաքելությունն իրականացրել է շահարկությունների,
զեղծումների, անմիաբանության միջոցով: Այդ ժամանակից
սկսած՝ հասունանում է հայոց կաթողիկոսարանը բուն Հա-
յաստան տեղափոխելու գաղափարը: Բուն Հայաստանի հոգ-
ևորականությունը Գրիգոր Տաթևացու աշակերտներ Հով-
հանես Չերմոնացու և Թովմա Մեծոփեցու գլխավորու-
թյամբ խիստ անհանգստանում էին Գրիգոր Ը-ի գործունեու-
թյունից: Միջամտության անհրաժեշտությունից ելնելով՝
արևելյան վարդապետները խորհրդակցություններից հետո
համաձայնության են գալիս և որոշում իրենց ներկայացուց-
չին ուղարկել Սիս՝ տեղում իրավիճակին ծանոթանալու, վի-
ճահարույց խնդիրները կարգավորելու և վերականգնելու
նպատակով: Այդ կարևոր գործը վստահվում է Երուսաղեմի
պատրիարք Պողոս արքեպիսկոպոսին: Հստակ չէ, թե որ
թվականին է նա գնում Կիլիկիա: Պողոս Գառնեցուն հաջող-
վում է ձեռք բերել ամիրաների համակրանքն ու աջակցու-
թյունը, կարողանում է բացահայտել ու երևան հանել կաթո-

ղիկոս Գրիգոր Ը Խանձողատի զեղծումները, հոգևոր ասպարեզից հեռացնել նրան և նրա համախոհներին:

1418 թ. Նոր կաթողիկոս դարձավ Պողոս Բ (1418-1430), ով ժամանակին կրթություն էր ստացել Տաթևի համալսարանում, աշակերտել Գրիգոր Տաթևացուն: Նա մեծ ջանքեր է գործադրել կաթողիկոսության դիրքն ու հեղինակությունը վերականգնելու ուղղությամբ: Այս հայրապետի կառավարման ժամանակաշրջանում Ամենայն Յայոց կաթողիկոսարանը փորձում է դուրս գալ այն ծանր իրավիճակից, որ առաջացել էր դեռևս հայկական թագավորության անկումից հետո:

Այսպես, հայոց կաթողիկոսը Արևելյան Յայաստանից Սիս է հրավիրել մեծ թվով հոգևորականների՝ աթոռն ամրապնդելու համար: Բացի այդ, զբաղվել է շինարարական աշխատանքներով, մասնավորապես՝ նրա նախաձեռնությամբ 1423 թ. կառուցվել է Նոր կաթողիկոսարան, վերանորոգվել է Ս. Աննայի վանքը, ընդօրինակվել են ձեռագրեր և այլն: Ընդհանրապես, մինչ Պողոս Գառնեցու կառավարումը, արևելյան վարդապետներն արդեն մտածում էին կաթողիկոսության աթոռը բուն Յայաստան տեղափոխելու մասին, սակայն Պողոս Գառնեցու վարած գործունեությունը և կաթողիկոսարանին Նոր շունչ տալը՝ ստիպեցին արևելյան վարդապետներին հետաձգելու ամենայն հայոց կաթողիկոսարանի տեղափոխման հարցը: Թեև Սսի միաբան եպիսկոպոսներն ընդունեցին Պողոս Բ Գառնեցու կաթողիկոսությունը, միևնույն է չհաշտվեցին իրենց զեղծումների դեմ կաթողիկոսի սկսած պայքարին, ինչպես նաև բուն Յայաստանից եկած ա-

բեղաների և վարդապետների ներկայության հետ, որն էլ պատճառ դարձավ հայոց հայրապետի եղերական մահվան:

